



ՀԱՅԱՍՏԱՆ 2011

ԱՌԱՆՑ ՊԱՏՐԱՆՔՆԵՐԻ

Հայաստան 2011. առանց պատրանքների

Հեղինակային իրավունքները՝ Սիվիլիթաս հիմնադրամի
 © Սիվիլիթաս հիմնադրամ 2011 թ.
 Բոլոր իրավունքները պաշտպանված են
 Տպագրված է Հայաստանում

Սիվիլիթաս հիմնադրամ
 Հյուսիսային պողոտա 1, գրասենյակ 30
 Երևան, Հայաստան
info@civilitasfoundation.org

ՀՏԴ 323(479.25):338(479.25)
 ԳՄԴ 66.3(2Հ)+65.9(2Հ)30-1
 Հ 247

Հ 247 Հայաստան 2011. առանց պատրանքների. -Եր.
 Սիվիլիթաս հիմնադրամ, 20101. – 68 էջ

ՀՏԴ 323(479.25):338(479.25)
 ԳՄԴ 66.3(2Հ)+65.9(2Հ)30-1

ISBN 978-99941-2-619-4

Զեկույցը հրատարակվել է Նորվեգիայի արտաքին գործերի նախարարության և Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության երևանյան գրասենյակի օժանդակությամբ: Զեկույցում արտահայտված տեսակետները պատկանում են Սիվիլիթաս հիմնադրամին և միշտ չէ, որ արտացոլում են ԵԱՀԿ և Նորվեգիայի արտաքին գործերի նախարարության տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆ. ԱՌԱՆՑ ՊԱՏՐԱՆՔՆԵՐԻ.....	5
ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈՍԱՆՔՆԵՐ.....	7
ԳԱՐՆԱՆ ԱԿՆԿԱԼԻՔՈՎ	33
ԿԱՂԱՑՈՂ ԱՃ	49
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԸ ԹՎԵՐՈՎ	66

ՀԱՅԱՍՏԱՆ. ԱՌԱՆՑ ԴԱՏՐԱՆՔՆԵՐԻ

Եթե Սիվիլիթասի տարեկան ամփոփումներից յուրաքանչյուրը նախորդ տարվա քաղաքականության, իրադարձությունների և միտումների յուրօրինակ պատկերն էր, այս տարվանը նման է ուղեցույցի, որը նշում է կորցված հնարավորությունները, բայց նաև այն հնարավորությունները, որ դեռ առջևում են:

Եթե փորձենք 2011-ը կարճ ներկայացնել աշխարհի մասշտաբով, պիտի ասենք, որ այն խառնաշփոթի, հուսախաբության և մտահոգությունների տարի էր: Տարի, երբ անէացան վերջին պատրանքները, որ դեռ մնացել էին Խորհրդային Միության փլուզումից 20 տարի անց:

2011 թ. Արևմուտքի մեծ տերությունների հիմնարար տնտեսական և քաղաքական սկզբունքները վերանայելու և վերախմաստավորելու անհրաժեշտությունն առաջացավ:

Խոր տնտեսական ճգնաժամի հետևանքով ամերիկյան հասարակական և քաղաքական որոշ շրջանակներ սկսեցին էկզիստենցիալ մտավախություններ ունենալ այն դոգմաների շուրջ, որոնց վրա են հիմնված Ամերիկայի տնտեսական և քաղաքական հաստատությունները: Եվրոպան էլ սկսեց մտատանջություն ունենալ իր իսկ ստեղծած միության էության և բնույթի առնչությամբ և դեռ ամիսներ ու տարիներ կմնա ցավերի մեջ այդ միությունը կանգուն պահելու համար անհրաժեշտ նոր դրամական ու քաղաքական հավատամքը յուրացնելու համար:

Քննարկումները դուրս եկան Արևմուտքի սահմաններից և նույնիսկ քննարկումների սահմաններից: Արաբական աշխարհում զայրույթը խառնվեց ցավին և ծնեց զարթոնք ու հույս ժողովրդավարական ապագայի նկատմամբ: Ասիայում հնչեցին քաղաքական և տնտեսական երկբայություններ: Անգամ Ռուսաստանում 2011 թ. վերջին ի հայտ եկան հանրային գիտակցության ծիլեր 21-րդ դարի Ռուսաստանի ոչ միանձնյա տեսլականի վերաբերյալ:

Իսկ քսանամյա Հայաստանի Հանրապետությունում պատմական տարեդարձը եկավ ու անցավ, բայց ոչ ոք չփորձեց նոր քաղաքական պատասխաններ փնտրել հասարակության տնտեսական ցավերին, ոչ ոք չխոսեց հանրային ծախսերը կամ պարտքը նվազեցնելու մասին, չէղավ մղում լրացուցիչ բարեփոխումներ իրականացնելու կամ հարկադրանք գոնե հարևանների հետ մրցելու համար: Փոխարենը լռություն էր: Ոչ միայն բարեփոխումների տրամադրություն չկար, ընդհանուր խթան անգամ չկար քաղաքական փոփոխության համար: Իսկ ով բողոքում էր եղած վիճակից

ՀԱՅԱՍՏԱՆ. ԱՌԱՆՑ ՊԱՏՐԱՆՔՆԵՐԻ

ու փոփոխության կոչ էր անում, կարծում էր, որ փոփոխություն իրականացնելու բավարար միջոցներ չունի:

Աշնանն անցկացված Սիվիլիթասի հարցման մասնակիցների երկու երրորդը պատասխանեց, որ նորից կքվեարկեր Խորհրդային Միությունից դուրս գալու օգտին: Նրանց համար և անգամ այն մեկ երրորդի համար, ում հիասթափությունը սահմանակից է զղջման, շատ բաներ արդեն անդառնալի են՝ անձնական ազատությունները, ազատ տեղաշարժվելու իրավունքը, կանանց և տղամարդկանց միջև հավասարության ընկալումը, խոսքի և հավատքի իրավունքը, նվազագույն կյանքի մակարդակի, առողջապահության և կրթության իրավունքը: Անկախության սերունդն այս իդեալներն ընդունում է ինքնըստինքյան: Նրանք չգիտեն ինչպես մշակել ռազմավարություն, ինչպես կազմակերպվել, ինչպես քաղաքականություն կամ փոփոխություն իրականացնել, բայց գիտեն, որ իրավունքներ ունեն և վախ չունեն այդ իրավունքներն իրականացնելուց:

Չնարավոր է, որ նրանք նաև պատրանքներ չունեն, քանի որ դժվար տարիներ են տեսել: Սիվիլիթասի հարցմանը, ամենալավատեսները 20-40 տարեկաններն էին և նրանք, ում վաթսունն արդեն բոլորել է: Գուցե վերջին մի քանի տարիների խոստումները, դառն իրականությունը և անորոշությունները կփարատվեն նոր տարում, որը կլինի առանց պատրանքների, բայց հույսերով լի:

ՓՈՓՈԽՎՈՂ ԶՈՍԱՆՔՆԵՐ

2011 թ. գրեթե ողջ ընթացքում միջազգային հանրության ուշադրության կենտրոնում Թունիսի և Եգիպտոսի հեղափոխություններն էին, ինչպես նաև ձգձգված ձգնաժամը Լիբիայում ու Սիրիայում, որի պատճառով Հարավային Կովկասը դուրս մնաց ուշադրությունից: Դրան նպաստեց նաև շարունակվող համաշխարհային տնտեսական ձգնաժամը:

Եվրոպայի համար ձգնաժամը նաև քաղաքական էր, որի արդյունքում արևելյան հարևանության հատվածում նրա ներգրավվածությունը առաջընթաց չունեցավ: Տարածաշրջանում միջազգային քաղաքականության գլխավոր նախաձեռնությունները՝ ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցության հեռանկարը և Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացը, փաստորեն սառեցվեցին:

2011 թ. **Ռուսաստանը** շարունակեց առանձնահատուկ դերակատարություն ունենալ Հարավային Կովկասում, իսկ Կրեմլի պաշտոնյաները մի քանի առանցքային հայտարարություններ արեցին՝ ընդգծելով այդ իրողությունը:

Հոկտեմբերին վարչապետ Վլադիմիր Պուտինը հետխորհրդային տարածքում ազատ առևտրի գոտի և Եվրասիական միություն ձևավորելու առաջարկներ արեց, որոնք արժանացան Հայաստանի պաշտոնյաների հրապարակային հավանությանը:

Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովը սեպտեմբերին ՄԱԿ-ի ամբիոնից հայտարարեց, որ Ռուսաստանը պատրաստ է Հարավային Կովկասում ստանձնել ուժի չկիրառման երաշխավորի դերը:

Օգոստոսին վրացի լրագրողների հետ զրույցում, որը համընկավ 2008 թ. Հարավային Օսիայում տեղի ունեցած իրադարձությունների երրորդ տարվա հետ, նախագահ Դմիտրի Մեդվեդևը, հիշելով ռազմական գործողությունները, նշեց, որ իր հետ զրույցում Հայաստանի և Ադրբեյջանի նախագահները դրանք կոչել են «որոշակի դաս», որից պետք է հնարավորինս խուսափել:

2011 թ. նոյեմբերին Հարավային Օսիայում կայացած նախագահական ընտրություններում Մոսկվայի աջակցությունը վայելող թեկնածուն պարտվեց, սակայն գերագույն դատարանը արդյունքներն անվավեր համարեց և նոր ընտրություններ նշանակեց 2012 թ. մարտին:

2012 թ. մարտին Ռուսաստանում ևս տեղի են ունենալու նախագահական ընտրություններ: Սպասվում է, որ կհաղթի վարչապետ Վլադիմիր Պուտինը: 2011 թ. դեկտեմբերին Ռուսաստանում կայացած խորհրդարանական ընտրություններում Պուտինի կուսակցությունը ստացավ նկատելիորեն քիչ քվեներ, քան ակնկալվում էր: Սակայն ընդդիմությունը և փողոց դուրս եկած ակտիվիստները կասկածի տակ դրեցին անգամ ընտրությունների այդ արդյունքները՝ պնդելով, որ տեղի են ունեցել լուրջ խախտումներ և կեղծիքներ:

Թուրքիայի վարչապետը նոյեմբերին աննախադեպ հայտարարություն արեց երկրի պատմության տարու հարցերից մեկի առնչությամբ: Ռեջեփ Թայիփ Էրդողանը հրապարակավ ներողություն խնդրեց այն ջարդերի համար, որոնք տեղի էին ունեցել

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈՍԱՆՔՆԵՐ

երկրի կենտրոնական Դերսիմի շրջանում 1937-38 թթ.: Հանրապետության հիմնադիր և այդ օրերի նախագահ Աթաթուրքի հրամանով զինվորականները արյան մեջ խեղդել էին քրդական խռովությունը՝ սպանելով ավելի քան տասը հազար մարդու: Ճակատագրի հեգնանքով Էրդողանի այս ներողությունը գրեթե համընկավ խորհրդարանական ընտրություններից հետո կատարված քուրդ և քրդամետ ակտիվիստների տասնյակ ձերբակալությունների հետ: Այդպիսով, Էրդողանի կուսակցության որդեգրած կոշտ և ազգայնական հռետորաբանությունը, ինչպես նշեցին քննադատները, ավելի օտարեց քրդերին:

**Հունիսին Բաքուն
Վրաստանին տրամադրեց
575 միլիոն դոլարի
վարկ՝ ֆինանսավորելու
Կարս-Թբիլիսի-
Բաքու երկաթուղու
վրացական հատվածի
շինարարությունը:**

«Արդարություն և զարգացում» կուսակցության համար հաջողված համակարգային քայլ էր երկրի նոր սահմանադրություն գրելու առաջարկը, որով բացառվում է բանակի միջամտությունը ներքաղաքական գործընթացներին, հետևաբար նաև՝ հեղաշրջումներ իրականացնելու հնարավորությունը: Բանակը, որը համարվել է Թուրքիայի հանրապետության աշխարհիկ ինքնության երաշխավորը, մնաց դատական գրոհների տակ: Շարունակվեցին բարձրաստիճան զինվորականների ձերբակալությունները՝ հիմնականում բռնություններ կիրառելու

կամ դավադրությունների մասնակցելու մեղադրանքով: Էրգենեկոն անունով այդ գործերը ազդեցություն ունեցան նաև 2007 թ. հունվարին սպանված Հրանտ Դինքի գործով՝ դատավարության ընթացքի վրա: Այսպիսով՝ Թուրքիայի ներքին քաղաքականության բացահայտվող կապերը անմիջականորեն սկսում են ազդել անհատ հայերի և հայ համայնքի կառույցների դերի վրա:

2011 թ. ընթացքում **Ադրբեջանն** իր ջանքերն ուղղեց ածխաջրածնային պաշարների հարստությամբ տարածաշրջանային տերություն ձանաչվելու փորձերին: Հոկտեմբերին ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամ ընտրվելը այդ ռազմավարության դրսևորումն էր:

Այդ ռազմավարությունը Բաքվի համար նաև խթան էր, որպեսզի նա ավելի հաստատակամ դիրքորոշում որդեգրի Մոսկվայի, Թեհրանի և Անկարայի հետ հարաբերություններում: Ադրբեջանը մտադիր է ավելացնել ներդրումները Թուրքիայում ու Վրաստանում և ներդրումներ սկսել Ռուսաստանի հարավում՝ Հյուսիսային Կովկասի հանրապետություններում:

Ադրբեջանի այս առաջընթացը Վրաստանին մղեց, հնարավորություններից օգտվելով, խորացնել «ռազմավարական համագործակցությունը» Ադրբեջանի հետ՝ ուշադրություն չդարձնելով այն գործոններին, որոնք գրգռում էին երկկողմ հարաբերությունները, ինչպես օրինակ՝ միջնադարյան Դավիթ Գարեջիի վանական համալիրն է, որ գտնվում է երկու երկրների սահմանագլխին, և եկեղեցիներից մեկը Ադրբեջանի տարածքում է:

Տնտեսական համագործակցության ծավալների մասին է վկայում այն, որ Ադրբեջանի պետական նավթային ընկերու-

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈՍԱՆՔՆԵՐ

թյունը Վրաստանի ամենախոշոր հարկատուն էր 2010 թ. և հավանաբար նաև 2011 թ.: Հունիսին Բաքուն Վրաստանին տրամադրեց 575 միլիոն դոլարի վարկ՝ ֆինանսավորելու Կարս-Թբիլիսի-Բաքու երկաթուղու վրացական հատվածի շինարարությունը:

Այս երկաթգիծը, որի կառուցումը հետ է ընկել ժամանակացույցից, ընկալվում է այլընտրանք գոյություն ունեցող Կարս-Գյումրի-Թբիլիսի երկաթուղուն:

Հունվարին Ադրբեջանը ռուսական Գազպրոմ ընկերության հետ ստորագրեց նոր պայմանագիր, որով ավելի քան կրկնակի ավելացրեց գազի վաճառքը նախորդ տարվա համեմատությամբ՝ հասցնելով 2 միլիարդ խորանարդ մետրի, որը համեստ թիվ է, եթե հաշվի առնենք, որ 2017 թ. այդ ծավալը նախատեսվում է հասցնել 10 միլիարդի: Ռուսաստանը պատրաստակամություն հայտնեց գնել Ադրբեջանում արտահանվող ամբողջ գազը՝ փորձելով կանխել Ռուսաստանը շրջանցող Նաբուկո հավակնոս ծրագրի իրականացումը:

Օգոստոսին Բաքու այցելեց Ռուսաստանի պաշտպանության նախարար Անատոլի Սերոյուկովը՝ բանակցություններ սկսելու Ադրբեջանի կենտրոնական հատվածում տեղակայված Գաբալայի ռադիոտեղորոշիչ կայանի վարձակալության ժամկետը երկարաձգելու և արդիականացնելու շուրջ: 2012 թ. դեկտեմբերին ավարտվում է վարձակալության տասնամյա ժամկետը:

Ռուսաստանի հետ պրագմատիկ համագործակցությունը մնում է Ադրբեջանի քաղաքականության առանձնահատկությունը: Բայց իր անմիջական հյուսիսային հարևան Դաղստանի ղեկավարության հետ հարաբերություններում Բաքուն ավելի կոշտ է:

Ադրբեջանը բարյացակամ չգտնվեց շուրջ 450 ընտանիքներին Դաղստանում նոր տներով ապահովելու հարցում: Մինչև 2010 թ. սեպտեմբերին ստորագրված ռուս-ադրբեջանական համաձայնությունը երկու երկրների միջև սահմանագծման աշխատանքների մասին, այդ ընտանիքները բնակվում էին Ադրբեջանի հյուսիսում գտնվող Դաղստանի մաս համարվող անկլավային երկու գյուղերում: Ի վերջո հարցը լուծվեց, երբ Ռուսաստանի կառավարությունը համաձայնեց ֆինանսավորել այդ ընտանիքներին, որոնք առանց Ադրբեջանից փոխհատուցում ստանալու հեռացան իրենց տներից:

Հունվարին Ադրբեջանը ռուսական Գազպրոմ ընկերության հետ ստորագրեց նոր պայմանագիր, որով ավելի քան կրկնակի ավելացրեց գազի վաճառքը նախորդ տարվա համեմատությամբ:

Հոկտեմբերին Հյուսիսային Կովկասի հանրապետությունների ղեկավարները Ռուսաստանի նախագահի՝ Հյուսիսային Կովկասում դաշնային ներկայացուցչի ուղեկցությամբ այցելեցին Բաքու: Հիմնական նպատակը ադրբեջանցի ներդրողներին ներգրավելն էր Հյուսիսային Կովկասի ազրո-արդյունաբերական և էներգետիկ հատվածներում, ինչպես նաև Դաղստանի կասպիական ափերի առողջավայրերի զարգացման նախագծերում:

Հունվարին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը Եվրոպական հանձնաժողովի

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈՍԱՆՔՆԵՐ

նախագահ Ժոզե Մանուել Բարոզոյի հետ Բաքվում հռչակագիր ստորագրեց՝ հաստատելով իր հանձնառությունը Եվրոպական Միությանը Թուրքիայի տարածքով «էական ծավալներով» բնական գազ առաքելու հարցում: Տարանցման իրավական և առևտրային պայմանները, առաջին հերթին այն, թե Թուրքիան Շահ Դենիզ հանքավայրից ինչ քանակությամբ գազ է ստանալու և ինչ գնով, մնում էին վիճելի, և միայն հոկտեմբերի վերջին էր, որ մի քանի տարի շարունակ քննարկվող համաձայնագիրը բերվեց վերջնական տեսքի: Ակնհայտ էր, որ Ադրբեջան-Թուրքիա երկկողմ հարաբերություններում կան խնդիրներ՝ չնայած հայտարարված եղբայրությանը:

Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովը սեպտեմբերին ՄԱԿ-ի ամբիոնից հայտարարեց, որ Ռուսաստանը պատրաստ է Հարավային Կովկասում ստանձնել ուժի չկիրառման երաշխավորի դերը:

Ադրբեջանը դեռ չի պատասխանել Անկարայի քայլին ու Թուրքիայի քաղաքացիների համար չի վերացրել Ադրբեջան այցելելու արտոնագրային ռեժիմը: Ակնհայտորեն դա պայմանավորված է նրանով, որ Բաքուն հակված չէ կարգը հեշտացնել միայն Թուրքիայի համար՝ առանց նույնն անելու Իրանի դեպքում, որի հետ հարաբերությունները մնում են լարված:

Ադրբեջանն ու Իրանը բողոքի նոտաներ փոխանակեցին այն բանից հետո, երբ հուլիսին երկու երկրների սահմանին փոխհրաձգության արդյունքում սպանվեց մի ադրբեջանցի, իսկ օգոստոսին Իրանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետը հրապարակավ Ալիևի քաղաքականությունը որակեց «հակահսլամական» և իսրայելամետ:

Տարվա ընթացքում ավելի խորացավ նաև թշնամությունը Ռուսաստանի ու **Վրաստանի** միջև, մանավանդ երբ Վրաստանը մեղադրեց Ռուսաստանին իր տարածքում լրտեսություն և այլ վնասարար գործողություններ իրականացնելու մեջ: Հուլիսի սկզբին վրացական իշխանությունները ձերբակալեցին չորս ֆոտոլրագրողների, որոնցից երեքի նկատմամբ առաջադրվեց Ռուսաստանի օգտին լրտեսության մեղադրանք: Նրանք մեղավոր ճանաչվեցին, սակայն խնդրանքներից ու սակարկություններից հետո պայմանական ազատազրկում ստացան և ազատ արձակվեցին: Հուլիսին խիստ պատժամիջոցներ ստացան 2010 թ. հոկտեմբերին Բաթումիում ձերբակալված, Ռուսաստանի օգտին լրտեսության մեջ մեղադրվող 15 անձանցից 9-ը, որոնցից երկուսը հայ էին:

Վրաց-ռուսական վեց փուլերով կայացած բանակցությունների ընթացքում Վրաստանը շարունակեց խոչընդոտել Առևտրի համաշխարհային կազմակերպության Ռուսաստանի անդամակցության գործընթացը: Ի վերջո, հոկտեմբերի վերջերին, Միացյալ Նահանգների և Եվրոպական Միության ձնշումների ներքո, Թբիլիսին հավանություն տվեց Շվեյցարիայի միջնորդությամբ ներկայացված փոխզիջումային լուծմանը, որն ընդունեց նաև Ռուսաստանը: Ըստ այդ տարբերակի՝ կտեղակայվեն միջազգային դիտորդներ՝ դիտարկելու ապրանքների

ՓՈՓՈՒՎՈՂ ՀՈՍԱՆՔՆԵՐ

հոսքը Ռուսաստանի և Վրաստանի միջև Աբխազիայի և Հարավային Օսիայի տարածքով:

Վրաստանը շարունակեց իր ջանքերը՝ գրավելու Յուսիսային Կովկասի ժողովուրդների համակրանքը: Մայիսին Վրաստանի խորհրդարանը քվեարկությամբ ցեղասպանություն որակեց 1860-ականներին ցարական Ռուսաստանի կողմից չերքեզների արտաքսումն ու սպանությունները: Վրաստանը առաջին և միակ պետությունն է, որ չերքեզների տեղահանումը որակել է ցեղասպանություն, սակայն մինչև այժմ չի ձանաչել Հայոց ցեղասպանությունը:

Հուլիսին վրացական իշխանությունները Թբիլիսիում կազմակերպեցին խորհրդաժողով, հրավերներ ուղարկելով Յուսիսային Կովկասի հանրապետությունների գիտաշխատողների ու լրագրողների, որը նվիրված էր Վրաստանի կողմից իրականացվող տնտեսական բարեփոխումները, ժողովրդավարացումը և կոռուպցիան հաղթահարելու հարցում առաջընթացը ցուցադրելուն:

Թուրքիայի հետ իր հարաբերություններում Վրաստանը առաջնորդվում է քաղաքական և տնտեսական պրագմատիզմով՝ հաղթահարելով իր ազգային ժառանգության հանդեպ անհարգալից վերաբերմունքի ընկալումը:

Մայիսի վերջերին Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին և Թուրքիայի վարչապետ Էրդողանը միասին բացեցին երկու երկրները կապող, վերանորոգված Սարփիի անցակետը: Նրանք նաև ստորագրեցին համաձայնագիր, որը մեկ քայլ առաջ էր գնում 2007 թ. երկու երկրների միջև արտոնագրային ռեժիմը վերացնող փաստաթղթից, հնարավորություն տալով քաղաքացիներին սահմանը հատել առանց

անձնագրի՝ ինքնությունը հաստատող ներքին վկայականով: Թուրք գործարարները շարունակում են ներդրումային հնարավորություններ փնտրել Աջարիայում և Վրաստանի հարավային այլ շրջաններում:

Ռեջեփ Թայիփ Էրդողանը հրապարակավ ներողություն խնդրեց այն ջարդերի համար, որոնք տեղի էին ունեցել երկրի կենտրոնական Դերսիմի շրջանում 1937-38 թթ.:

Թուրքիան, իրեն համարելով ավագ գործընկեր երկկողմ հարաբերություններում, Վրաստանի իշխանությունների դժգոհությունն առաջացնելու ռիսկով, ապրիլին հավանություն տվեց Աբխազիայի առաջնորդի մասնավոր այցին Թուրքիա, որի ընթացքում Սերգեյ Բաղապշը հանդիպեց Թուրքիայի արևազական սփյուռքի հետ, որն ավելի մեծաքանակ է, քան Աբխազիայի բնակչությունը: Վրաստանի արտգործնախարարությունը պաշտոնական բողոք չհայտնեց:

Երկկողմ հարաբերությունների օրակարգում է Թուրքիայի տարածքում գտնվող միջնադարյան մի քանի եկեղեցիների խնդիրը, որ Վրաստանը ցանկանում է վերականգնել և վերանորոգել: Փորձելով առավելագույնս օգտվել այն սահմանափակ լծակից, որ ունի Թուրքիայի նկատմամբ՝ Վրաստանը հետաձգեց թուրքական «Աֆրո Սթար» առևտրային նավի ազատ արձակումը, որը 2009-ի ամռանը կալանվել էր վրացական ջրերում, Աբխազիայից Թուրքիայի ձանապարհին:

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈՍԱՆՔՆԵՐ

2011-ին իրանական մի ավիաընկերություն սկսեց շաբաթական երկու չվերթ իրականացնել Թեհրանի և Թբիլիսիի միջև: Դեռ 2010-ին Վրաստանը Իրանի հետ հարաբերություններում առաջընթաց էր գրանցել, վերացնելով երկու երկրների միջև արտոնագրային ռեժիմը, իսկ Բաթումիում բացվել էր իրանական հյուպատոսություն:

Հյուսիսային Կովկասում Ռուսաստանը մի կողմից շարունակում էր իսլամական անօրինական խմբավորումների դեմ ուժ գործադրել, մյուս կողմից՝ մեծ գումարներ էր ներդնում տեղական տնտեսության այնպիսի նախագծերում, որոնք հազարավոր նոր աշխատատեղեր ստեղծելու ներուժ ունեն, ընդհուպ մինչև լեռնադահուկային մարզածևի զարգացումը, որով հետաքրքրված են նաև ֆրանսիական և հարավկորեական ընկերությունները:

Փետրվարին նախագահ Մեդվեդևը Ռամզան Կադիրովին առաջարկեց երկրորդ ժամանակահատվածով զբաղեցնել Չեչնիայի ղեկավարի պաշտոնը, այդպիսով ամրապնդելով Կադիրովի՝ տարածաշրջանում ամենաազդեցիկ քաղաքական դեմքի կարգավիճակը: Սակայն մյուս կողմից, Ռուսաստանի կառավարության ներսում ֆինանսական հատկացումների շուրջ տարածայնությունները հետաձգեցին նախատեսված հսկայածավալ զարգացման ծրագրի ընդունումը:

Չնայած տասնյակ բարձրաստիճանի հրամանատարների կորստին՝ Հյուսիսային Կովկասում ծայրահեղականությունը շարունակում է մնալ մի ուժ, որի հետ անհնար է հաշվի չնստել: Ինքնակոչ Կովկասյան Էմիրության առաջնորդ Դուկու Ումարովը հունվարին Ինգուշեթիայից Մոսկվա գործուղեց մահապարտի: Ահաբեկչության արդյունքում Դոմոդեդովո օդանավակայանում 37 մարդ զոհվեց: Չեչեն երկու բարձրաստիճանի

հրամանատարներ, որոնք գժտվել էին Ումարովի հետ, կրկին միացան նրան և օգոստոսին հարձակում իրականացրեցին Գրոզնիում, ինչի արդյունքում շուրջ չորս տասնյակ մարդ սպանվեց:

ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՆ

2011-ը ի ցույց դրեց Հայաստան-Իրան հարաբերությունների պարադոքսը: Չնայած տարվա ընթացքում այդ հարաբերությունները զուրկ էին որևէ նշանակալի իրադարձություններից, դրանք գնահատվեցին որպես օրինակելի երկկողմ հարաբերություններ: Սա պայմանավորված է յուրաքանչյուր կողմի՝ հակառակ կողմի նվազագույն պահանջները և ցանկությունը գիտակցելու իրողությամբ:

Անցնող 20 տարիներին տարածաշրջանում և նրա շուրջը տեղի ունեցած բոլոր իրադարձությունները՝ պատերազմները, երկրներում վարչակարգերի փոփոխությունները, քաղաքական ու տնտեսական ճգնաժամերը, ի զորու չեղան սասանել հայ-իրանական քաղաքական հարաբերությունների հիմքերը:

Հայաստանի անկախությունից ի վեր երկու հանգրվանային իրադարձություններ մեկ անգամ ևս ցույց տվեցին, թե կենսական ինչպիսի կարևորություն ունի Իրանը Հայաստանի համար: Նախ 1991-1994 թթ. ղարաբաղյան պատերազմը, ապա 2008 թ. ռուս-վրացական հնգօրյա պատերազմը հաստատեցին այն պնդումները, որ Հայաստանը աշխարհի հետ կապվելու համար հույս կարող է դնել առաջին հերթին Իրանի վրա:

Անկասկած, Հայաստանը Իրանի կարիքը շատ ավելի ունի, քան հակառակը, սակայն Իրանի անմիջական հարևաններից Հայաստանը թերևս միակն է, որ չի ներքաշվել իսլամական

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈՍԱՆՔՆԵՐ

հանրապետության դեմ միջազգային խաղի մեջ: Երևանի այս քաղաքականությունը հավուր պատշաճի է գնահատվում Թեհրանում:

Չպետք է թերագնահատել Իրանի դրական չեզոքությունը ղարաբաղյան խնդրում, ինչպես նաև Հայաստանի ու Ադրբեջանի հետ հավասարահեռ հարաբերություններ պահպանելու մոտեցումը: Այդ չեզոքությունն ու հավասարակշռությունը բնորոշ են Իրանի քաղաքականությանը և բխում են առաջին հերթին հենց Թեհրանի պետական շահերից:

Սրա հետ մեկտեղ՝ Իրանը շարունակում է միջազգային տարբեր հարթակներում, ելնելով իսլամական համերաշխությունից, աջակցել Ադրբեջանին, Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը վերաբերող բանաձևերի դեպքում: Մյուս կողմից, Լեռնային Ղարաբաղի հետ ունենալով ընդհանուր փաստացի սահման, Իրանը նրա հետ իրականացնում է համատեղ ծրագրեր գյուղատնտեսության ոլորտում:

Վերջին 20 տարիներին իրականացվել են հայ-իրանական տնտեսական մի շարք նախագծեր: Մի քանի նոր ծրագրեր, համենայն դեպս, որոնք կարող էին ավելի ամրապնդել երկկողմ տնտեսական, հետևաբար նաև՝ քաղաքական հարաբերությունները, առաջ չեն շարժվել:

Իրան-Հայաստան գազատարի և 220 կիլովատտ հզորությամբ երկու բարձրավոլտ էլեկտրագծերի կառուցումը վերջին երկու կարևոր նախագծերն էին: Մինչդեռ տարածաշրջանային նշանակության մյուս նախագծերը՝ Արաքս գետի վրա երկու հիդրոէլեկտրակայանների, Հայաստան-Իրան երկաթուղու, հայ-իրանական սահմանի մոտ նախատեսված նավթագտարանի և Իրանից Հայաստան վերամշակված նավթամթերք

տեղափոխող խողովակաշարի ու նավթային պահեստարանի կառուցումը, դեռևս մնում են ցանկություններ, թեև այդ նախագծերի մի մասը պետք է սկսվեր արդեն այս տարի:

Անկասկած, Հայաստանը Իրանի կարիքը շատ ավելի ունի, քան հակառակը, սակայն Իրանի անմիջական հարևաններից Հայաստանը թերևս միակն է, որ չի ներքաշվել իսլամական հանրապետության դեմ միջազգային խաղի մեջ:

Արևմուտքը չի խրախուսում հայ-իրանական տարածաշրջանային նշանակություն ունեցող տնտեսական ծրագրերը, որոնք կարող են հակասել Իրանը մեկուսացնելու նրանց քաղաքականությանը: Սակայն հաշվի առնելով Հայաստանի աշխարհագրական դիրքն ու Թուրքիայի և Ադրբեջանի կողմից շարունակվող շրջափակ ումը՝ Երևանի եվրոպական և ամերիկյան գործընկերները լուրջ ծնշումներ չեն գործադրել Հայաստանի վրա՝ գիտակցելով նրա խիստ սահմանափակ ընտրության հնարավորությունները: Մյուս կողմից, Իրանի նկատմամբ միջազգային արգելքները որոշիչ ազդեցություն չեն թողել հայ-իրանական բիզնեսի, առևտրի և երկկողմ նախագծերի իրականացման վրա:

Հայ-իրանական ապրանքաշրջանառությունը տարեկան կտրվածքով չի գերազանցում 300 միլիոն դոլարը, որի մեծագույն մասն ընկնում է Իրանից Հայաստան ներմուծումներին:

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈՍԱՆՔՆԵՐ

Վերջին տարիներին Հայաստանից Իրան արտահանումները ևս աճել են՝ հասնելով շուրջ 50 միլիոն դոլարի: Հայաստանը Իրան է արտահանում հանքահումք, էլեկտրաէներգիա, փայտ, սննդամթերք:

**Հայ-իրանական
ապրանքաշրջանառությունը
տարեկան կտրվածքով
չի գերազանցում 300
միլիոն դոլարը, որի
մեծագույն մասն ընկնում
է Իրանից Հայաստան
ներմուծումներին:**

Թեիրանում մարտին անցկացված Նովրուզի տոնակատարություններին մասնակցելու նպատակով նախագահ Մահմուդ Ահմադինեժադը հրավերներ էր ուղարկել երկու տասնյակ երկրների ղեկավարների, սակայն հրավերն ընդունել էին միայն հինգ առաջնորդներ՝ Հայաստանի, Աֆղանստանի, Տաջիկստանի, Թուրքմենստանի և Իրաքի նախագահները:

Հունիսին նախատեսված էր Ահմադինեժադի այցը Երևան, սակայն այն հետաձգվեց: Ուշագրավը ոչ թե այցի հետաձգումն էր, այլ իրանական կողմի բացատրությունը, թե Երևանը չէր հասցրել նախապատրաստել այն փաստաթղթերը, որոնք պիտի ստորագրվեին այցի օրերին, և Ահմադինեժադը Երևանում կլինի այն ժամանակ, երբ ստորագրվելիք փաստաթղթերի փաթեթը պատրաստ կլինի: Իրանի նախագահի այցը ակնկալվում էր մինչև տարեվերջ:

Հայաստանի և Իրանի արտգործնախարարները տարվա ընթացքում հանդիպեցին երեք անգամ՝ երկուսը Թեիրանում, մեկը Երևանում: Հայաստան այցելեցին Իրանի պաշտպանության փոխնախարարը և Ահմադինեժադի հատուկ բանագնացը՝ երկու անգամ: Թեիրանում մայիսին տեղի ունեցավ հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի 10-րդ նիստը, իսկ աշնանը Մեղրիում կայացան հայ-իրանական բարեկամության օրեր՝ նվիրված երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման քսանամյակին:

Հայ-իրանական հարաբերություններում կա մի ոլորտ, որտեղ վերջին տարիներին առաջընթացը տեսանելի է: Տարեցտարի ավելանում է իրանցի զբոսաշրջիկների թիվը, ովքեր նախընտրում են հանգիստն անցկացնել Հայաստանում: Եթե նախկինում միայն Նովրուզի օրերին էին հիմնականում ժամանում, վերջին երկու տարիներին իրանցիները Հայաստան են այցելում տարվա գրեթե բոլոր եղանակներին:

ՀԱՅԱՍՏԱՆ-ՎՐԱՍՏԱՆ

Հայ-վրացական հարաբերությունները վերջին 20 տարիներին դիմացան տարածաշրջանային վայրիվերումներին, սակայն երկու հիմնական գործոններ ուղղակիորեն խանգարում են համագործակցությանը և ինտեգրմանը ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական և մյուս բնագավառներում:

Առաջինը Վրաստան-Ռուսաստան թշնամական հարաբերություններն են, երկրորդը՝ կովկասյան չկարգավորված հակամարտությունները:

Հարավային Կովկասում Ռուսաստանի դաշնակից լինելն ինքնին բավարար է,

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈՍԱՆՔՆԵՐ

որպեսզի Հայաստանին Վրաստանն ընկալի որպես հնարավոր վտանգ, թեև Վրաստանի համար ամենադժվար օրերին, նաև 2008-ի օգոստոսյան պատերազմի ընթացքում, Հայաստանը ցույց է տվել իր դրական չեզոքությունը ռուս-վրացական հարաբերությունների առումով: Վրացիները հայաբնակ Ջավախքի նկատմամբ ևս նույն ընկալումն ունեին, չնայած Վրաստանի անկախությունից ի վեր՝ ամենահանգիստ շրջաններից մեկը հենց հայաբնակ այդ երկրամասն է եղել:

Երկրորդ գործոնը կովկասյան չկարգավորված հակամարտությունների խնդիրն է:

Վրաստանը, որպես սկզբունք, չի ընդունում Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքը և յուրաքանչյուր առիթով այդ հարցում կանգնում է Ադրբեջանի կողքին: Աբխազիայի հարցում, թեև Հայաստանը ճանաչում է Վրաստանի տարածքային ամբողջականությունը, Թբիլիսին կասկածամիտ է: Վրաստանին անգամ նյարդայնացնում է, երբ Հայաստանի կրթության նախարարությունը դասագրքեր է ուղարկում Աբխազիայի հայկական դպրոցներին: Ռուսաբխազական սահմանակետով Աբխազիա մտած շատ Հայաստանի քաղաքացիներ, Վրաստան այցելելիս, ձերբակալվում ու ենթարկվում են քրեական պատասխանատվության ապօրինաբար սահման հատելու մեղադրանքով: Սրանք պետական քաղաքականության ուղղակի արտահայտություններ են, սակայն յուրաքանչյուր նման դրվագ խորացնում է փոխադարձ անվստահությունը և ժողովուրդների միջև թշնամանքի ընկալումը:

Անշուշտ, կան այլ գործոններ ևս, որոնք նույնպես բարենպաստ չեն երկկողմ հարաբերությունների ամրապնդման համար: Դրանց թվում են.

- Հայաստան-Ադրբեջան հակամարտությունն ու Վրաստան-Ադրբեջան խորացող ռազմավարական համագործակցությունը,
- Հայ-թուրքական հարաբերությունների բացակայությունն ու վրաց-թուրքական բարձր մակարդակի երկխոսությունը,
- Թուրքիայի ու Ադրբեջանի կողմից Հայաստանը տարածաշրջանային էներգետիկ և կոմունիկացիոն նախագծերից հեռու պահելն ու Հայաստանի փաստացի մեկուսացումը, որին անուղղակիորեն մասնակցում է նաև Վրաստանը,
- Ջավախքի և Վրաստանի մյուս հայաբնակ հատվածների հանդեպ խտրական քաղաքականությունը, որն արտահայտվում է առաջին հերթին հայոց լեզվի և հայկական ճարտարապետական կոթողների նկատմամբ ոչ բավարար ուշադրությամբ,
- Շուրջ 15 տարի տևող հայ-վրացական սահմանի սահմանազատման և սահմանազոհման չավարտված աշխատանքները,

Հայաստանի և Վրաստանի բոլոր նախագահները, ինչպես նաև հոգևոր առաջնորդները բազմիցս փոխադարձ այցելություններ են կատարել:

Հայ-վրացական հարաբերությունները 2011 թ. սկսվեցին խորհրդանշական ժեստով. նախագահ Սաակաշվիլին հունվարի

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈՍԱՆՔՆԵՐ

առաջին օրերին այցելեց Թբիլիսիի հայաշատ Հավլաբար թաղամասի Սուրբ Էջմիածին հայկական եկեղեցի և հայ հավատացյալներին շնորհավորեց Ծննդյան տոների առիթով: Սասկաշվիլին խոսքեր շռայլեց հայ-վրացական «հազարավոր տարիների բարեկամության ու եղբայրության մասին»՝ դրանք որակելով «համաշխարհային պատմության բացառիկ օրինակ», թե ինչպես կարող են երկու հարևան ժողովուրդները պատմական և աշխարհագրական բարդ պայմաններում միմյանց օգնել:

2008 թ. օգոստոսյան պատերազմի ընթացքում, Հայաստանը ցույց է տվել իր դրական չեզոքությունը ռուս-վրացական հարաբերությունների առումով:

Հայ-վրացական հարաբերություններին սրություն հաղորդող գործոններից է Վրաստանում հայկական եկեղեցու կարգավիճակի և Թբիլիսիի վեց ու Ախալցխայի մեկ հայկական եկեղեցիների խնդիրը: Ամռանը, վերջապես, իրավաբանական կարգավիճակի խնդիրը լուծվեց, քաղաքացիական օրենսգրքում համապատասխան փոփոխություններ արվեցին, որոնցով նախատեսվում է իրավաբանական անձի կարգավիճակ շնորհել երկրում գործող կրոնական հինգ միությունների, այդ թվում՝ Հայ առաքելական եկեղեցուն: Սակայն օրինագիծը իր հետ բերեց աննախադեպ հակահայկական ալիք վրացական հասարակության տարբեր շերտերում, առաջին հերթին՝ եկեղեցականների ու հավատացյալների շրջանում:

Խորհրդարանում այդ օրինագծի ընդունումից հետո Թբիլիսիում տեղի ունեցավ բազմահազարանոց բողոքի ցույց: Վրաց պատրիարք Իլյա Երկրորդը հայտարարեց, որ նա, ով «ստորացրել ու ստորացնում է վրաց եկեղեցին, անպայման պատժվում է», իսկ Վրաց ուղղափառ եկեղեցու սպասավորներից մեկն անիծեց այն պատգամավորներին, որոնք կողմ էին քվեարկել օրինագծին:

Վրաստանի այդ որոշումը, որը հիմնականում ընդունվել էր եվրոպական կառույցների ճնշման տակ, ողջունվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից, որը մնում է վրաց եկեղեցու քննդատության հիմնական թիրախ: Վրաց եկեղեցու տարբեր ներկայացուցիչներ ոչ բարեկամական հայտարարություններ արեցին Հայ առաքելական եկեղեցու, մասնավորապես Ամենայն հայոց կաթողիկոսի հասցեին: Բացի այդ՝ Վրաց ուղղափառ եկեղեցին, քաղաքացիական օրենսգրքի փոփոխությունների ընդունումից հետո, սկսել է ավելի հաճախ արտահայտվել Հայաստանում Վրաստանի թե՛ բացելու իր ցանկության մասին, որը, ըստ Հայաստանի օրենսդրության, չի արգելվում: Վրացական կողմը վերջին շրջանում նաև շահարկում է Հայաստանի հյուսիսում գտնվող ուղղափառ հինգ եկեղեցիների պատկանելության հարցը՝ պնդելով, որ դրանք վրացական են: Այս քայլով Վրաց եկեղեցին փորձում է վիճելի եկեղեցիների խնդիրը տեղափոխել պարզ առևտրի դաշտ՝ դուրս պահանջում եք եկեղեցիներ Վրաստանի հողում, մենք պահանջում ենք եկեղեցիներ Հայաստանի հողում:

Հայ-վրացական հարաբերություններին լարվածություն հաղորդող մյուս հիմնական գործոնը Հայաստանի և Վրաստանի տարբեր, իրար հակասող, հաճախ նաև միմյանց դեմ քվեարկություններն են միջազգային տարբեր կազմակերպություններում: 2011-ը բացառություն չէր:

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈՍԱՆՔՆԵՐ

Վրաստանի ղեկավարությունը հրապարակավ իր ափսոսանքը հայտնեց, երբ Հայաստանը ՄԱԿ-ում Ռուսաստանի և 11 այլ պետությունների հետ դեմ քվեարկեց «Աբխազիայից և Հարավային Օսիայից հարկադիր տեղահանվածների ու փախստականների վիճակի մասին» բանաձևին: Թբիլիսին 2008-ից ի վեր նման բանաձևեր է ներկայացնում Գլխավոր վեհաժողովի քվեարկությանը, և Հայաստանը միշտ «դեմ» է քվեարկում: Այս տարվա քվեարկությունն ուշագրավ էր նրանով, որ քվեարկության օրը Հայաստանի արտգործնախարարը Թբիլիսիում էր:

Վրաստանի արտգործնախարարությունը գրավոր նամակով խնդրել էր Հայաստանին, որպեսզի այս տարի Երևանը աջակցի, սակայն հայկական կողմը նախորդ տարիների նման «դեմ» քվեարկեց:

Մի կողմից, անկասկած, Հայաստանը պարտավորվածություն չունի հօգուտ Վրաստանի քվեարկել, քանի որ վերջինս գրեթե առանց բացառության միանում է Ադրբեջանին և ղարաբաղյան կամ «ձգձգվող հակամարտությունների» հարցով ընդունվող բանաձևերում քվեարկում է ընդդեմ Հայաստանի և հետևաբար՝ Լեռնային Ղարաբաղի: Մյուս կողմից, Հայաստանի համար դժվար է անկախ որոշում ընդունել, երբ ընդդեմ Վրաստանի քվեարկողների խումբը գլխավորում է Ռուսաստանը:

Եթե Հայաստանը «ձեռնպահ» քվեարկի, ապա նույնպիսի դիրքորոշում կարող է ակնկալել Վրաստանից, երբ Ադրբեջանը ՄԱԿ-ում և միջազգային այլ կառույցներում բանաձևեր է ներկայացնում ընդդեմ Հայաստանի:

Բայց կա նաև երրորդ պատճառ, որը Հայաստանի «ձեռնպահ» քվեարկելը դարձնում է ցանկալի: Վրաստանի դեմ քվեարկում են այն երկրները, որոնք ունեն

ավտորիտար համակարգ՝ Կուբա, Հյուսիսային Կորեա, Սուդան և այլն, և Հայաստանն իրեն դնում է այդ պետությունների կողքին:

**Հայ-վրացական
հարաբերությունների
սրություն հաղորդող
գործոններից է
Վրաստանում հայկական
եկեղեցու կարգավիճակի
և Թբիլիսիի վեց ու
Ախալցխայի մեկ հայկական
եկեղեցիների խնդիրը:**

Ապրիլի կեսերին՝ Վրաստանի պաշտպանության նախարարի՝ Երևան այցից մեկ օր անց Վրաստանի խորհրդարանը միաձայն քվեարկությամբ չեղյալ հայտարարեց 2006 թ. Ռուսաստանի հետ կնքած համաձայնագիրը, որով կանոնակարգվում էր Հայաստանի տարածքում գտնվող 102-րդ ռազմակայանը ռուսական ռազմական բեռներով ու անձնակազմով համալրումը Վրաստանի տարածքով: Այդ համաձայնագիրը փաստացի չէր գործում արդեն 2008 թ. օգոստոսյան պատերազմից հետո:

Երևանը և Թբիլիսին տարբեր ռազմաքաղաքական դաշինքների են հարում՝ Հայաստանը ՀԱՊԿ-ի անդամ է, որի ողնաշարը Ռուսաստանն է, իսկ Վրաստանը ձգտում է դեպի ՆԱՏՕ: Անշուշտ, ինչպես այս, այնպես էլ խաչվող արտաքին քաղաքական այլ առաջնահերթություններ չեն նպաստում Երևան-Թբիլիսի ռազմական գործակցությանը: Մյուս կողմից, հայ-վրացական ռազմական համատեղ մասնակցություն կա, որը նախ և առաջ ներառում է խաղաղապահությունը

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈՍԱՆՔՆԵՐ

(Կոսովո, Աֆղանստան) և համատեղ գինավարժությունները ՆԱՏՕ-ի շրջանակներում:

Երևանը և Թբիլիսին տարբեր ռազմաքաղաքական դաշինքների են հարում՝ Հայաստանը ՀԱՊԿ-ի անդամ է, որի ողնաշարը Ռուսաստանն է, իսկ Վրաստանը ձգտում է դեպի ՆԱՏՕ:

2011 թ. ընթացքում տեղի ունեցան մի շարք փոխադարձ այցեր: Հունվարին Սաակաշվիլին աշխատանքային այցով եղավ Երևանում, իսկ նոյեմբերին Սերժ Սարգսյանը՝ Թբիլիսիում: Ինչպես նախկինում, նախագահները անդրադարձան հայ-վրացական սահմանի հատման գործընթացներն ավելի դյուրին, թափանցիկ, տրանսպորտային միջոցների համար բաց դարձնելու խնդրին: Թեև խոստումները չեն վերածվում գործի, Սաակաշվիլին Թբիլիսում ցանկություն հայտնեց, որ Վրաստան-Հայաստան սահմանն ունենա ֆրանս-գերմանական սահմանի թափանցիկությունը: Նախագահները անդրադարձան նաև «Հյուսիս-հարավ» ավտոմայրուղու ծրագրին, որն իրականություն դառնալու դեպքում Երևանը հայաբնակ Ջավախքով կկապվի Բաթումիին և Սև ծովին: Նախկին նախագահ Շևարճնաձեն այդ նախագծի նկատմամբ կրկին հրապարակավ իր անհամաձայնությունը հայտնեց:

Փետրվարին Հայաստան այցելեց վարչապետ Նիկա Գիլաուրին և հայկական կողմին վստահեցրեց, որ «Հյուսիս-հարավ» գազամուղի վերահսկիչ փաթեթը չի վաճառվելու: Այդ գազատարով է Հայաստանն ապահովվում ռուսական «երկնագույն վառելիքով», որը գնելու ցանկություն է հայտնել Ադրբեջանը: Փոխադարձ այցով Վրաստան մեկնեց Հայաստանի վարչապետը, փոխադարձ այցեր ունեցան նաև արտգործնախարարները:

Վրաստանը շարունակում է Հայաստանի համար լինել տարանցման հիմնական պետությունը, որի երկաթուղով ու սևծովյան նավահանգիստներով են իրականացվում Հայաստան ներմուծվող և երկրից արտահանվող ապրանքների շուրջ 70 տոկոսը: Վրաստանի տարածքով է իրականացվում նաև հայ-թուրքական ապրանքաշրջանառությունը, որը գրեթե միակողմանի է:

Միջսահմանային հազվադեպ համագործակցության ջանքերով 2015 թ. նախատեսվում է իրականացնել Հարավային Կովկասում անդրսահմանային ազգային արգելանցի ծրագիրը, որը կներառի Ջավախքի ազգային արգելանցը Վրաստանում և Արփի լիճ ազգային արգելանցը Հայաստանի հյուսիս-արևմուտքում:

Հավանաբար Երևանն ու Թբիլիսին աշխարհում միակ երկու հարևան երկրների մայրաքաղաքներն են, որ իրար հետ կապված չեն մշտական և վստահելի թռիչքներով:

ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐՔԻԱ

Երևան-Անկարա հարաբերությունները 2011 թ. ոչ միայն վերադարձան 2008 թ. ելման կետ, այլև դադարեցին անգամ միջին մակարդակի շփումները, որ միշտ եղել են նախկինում

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈՍԱՆՔՆԵՐ

հայ և թուրք դիվանագետների միջև արտգործնախարարությունների վարչության պետերի մակարդակով:

2011 թ. ընթացքում մի քանի կոշտ հայտարարություններ արվեցին, որոնք ավելի պղտորեցին հայ-թուրքական երկխոսության ջրերը: Սա այն դեպքում, երբ 2009-2010 թթ. Երևանը, Անկարան և միջազգային հանրությունը հուսով էին, որ Ցյուրիխում ստորագրված երկու արձանագրությունները կվավերացվեն, և երկու երկրների միջև կհաստատվեն դիվանագիտական հարաբերություններ: Սակայն հայ-թուրքական հարաբերությունները ոչ միայն սառեցին, այլև ավելի վատթարացան, երբ Թուրքիան համառոտ և արձանագրությունների վավերացումը կապեց ղարաբաղյան հարցում դրական տեղաշարժի հետ:

Տարին Թուրքիան սկսեց խորհրդանշական ժեստով: Վարչապետ Էրդողանը հունվարի սկզբին Կարս այցելության ժամանակ «հրեշավոր» որակեց «Մարդկության հուշարձանը»: Հայ և թուրք ժողովուրդների «բարեկամությունը և խաղաղությունը» խորհրդանշող այդ հուշարձանը Կարսի նախկին քաղաքապետ Նայիֆ Ալիբեյջոլուի մտահղացումն էր, ով Թուրքիա-Հայաստան հարաբերությունների բարելավման ջերմեռանդ կողմնակիցներից էր և ի նպաստ սահմանի բացման դեռ 2004 թ. մոտ հիսուն հազար ստորագրություն էր հավաքել 90-հազարանոց քաղաքում:

Էրդողանի քննադատությունից չորս ամիս անց հուշարձանն արդեն ապամոնտաժվել էր: Թեև արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն հայտարարեց, որ հուշարձանի ապամոնտաժումը որևէ կապ չունի Թուրքիա-Հայաստան հարաբերությունների կարգավորման հետ, հուշարձանի ոչնչացումն ընկալվեց որպես թուրք-հայկական

«ֆուտբոլային դիվանագիտության» վախճանը նշանավորող քայլ: Հուշարձանի հեղինակ, քանդակագործ Մեհմեթ Աքսոյը իր հարցազրույցներում շեշտում էր, որ Էրդողանը կնամանվի թալիբներին, եթե հուշարձանը քանդվի: Իսկ երբ սկսվեց ապամոնտաժումը, նա հայտարարեց, որ հուշարձանի ոչնչացման հետ Թուրքիայի իշխանությունները «խաղաղության հույսն են ոչնչացնում»:

Թուրքիան կարողացավ ստեղծել այնպիսի վիճակ և միջազգային հասարակական կարծիք, որ Անկարա-Երևան հակասությունների հաղթահարման գլխավոր խոչընդոտը ղարաբաղյան չկարգավորված հակամարտությունն է:

Մայիսի սկզբին խորհրդարանական ընտրությունների քարոզարշավի շրջանակներում Էրդողանը այցելեց Հայաստանին սահմանակից մեկ այլ քաղաք՝ Իգդիր, որտեղ հայտարարեց, որ պաշտոնական Անկարան չի բարելավի հարաբերությունները Հայաստանի հետ և քանի դեռ կարգավորված չէ ղարաբաղյան խնդիրը Հայաստանի հետ «հաշտեցումն անհնար է»:

Տարվա ընթացքում թուրք բարձրաստիճան պաշտոնյաները առիթը բաց չէին թողնում հիշեցնելու Թուրքիա-Հայաստան հարաբերությունների և Լեռնային Ղարաբաղի միջև ուղղակի կապի մասին: Արտգործնախարար Դավութօղլուն

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈՍԱՆՔՆԵՐ

Եվրոպայի խորհրդում ապրիլին ունեցած ելույթում դատապարտեց Ստեփանակերտի օդանավակայանը վերանորոգելու և գործարկելու հայկական կողմի մտադրությունը՝ ընդգծելով, թե «նման սադրիչ գործողությունները չեն նպաստի Լեռնային Ղարաբաղի խնդրի խաղաղ կարգավորմանը»:

Հաշվի առնելով Ադրբեջանի ու Թուրքիայի ազգային կապերն ու քաղաքական դաշնությունը՝ Անկարան չի փորձի վսասել Թուրքիա-Ադրբեջան համագործակցությանը:

Երևանից և հատկապես Անկարայից հնչող հայտարարություններից տպավորություն էր ստեղծվում, որ կողմերը չեն ափսոսում Հայաստան-Թուրքիա գործընթացի վախճանի համար: Դիվանագիտությունը փոխարինվել էր քարոզչությամբ, որն էլ երբեմն վերածվում էր վիրավորանքի: Դրա ամենասակնառու դեպքը եղավ ամռանը: Սփյուռքահայ մի երիտասարդի հարցին, թե Հայաստանին ինչ ապագա է սպասում՝ «որը հիշեցնելու է Բաթումիի պայմանագիրը, թե որը մեզ կվերադարձնի Արևմտյան Հայաստանը՝ Արարատ սարով», նախագահ Սարգսյանը պատասխանել էր՝ «դա կախված է քեզնից և քո սերնդից, իմ սերունդը հաղթանակ է տարել Ղարաբաղում»:

Անկարայի հակազդեցությունը խիստ էր: Բաքվում վարչապետ Էրդողանը Հայաստանի նախագահի խոսքերը որակեց «սադրիչ», երկրի ղեկավարին՝ «ոչ հարիր», «ապագա սերունդների մեջ առելություն

և թշնամություն սերմանող», հետևաբար՝ «Հայաստանի նախագահը պետք է ներողություն խնդրի»: Նախագահ Սարգսյանի մեկնաբանությունները դատապարտեցին նաև Թուրքիայի արտգործնախարարությունը, նախարարներից մեկը և փոխվարչապետը: Վերջինս անպատասխանատվություն և սադրանք որակեց Հայաստանի նախագահի խոսքերը. «Ոչ ոք չի կարող Թուրքիային, մեր սարերին, մեր դաշտերին ու ջրերին խեթ նայել: Մենք ենք այս հողերի տերը: Երբ ժամանակին սոված էին, մենք նրանց ցորեն ենք ուղարկել: Թող խելքները գլուխները հավաքեն և սփյուռքը խաղի մեջ չմտցնեն»:

Հայաստանի նախագահին անուշադրության մատնեց այս հայտարարությունները, բայց իր հերթին, Կիպրոս և Հունաստան այցերի ընթացքում բավական կոշտ էր արտահայտվել Թուրքիայի արտաքին քաղաքականության մասին, այն որակելով «նոր օսմանականության»: Վերադառնալով Երևան Հայաստանի նախագահը մի հարցազրույցում ընդունեց, որ Թուրքիան մեծ պետություն է, սակայն դա նրանց թույլ չի տալիս ուրիշներին սովորեցնել:

Սարգսյանը չբացառեց, որ Երևանը կարող է հետ վերցնել ստորագրությունը հայ-թուրքական 2009 թ. արձանագրություններից, սակայն դա չարեց, հավանաբար չցանկանալով անել մի քայլ, որին միջազգային հանրությունը դրական չի արձագանքի: Ավելին, հայ բարձրաստիճան պաշտոնյաները փորձում էին միջազգային հանրությանը հասցնել, որ Թուրքիան է տապալել հայ-թուրքական գործընթացը:

Մոտ ապագայում Թուրքիան դժվար թե վավերացնի արձանագրությունները, որոնք վերադարձվել են նորընտիր խորհրդարանի օրակարգ, քանի դեռ փոփոխություն չկա ղարաբաղյան հարցում:

ՓՈՓՈՒՎՈՂ ՀՈՍԱՆՔՆԵՐ

Թուրքիան միջազգային հանրության առաջ ընդունել է մի կեցվածք, որից չի կարող շարժվել: Ոչ էլ կարծես դրա ցանկությունն ունի: Հայաստանի շրջափակմանը վերջ դնելուն միտված ամերիկացիների և եվրոպացիների ճնշումները, որոնց արդյունքում ի հայտ եկան արձանագրությունները, այլևս չկան: Թուրքիան կարողացավ ստեղծել այնպիսի վիճակ և միջազգային հասարակական կարծիք, որ Անկարա-Երևան հակասությունների հաղթահարման գլխավոր խոչընդոտը դարաբաղյան չկարգավորված հակամարտությունն է:

Թուրքիան չի զգում արտաքին կամ ներքին ճնշում, որպեսզի գնա հարաբերությունների մերձեցման Հայաստանի հետ, քանի որ.

- Թուրքիայի համար անդամակցությունը Եվրոպական Միությանը այլևս առաջնահերթություն չէ, հետևաբար՝ Անկարայի վրա ճնշումներ բանեցնելու համար Հայոց ցեղասպանության ճանաչումը կամ Հայաստանի շրջափակումը վերացնելու նախկին լծակներն այլևս ազդու չեն:
- Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը փաստացի կանգ է առել, և Թուրքիան կարիք չունի տպավորություն ստեղծելու, թե Հայաստանի հետ երկխոսություն կա:
- Թուրքիայի կողմից շրջափակում սկսելու հիմնական նպատակը Հայաստանին տնտեսապես ծնկի բերելն էր: Քանի դեռ Թուրքիան այդ նպատակը օրակարգից չի հանել, Հայաստանը չպետք է լուրջ ակնկալիքներ ունենա, որ սահմանը կբացվի:
- Հայաստանի հետ փակ սահմանը այլևս չի ընկալվում որպես

զարգացման խոչընդոտ Թուրքիայի արևելյան շրջանների համար: Վերջին ութ տարիներին Թուրքիան գրանցել է իր պատմության մեջ նախադեպը չունեցող տնտեսական աճ, դարձել է աշխարհի մեծությամբ 17-րդ տնտեսությունը և կարողանում է լուրջ ներդրումներ կատարել Հայաստանին սահմանակից շրջաններում:

Ադրբեջանը շարունակում է Թուրքիայի համար մնալ կարևոր գործընկեր: Հաշվի առնելով թե՛ Ադրբեջանի ու Թուրքիայի ազգային կապերն ու քաղաքական դաշնությունը, թե՛ Հայաստանի հետ պատմական հիշողությունները, Անկարան չի փորձի վնասել Թուրքիա-Ադրբեջան համագործակցությանը:

Հայաստանի նկատմամբ իրականացվող ավելի ագրեսիվ և կոշտ քաղաքականությամբ հանդերձ՝ Թուրքիան փորձում է համեմատաբար մեղմ վերաբերմունք դրսևորել Թուրքիայում բնակվող հայերի հանդեպ:

Թուրքիայի իշխանությունները, առանց համապատասխան հրամանագրի՝ ներքին կարգով, 2011-2012 թթ. ուսումնական տարվա համար թույլատրեցին Հայաստանից ժամանակավորապես Թուրքիա տեղափոխված ընտանիքների երեխաներին այցելել Ստամբուլի հայկական վարժարաններ, ինչն արգելված էր նախկինում: Մի քանի տասնյակ հազարի հասնող Հայաստանի քաղաքացիների երեխաներ, չունենալով Թուրքիայում ապրելու օրինական կարգավիճակ, դպրոց գնալու իրավունք չունեին: Ըստ թուրքական մամուլի՝ հայաստանցի երեխաները հաճախում էին գաղտնի կազմակերպված դպրոցներ կամ ոչ մի տեղ չէին սովորում:

Թուրքիան ակնհայտորեն փորձում է նաև իր տարածքում գտնվող հայկական

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈՍԱՆՔՆԵՐ

Եկեղեցիների վերանորոգումն ու վերաբացումը կապել Հայաստան-Թուրքիա գործընթացի հետ և միջազգային հանրության մոտ տպավորություն ստեղծել, որ այդ քայլերն ուղղված են հայ-թուրքական հարաբերությունների բարելավմանը:

Օգոստոսի վերջերին Թուրքիայի կառավարությունը համայնքային կալվածքների մասին հրամանագիր ստորագրեց, որով 1936 թ. պետության կողմից առգրավված անշարժ գույքը պետք է վերադարձվի կրոնական փոքրամասնություններին:

Թուրքիան ակնհայտորեն փորձում է իր տարածքում գտնվող հայկական եկեղեցիների վերանորոգումն ու վերաբացումը կապել Հայաստան-Թուրքիա գործընթացի հետ և միջազգային հանրության մոտ տպավորություն ստեղծել, որ այդ քայլերն ուղղված են հայ-թուրքական հարաբերությունների բարելավմանը:

Սեպտեմբերին Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցում երկրորդ անգամ պատարագ մատուցվեց, իսկ հոկտեմբերին վերանորոգումից հետո բացվեց Դիարբեքիրի Սուրբ Կարապետը, որը Մերձավոր

Արևելքի հայկական ամենամեծ եկեղեցին է: Վերանորոգումը ֆինանսավորվել էր անհատ հայերի և Դիարբեքիրի քաղաքապետարանի կողմից:

Երբ հոկտեմբերին Վանի շրջանում տեղի ունեցավ ուժեղ երկրաշարժ, Հայաստանը պատրաստակամություն հայտնեց ուղարկել փրկարարների: Թուրքական կողմը շնորհակալություն հայտնեց և հայտարարեց, որ ի վիճակի է ինքնուրույն վերացնել աղետի հետևանքները: Բայցևայնպես, Հայաստանի արտակարգ իրավիճակների նախարարությունը մարդասիրական օգնություն ուղարկեց Թուրքիա՝ վրաններ, քնապարկեր, ծածկոցներ, առաջին անհրաժեշտության այլ իրեր:

Վանի երկրաշարժի օրերին Հայաստանում էին մի խումբ թուրք լրագրողներ, որոնք առաջին անգամ զգացին երկու երկրների աշխարհագրական մերձավորությունը և փակ սահմանների ազդեցությունը: Վան քաղաքը, որ համաշխարհային լրատվամիջոցների և փրկարարների աշխատանքների կենտրոնում էր, Երևանից ընդամենը 200 կիլոմետր հեռավորության վրա էր, բայց անհնար էր գնալ այնտեղ և օգնել: Այդ օրերին նախագահ Սարգսյանը պետական այցով Մոսկվայում էր և այնտեղից ցավակցական հեռագիր հղեց իր թուրք պաշտոնակցին, ապա Ռուսաստանի և Հայաստանի առաջնորդները հեռախոսազրույցներ ունեցան Թուրքիայի նախագահի հետ:

2011 թ. Հայոց ցեղասպանության նոր ճանաչում չգրանցվեց աշխարհի որևէ պետության կամ խորհրդարանի կողմից: Գործընթացը կանգ էր առել երկու արձանագրությունների մեջտեղ գալով և ստորագրումով: Թուրքիան իրավունք էր ստացել պնդելու, որ իրենք արդեն զբաղվում են երկկողմ հարաբերություններին վերաբերող խնդրով, հետևաբար միջազգային

ՓՈՓՈԽՎՈՂ ԶՈՍԱՆՔՆԵՐ

միջամտությունն ավելորդ է: Ու թեև 2011-ին Թուրքիան հրապարակավ իրեն հեռու պահեց արձանագրություններից, միջազգային հանրությունը չվերադարձավ ցեղասպանության խնդրին:

Թուրքական կողմը շարունակում է նյարդային արձագանք տալ բոլոր այն հայտարարություններին, որոնք վերաբերում են Հայոց ցեղասպանությանը և դրա միջազգային ծանաչմանը: Երբ սեպտեմբերին Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին Երևանում հայտարարեց, որ, եթե Թուրքիան շարունակի ժխտել ցեղասպանությունը, Ֆրանսիան կարող է Հայոց ցեղասպանության պետական ժխտման համար քրեական պատիժ սահմանել, Էրդոդանը Սարկոզին խորհուրդ տվեց մտածել գալիք սերունդների, այլ ոչ գալիք ընտրությունների մասին:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացում տարին մեծ հաշվով ավարտվեց այնպես, ինչպես սկսվել էր: Միջնորդները՝ Մինսկի խմբի համանախագահները (Միացյալ Նահանգներ, Ռուսաստան, Ֆրանսիա), տարվա սկզբին այցելեցին տարածաշրջան հույսով, իսկ տարեվերջին՝ հիասթափությամբ, գիտակցելով՝ ստեղծված փակուղային վիճակի լրջությունը: Միաժամակ, ողջ տարվա ընթացքում պայթյունավտանգ իրավիճակ էր շփման գծի երկայնքով: Հույս ներշնչող բանակցությունների բացակայության պայմաններում ակտիվացան դիպլոմատիկա-հարստերը, և զոհերի ու վիրավորների թիվն էապես աճեց:

Ամբողջ տարվա ընթացքում կողմերը ոչ միայն միմյանց մեղադրեցին բանակցությունները տապալելու մեջ, այլ նաև շարունակեցին վիճել,

թե որ փաստաթուղթն է օրինական՝ 2007 թ. Մադրիդյա՞նը, թե՞ նորացվածը:

Տարվա կարևորագույն իրադարձությունը Ռուսաստանի նախագահի միջնորդությամբ Հայաստանի և Ադրբեջանի նախագահների Կազանի հանդիպումն էր, որի նախօրեին «Հայկական ժամանակ» օրաթերթը հրապարակեց Մադրիդյան փաստաթղթի առաջին վեց կետերը: Հրապարակումից հետո հայկական լրատվամիջոցներում և քաղաքական-փորձագիտական շրջանակներում դրա շուրջ բանավեժ գրեթե չծավալվեց:

Բանակցային գործընթացի խորը փակուղին կարծես ակտիվացրեց դիպլոմատիկա-հարստերին: Շփման գծի երկու կողմերում գրանցվեցին տասնյակ սպանվածներ ու վիրավորներ:

Մինչ Կազանը Հայաստանի և Ադրբեջանի նախագահները, կրկին Ռուսաստանի ղեկավարի միջնորդությամբ և մասնակցությամբ, հանդիպել էին մարտի սկզբին Սոչիում:

Մայիսի վերջերին Դովիլում, Մեծ ութնյակի գագաթաժողովի ընթացքում, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող պետությունների նախագահներ Օբաման, Մեդվեդևն ու Սարկոզին համատեղ հայտարարություն ընդունեցին՝ Հայաստանի և Ադրբեջանի նախագահներին հորդորելով Կազանի գագաթաժողովում վերջնական տեսքի բերել կարգավորման հիմնարար սկզբունքները: Նրանք նաև Սարգսյանին ու Ալիևին կոչ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈՍԱՆՔՆԵՐ

արեցին իրենց ժողովուրդներին խաղաղության նախապատրաստել և ոչ թե նոր պատերազմի: Սա համանախագահող պետությունների ղեկավարների չորրորդ համատեղ հայտարարությունն էր. նախորդները ընդունվել էին Դեկտեմբեր 1997 թ., Ակվիլայում՝ 2009 թ. և Մուսկոկայում՝ 2010 թ.:

Հունիսի 24-ին Կազանում նախագահների միջև հանդիպումը, հատկապես միջազգային շրջանակներում, որոշակի լավատեսություն էր ներշնչում: Միացյալ Նահանգների նախագահը բանակցությունների նախօրեին զանգահարեց Սարգսյանին և Ալիևին: Կողմերին ուղերձ հղեց նաև Սարկոզին:

Իսկ երբ Կազանի հանդիպումը ձախողվեց, Միացյալ Նահանգներն ու Ֆրանսիան հրապարակավ հիասթափություն հայտնեցին: Նախագահ Մեդվեդևը, հիասթափություն հայտնելով հանդերձ, Երևան և Բաքու գործուղեց իր երկրի թիվ մեկ դիվանագետին: Սերգեյ Լավրովը կողմերին ներկայացրեց լրացուցիչ առաջարկներ, որոնց բովանդակությունը և կողմերի՝ Կրեմլին տված պատասխանը, մնացին գաղտնի:

2011 թ. ընթացքում բանակցային գործընթացում կարելի է մատնանշել երեք հիմնական խոչընդոտներ, որոնք գործընթացը փակուղի տանելու պատճառ դարձան:

- Ադրբեջանը հետևողականորեն փորձում էր շեշտադրել տարածքային ամբողջականության սկզբունքը: Նախագահից սկսած, տարբեր դիվանագետների մակարդակով, փորձ էր արվում արժեզրկել բանակցային փաստաթղթում ամրագրված հիմնական հանրաքվեի գաղափարը: Հաշվի առնելով, որ հանրաքվեի գաղափարը այդ փաստաթղթի հիմնարար

տարրն է, որը հնարավոր է դարձնում համադրել արտաքուստ անհամադրելի թվացող տարածքային ամբողջականության և ինքնորոշման սկզբունքները, հանրաքվեի անտեսման դեպքում փաստաթուղթն ամբողջությամբ կորցնում է իր իմաստը:

- Կազանի հանդիպումը հրապարակայնորեն տապալվեց՝ հակառակ միջազգային հանրության աննախադեպ բարձր և հակամարտության կողմերի զուսպ ակնկալիքների: Խնդիրը այդ հանդիպման ձախողումը չէր, այլ այն, որ հայկական կողմը՝ որպես բանակցային հիմք ընդունելի էր համարում փաստաթուղթը, մինչդեռ Ադրբեջանն ուներ 10 լրացուցիչ պահանջներ: Սա նշանակում է, որ բավական լուրջ անհավասարակշռություն էր ստեղծվել բանակցային գործընթացում:
- 2011 թ. աճեց թե՛ ռազմական հռետորաբանությունը, թե՛ հրադադարի խախտումների և շփման գծում մահվան ելքով միջադեպերի քանակը:

Բանակցային գործընթացի խորը փակուղին կարծես ակտիվացրեց դիպուկահարներին: Շփման գծի երկու կողմերում գրանցվեցին տասնյակ սպանվածներ ու վիրավորներ: Երբ հոկտեմբերին և նոյեմբերին ադրբեջանական դիպուկահարները սպանեցին ժամկետային հայ զինծառայողների, Հայաստանի պաշտպանության նախարարությունը հայտարարեց, որ ադրբեջանական դիպուկահարների գործողություններին «լիարժեք պատասխան» է տրվում

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈՍԱՆՔՆԵՐ

«անհամաչափ պատժի կիրառմամբ», ինչը նշանակում է, որ հակառակորդը պատժվում է «մի քանի անգամ ավելի մեծ կորուստներով»:

Երևանը և Ստեփանակերտը դրական արձագանքեցին առաջապահ գծից դիպուկահարներին հեռացնելու՝ միջազգային հանրության և ԵԱՀԿ-ի հորդորներին, բայց Ադրբեջանն արհամարհում է այդ կոչերը:

Սեպտեմբերին դարաբաղյան հակաօդային պաշտպանական ուժերը վայր գցեցին ադրբեջանական անօդաչու մի ինքնաթիռ:

Հայաստանի նախագահը միջազգային հանրության ուշադրությունը հրավիրեց Ադրբեջանի ռազմական հռետորաբանությանը՝ ընդգծելով, որ Բաքուն ռազմական գործողությունները վերսկսելու հարմար առիթ է փնտրում:

Նախ Ադրբեջանը, ապա Լեռնային Ղարաբաղը և Հայաստանը կազմակերպեցին ռազմական զորահանդեսներ, որոնք նպատակ ունեին հակառակորդ երկրում ռազմական հզորության տպավորություն ստեղծել: Հոկտեմբերին Բրյուսելում կարճատև հանդիպում տեղի ունեցավ Հայաստանի և Ադրբեջանի պաշտպանության նախարարների միջև:

Ինչպես ավելի վաղ հայտարարվել էր 2011 թ. մայիսին պետք է բացվեր Ստեփանակերտի վերանորոգված օդանավակայանը: Ադրբեջանական կողմը բարձր մակարդակով հայտարարեց, որ կկործանի հայկական օդանավերը, եթե թռիչքներ իրականացվեն Ստեփանակերտի օդանավակայանից: Հայաստանի նախագահը ի պատասխան հայտարարեց, որ ինքն է լինելու Երևան-Ստեփանակերտ թռիչքի առաջին ուղևորը: Սակայն տարվա ընթացքում այդպես էլ օդանավակայանը չգործարկվեց: Ստեփանակերտում պաշտոնյաները

հավաստիացնում էին, որ օդանավակայանը դեռևս վերջնականապես պատրաստ չէ անվտանգ կերպով օդանավեր ընդունելու համար: Օդանավակայանի գործարկման հետ կապված հավանաբար կան նաև դիվանագիտական և իրավական խնդիրներ, որոնք մինչև այսօր չեն լուծվել:

Ամբողջ տարվա ընթացքում կողմերը ոչ միայն միմյանց մեղադրեցին բանակցությունները տապալելու մեջ, այլ նաև շարունակեցին վիճել, թե որ փաստաթուղթն է օրինական՝ 2007 թ. Մադրիդյա՞նը, թե՞ նորացվածը:

Հակահայկական քարոզչությունը իր արտացոլումն է գտնում անգամ միջազգային մարզական միջոցառումների ընթացքում և, թվում է, թե Բաքուն լռելյայն կամ բացահայտ աջակցում է դրան: Այսպես, երբ աշնանը Բաքվում տեղի էր ունենում բռնցքամարտի աշխարհի առաջնությունը, ադրբեջանցիների մի խումբ ներխուժեց մարզասրահ և քարեր նետեց այդ պահին ռինգում գտնվող հայ բռնցքամարտիկի ուղղությամբ:

Հայաստանը և Ադրբեջանը հերթական անգամ ՄԱԿ-ի ամբիոնը օգտագործեցին միմյանց հասցեին քննադատություն հնչեցնելու նպատակով: Հոկտեմբերին Ադրբեջանը դարձավ ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամ երկու տարի ժամկետով: Մեկնաբանությունները Հայաստանում և Ադրբեջանում տարբեր էին: Բաքվի

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈՍԱՆՔՆԵՐ

Իշխանություններն այդ ընտրությունը համարեցին Ադրբեջանի դիվանագիտական լուրջ հաջողությունը, մինչդեռ Երևանում իշխանական շրջանակները փորձեցին դրան կարևորություն չտալ:

Ադրբեջանը, նախագահից սկսած, տարբեր դիվանագետների մակարդակով, փորձում էր արժեզրկել բանակցային հիմնական փաստաթղթում ամրագրված հանրաքվեի գաղափարը:

Տարիներ առաջ Հայաստանն ու Ադրբեջանը գրեթե միաժամանակ ցանկություն էին հայտնել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամ դառնալ 2012-2013 ժամանակահատվածում: 2011 թ. հուլիսին Երևանը հանեց իր թեկնածությունը այն նկատառումով, որ Հայաստանին քվեարկող երկրները իրենց ձայնը կտան Սլովենիային: Բայց իրականում Հայաստանի թեկնածության հանումը օգնեց Ադրբեջանին, քանի որ այն երկրները, որոնք Հայաստանի առկայության պայմաններում վերապահ կլինեին աջակցել Հայաստանին կամ Ադրբեջանին, նրանց միջև եղած չկարգավորված հակամարտության պատճառով, Հայաստանի թեկնածության բացակայության պայմաններում, այլ նկատառումներից ելնելով, լիիրավ ազատություն ստացան Ադրբեջանին աջակցելու համար: Առ այսօր ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի քվեարկությունները ցույց են տվել, որ նույնիսկ Ադրբեջանի կողմից օրակարգ բերված, իրավական ուժ չունեցող բանաձևերի քվեարկություններում լավագույն դեպքում

Ադրբեջանը կարողացել է ապահովել չորս տասնյակից պակաս ձայն: Պատճառներից հիմնականը եղել է այն, որ հակադիր կողմում եղել է Հայաստանը:

Կասկած չկա, որ Ադրբեջանը ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի ամբիոնը ևս օգտագործելու է՝ Հայաստանին և Լեռնային Ղարաբաղին վարկաբեկելու, դարաբաղյան հակամարտությունը ադրբեջանական շահերի տեսանկյունով ներկայացնելու նպատակով:

Նոյեմբերի վերջերին ԱՊՀ երկրների միջկրոնական խորհրդի նիստին մասնակցելու նպատակով առաջին անգամ Հայաստան ժամանեց Կովկասի մահմեդականների վարչության նախագահ Շեյխու ուլ Իսլամ Ալլահշուքյուր Փաշազադեն, որին Երևանում ընդունեց նաև երկրի նախագահը: Հայաստանի և Ադրբեջանի հոգևոր առաջնորդները և Համայն Ռուսիո պատրիարքը համատեղ հատարարություն տարածեցին՝ հորդորելով դարաբաղա-ադրբեջանական շփման գծից հետքաշել դիպուկահարներին:

Դեկտեմբերին Վիլնյուսում կայացավ ԵԱՀԿ արտգործնախարարների տարեկան հանդիպումը, որի ժամանակ Մինսկի խմբի համանախագահ երկրների բարձրաստիճան դիվանագետներն ու Հայաստանի և Ադրբեջանի արտգործնախարարները ընդունեցին համատեղ հայտարարություն՝ ընդգծելով, որ դարաբաղյան հակամարտությունը չի կարող ունենալ ռազմական լուծում:

ՏԱՐԱԾԱՆԵՐՁԱՆԻ ՇՈՒՐՁ

Ռուսաստանը, դարաբաղյան կարգավորման գործընթացում մնալով ամենաակտիվ միջնորդը, սպառազինություններ մատակարարեց ոչ միայն իր դաշնակից Հայաստանին,

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈՍԱՆՔՆԵՐ

այլ նաև Ադրբեջանին: Հունիսին Բաքվում, իսկ սեպտեմբերին Երևանում անցկացված ռազմական շքերթները առիթ էին ցուցադրելու վերջին ձեռքբերումները:

Ադրբեջանն ունի ռուսական արտադրության Ա-300 տեսակի հակաօդային համակարգեր: Կան վստահելի տեղեկություններ, որ Ադրբեջանը Ռուսաստանից սպասում է շուրջ երկու տասնյակ ՄԻ-35 տեսակի հարվածային ուղղաթիռներ: Ավելի վաղ Ադրբեջանը ձեռք էր բերել ուղղաթիռներ Ուկրաինայից, Իսրայելից, Բելառուսից և Թուրքիայից:

Իր կողմից՝ Հայաստանն առաջին անգամ հաստատեց, որ զինանոցում ունի հակահրթիռային համակարգեր, ներառյալ կարճ հեռահարության «Տոչկա» և միջին հեռահարության «Սկադ-Բ», որոնց չեզոքացմանն են ուղղված Ա-300 համակարգերը: Կային հավաստի տեղեկություններ, որ Հայաստանը Ռուսաստանից ձեռք է բերելու առավել կատարելագործված Ա-400 տեսակի պաշտպանական համակարգեր:

Սպառազինությունների մրցավազքը շարունակում է հավանական դարձնել Հայաստանի և Ադրբեջանի ռազմական դիմակայությունը, որը կարող է կործանարար լինել կողմերի համար:

Հայաստանը ստիպված է ապավինել օտարերկրյա երկրների, առաջին հերթին Ռուսաստանի բարյացակամությանը, որպեսզի կարողանա հակակշռել Ադրբեջանի ռազմական համալրումները, որոնք հնարավոր են դառնում էներգակիրների վաճառքի հաշվին: Հայաստանը, լինելով ՀԱՊԿ-ի անդամ, Ռուսաստանից սպառազինություններ է գնում ներռուսաստանյան գներով:

Այս կախվածությունն աչքի առաջ ունենալով՝ Հայաստանը պաշտոնապես որևէ

քննադատություն չուղղեց Ռուսաստանին ո՛չ Ադրբեջանին սպառազինություններ մատակարարելու, ո՛չ էլ ՆԱՏՕ-ի անդամներ Սլովենիայի և Հունգարիայի հետ ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամի տեղի համար պայքարում Բաքվի ջանքերին աջակցելու համար, որոնք ի վերջո պսակվեցին հաջողությամբ:

Սպառազինությունների մրցավազքը շարունակում է հավանական դարձնել Հայաստանի և Ադրբեջանի ռազմական դիմակայությունը, որը կարող է կործանարար լինել կողմերի համար:

Փետրվարի վերջին նախագահ Սարգսյանի՝ Ռուսաստան կատարած այցից հետո հայտարարվեց, որ 2011-ին Հայաստանում գազի սակագները սպառողների համար չեն փոխվի: Այդ հայտարարությունից պարզ էր, թե արդյոք Հայաստանը կարողացել է ռուսական գազի ավելի ցածր սակագնի շուրջ պայմանավորվածության գալ, քանի որ Հայաստանում ռուսական գազը բնակչությանն իրացվում է ձեռքբերվող գնից գրեթե կրկնակի թանկ: Բայցևայնպես, ռուսական գազի գինը չբարձրացավ:

Հոկտեմբերին Հայաստանի նախագահը Մոսկվայում էր պետական այցով:

Ակնկալվում է, որ Հայաստան-Ռուսաստան ապրանքաշրջանառությունը, ինչպես նախորդ տարի, 2011 թ. կհասնի մեկ միլիարդ դոլարի:

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈՍԱՆՔՆԵՐ

Նոր ատոմակայան կառուցելու հարցում Ռուսաստանը, որն արդեն ընտրվել էր հիմնական կապալառու, այժմ միայն մեկ հինգերորդ մասով է առաջարկում մասնակցել շուրջ հինգ միլիարդ դոլար արժողությամբ նախագծին:

Մյուս կողմից, արդեն պարզ է, որ Հայաստանում նոր ատոմակայան կառուցելու նախագահ Սարգսյանի 2008 թ. խոստումը անորոշ ժամանակով հետաձգվում է: Փոխարենը, երկարաձգվելու է գործող ատոմակայանի շահագործումը, որը պիտի փակվեր 2016 թ.:

Ավելի քան 10 տարի է, որ **Եվրոպական Միության** համար Մեծամորի ատոմակայանի փակումը Հայաստանի հետ հարաբերություններում առաջնահերթություն է: Հայաստանը, սակայն, հրաժարվում է դադարեցնել գործող էներգաբլոկը, քանի դեռ չկան փոխարինող համապատասխան հզորության վստահելի էներգիայի աղբյուրներ:

2011 թ. երկրորդ կեսին Եվրոպական Միության նախագահությունը ստանձնելուց հետո Լեհաստանի նախագահը հուլիսին տարածաշրջանային այց կատարեց: Սեպտեմբերին Վարշավայում տեղի ունեցավ Արևելյան գործընկերության գագաթաժողովը, որը մեկ անգամ ևս ընդգծեց ԵՄ-Հայաստան ստոցիացման պայմանագրի պատրաստման հաջող ընթացքը և ազատ առևտրի գոտու ու արտոնագրերի տրամադրման դյուրինացման ակնկալվող բանակցությունները: Տարվա ընթացքում, որպես տարածաշրջանային այցերի հանգրվան, Հայաստանում եղան Եվրոպական խորհրդարանի նախագահ Եժի Բուզեկը՝ ապրիլին և Եվրոպական Միության արտաքին հարաբերությունների և անվտանգության քաղաքականության բարձր ներկայացուցիչ Զեթրին Էշթոնը նոյեմբերին:

2011 թ. տեղի ունեցան հայ-ֆրանսիական բարձր մակարդակի փոխայցեր: Դա ոչ այնքան Ֆրանսիայի արտաքին քաղաքականության մեջ Հայաստանի կարևորության ցուցիչն էր, որքան առաջիկայում Ֆրանսիայում կայանալիք նախագահական ընտրություններում ֆրանսահայերի քվեները ստանալու անկնալիք:

Սարգսյանը Փարիզ այցելեց սեպտեմբերին, իսկ կարճ ժամանակ անց երկօրյա պետական այցով Երևան ժամանեց Սարկոզին՝ շատ կարճ կանգառներ ունենալով նաև Բաքվում և Թբիլիսիում: Սարկոզիի՝ Հայաստան այցից գրեթե անմիջապես հետո Երևան ժամանեց նաև Փարիզի քաղաքապետ Բերտրան Դելանտեն, որը 2012 թ. Ֆրանսիայի նախագահական ընտրություններից լուրջ ակնկալիքներ ունեցող սոցիալիստական կուսակցությունից է:

Մարտին Լեռնային Ղարաբաղի նախագահն այցելեց Ֆրանսիայի Ազգային ժողով, իսկ օգոստոսին Ֆրանսիայի խորհրդարանական պատվիրակությունը հայամետ հայտարարություններ արեց Ստեփանակերտ այցի ընթացքում:

2011 թ. Հայաստանը ռազմական համագործակցության քայլեր արեց Լեհաստանի և Գերմանիայի հետ: Հայտարարվեց Լեհաստանի հետ համատեղ ռազմական սարքավորումների արտադրություն սկսելու ծրագրերի մասին, իսկ Գերմանիայի հետ համագործակցության շեշտը դրվեց միջազգային խաղաղապահների վերապատրաստման, ինչպես նաև Հայաստանի բանակում օրենքի գերակայության հաստատմանը օժանդակելու վրա:

Հայաստանը այս տարի իր խաղաղապահների թիվը Աֆղանստանում հասցրեց 126-ի, որոնք

ՓՈՓՈՒՎՈՂ ՀՈՍԱՆՔՆԵՐ

ծառայում են գերմանական զորամասի կազմում: Նախքան 2008-ը Իրաքում տեղակայված հայ խաղաղապահները լեհական բազմազգ զորամասի կազմում էին: Հայ խաղաղապահները շարունակում են իրենց առաքելությունը նաև Կոսովոյում՝ հունական գումարտակի կազմում:

Ի տարբերություն Ռուսաստանի և հավանաբար ԱՄՆ-ի օրինակին հետևելով՝ Գերմանիան ու Եվրոպական Միության այլ պետություններ մինչև այժմ խուսափել են Ադրբեջանին կամ Հայաստանին մեծաքանակ զենք-զինամթերք վաճառելուց: Սա նպաստեց, որպեսզի հետաձգվի Ադրբեջանին թուրքական արտադրության ինքնաշարժ հաուբիցների վաճառքը, որոնցում օգտագործվում են գերմանա-ամերիկյան շարժիչներ:

Միացյալ Նահանգները շարունակեց Հայաստանի և Ադրբեջանի հետ ռազմական համագործակցության սահմանափակումները, բավարարվելով միայն զինվորականների կրթական և խաղաղապահ ուժերի վերապատրաստումը կազմակերպելու ծրագրերով:

Չնայած Միացյալ Նահանգները հետաքրքրություն էր դրսևորել Ադրբեջանի ծովային պաշտպանությանը օժանդակելուն՝ հակակշռելով Իրանին, ամերիկացիները մերժեցին զենք վաճառելու 2006-ից շարունակվող Բաքվի խնդրանքները: Միևնույն ժամանակ, ամերիկյան Էքսիմբանկը համաձայնեց երաշխավորել Ադրբեջանի համար ամերիկյան արբանյակային տեխնոլոգիաների ձեռքբերումը, որոնք կարող են երկակի օգտագործման, խաղաղ և ռազմական, նշանակություն ունենալ:

Հուլիսին ԱՄՆ-ը և Հայաստանը վերսկսեցին անվտանգության հարցերով բանակցությունները, որ առկախվել էին

տարիներ առաջ, իսկ սեպտեմբերին տեղի ունեցավ ԱՄՆ-Հայաստան աշխատանքային խմբի ամենամյա հանդիպումը, որի ուշադրության կենտրոնում էին ԱՄՆ-ի օժանդակության և տնտեսական երկկողմ խնդիրները:

Նոր ատոմակայան կառուցելու հարցում Ռուսաստանը, որն արդեն ընտրվել էր հիմնական կապալառու, այժմ միայն մեկ հինգերորդ մասով է առաջարկում մասնակցել շուրջ հինգ միլիարդ դոլար արժողությամբ նախագծին:

Հազարամյակի մարտահրավեր ծրագիրը տարվա կեսերին փակվեց, որովհետև Հայաստանը չէր համապատասխանում օրենքի գերակայության և արդյունավետ կառավարման ծրագրի չափանիշներին:

Օգոստոսին ԱՄՆ-ի Կոնգրեսը, պատճառաբանելով արտաքին օգնության բյուջեի կրճատումները, 2012 թ. Լեռնային Ղարաբաղի համար օժանդակություն չնախատեսեց՝ այն թողնելով պետքարտուղարության հայեցողությանը: 1998 թ. ի վեր ամեն տարի ԱՄՆ-ի կառավարությունը ուղղակի օգնություն էր տրամադրում Լեռնային Ղարաբաղին: Ադրբեջանին և մի շարք այլ երկրներին ամենամյա հատկացվող գումարները ևս կրճատվեցին: Հայաստանի համար նախատեսվում է 40 միլիոն դոլար, մոտավորապես այնքան, որքան 2011-ին էր:

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈՍԱՆՔՆԵՐ

ԱՄՆ-Հայաստան ապրանքաշրջանառությունը 2010 թ. կազմեց 190 միլիոն դոլար, իսկ 2011 թ. ութ ամիսներին 125 միլիոն:

2011 թ. հայ-ամերիկյան բարձր մակարդակի շփումները սահմանափակ էին: Սեպտեմբերին նախագահ Սարգսյանի այցելությունները Նյու Յորք և Լոս Անջելես կենտրոնացան համայնքային իրադարձությունների, մասնավորապես՝ Հայաստանի անկախության քսանամյակի միջոցառումների վրա: ԱՄՆ-ի վարչակազմի բարձրաստիճան պաշտոնյաների հետ հանդիպումների մասին հաղորդագրություններ չեղան:

Հազարամյակի մարտահրավեր ծրագիրը տարվա կեսերին փակվեց, որովհետև Հայաստանը չէր համապատասխանում օրենքի գերակայության և արդյունավետ կառավարման՝ ծրագրի չափանիշներին:

Սարգսյանը ԱՄՆ-ի պետքարտուղարի հետ տարեսկզբին հանդիպեց Մյունխենի անվտանգության հարցերով խորհրդաժողովում, ինչպես նաև՝ մայիսին Վաշինգտոնում:

Պետքարտուղարի տեղակալներ Ջեյմս Ստայնբերգը և նրան փոխարինած Վիլյամ Բըրնսը այցելեցին Հայաստան, ինչպես նաև Վրաստան ու Ադրբեջան՝ համապատասխանաբար փետրվարին և հոկտեմբերին: Այդ այցերի ընթացքում

հիմնականում ուշադրության կենտրոնում տարածաշրջանային անվտանգության, Հայաստանի ներքաղաքական վիճակի և հայ-ամերիկյան տնտեսական կապերի ընդլայնման հարցերն էին:

ՀԵՌԱՆԿԱՐ

2012-ին նախագահական ընտրություններ են լինելու Ռուսաստանում, Ֆրանսիայում և ԱՄՆ-ում, որոնց արդյունքները կարող են փոխել այդ երկրների ներքին գերակայությունները և հարաբերություններն իրար հետ: Այս երեք համաշխարհային ուժային կենտրոնները նաև ղարաբաղյան հակամարտության միջնորդներն են Մինսկի խմբի շրջանակում, և այդ գործընթացում նրանց ներգրավվածության բնույթն ու ուղղությունը կարող են փոխվել: Այդ երեքից ամենաանմիջական մասնակցություն կշարունակի ունենալ Ռուսաստանն իր աշխարհագրական մոտիկության և ազդեցության շնորհիվ:

Ռուս-ամերիկյան հարաբերություններում իրական վերաբեռնում չեղավ, իսկ 2011 թ. դեկտեմբերին Ռուսաստանի խորհրդարանական ընտրություններին տրված ամերիկյան որակումները սրություն հաղորդեցին այդ հարաբերություններին: 2012 թ. մարտին Ռուսաստանի նախագահական ընտրություններում Պուտինի հաղթանակը, ինչը խիստ հավանական է, ավելի կսրի Մոսկվա-Վաշինգտոն հարաբերությունները՝ հաշվի առնելով այն ավանդույթը, որ ամերիկացիները խիստ են քննադատում ընտրություններում տեղ գտած կեղծիքները: Բացի այդ՝ Պուտինը, ի տարբերություն Ռուսաստանի նախկին և գործող նախագահների, ամերիկացիների հանդեպ օգտագործում է կոշտ բառապաշար:

ՓՈՓՈԽՎՈՂ ԶՈՍԱՆՔՆԵՐ

Հայաստանի վրա անմիջական ազդեցություն գործող Ռուսաստան-Վրաստան հարաբերություններում բարելավման հեռանկարները քիչ հավանական են, թեև 2011 թ. երկրորդ կիսամյակում Շվեյցարիայի միջնորդությամբ Մոսկվա-Թբիլիսի երկխոսությունը բերեց նրան, որ Վրաստանն այլևս խոչընդոտներ չստեղծեց Ռուսաստանի՝ Առևտրի համաշխարհային կազմակերպությանը անդամակցելու գործընթացին: Սակայն կրկին Պոտինի վերադարձը նախագահի պաշտոնին որևէ հույս չի ներշնչում ռուս-վրացական հարաբերությունները դրական հուն տեղափոխելու իմաստով՝ հաշվի առնելով նրա և Սաակաշվիլիի փոխադարձ ատելությունը:

Վրաստանի՝ ՆԱՏՕ-ին անդամակցության հեռանկարը ևս լավատեսական հույսեր չի ներշնչում առաջիկա տարիների համար: Նախ Վրաստանը դեռ հեռու է Դաշինքին անդամակցելու չափանիշներից, երկրորդ՝ ՆԱՏՕ-ի եվրոպական անդամները, որոնք լավ հարաբերություններ ունեն Ռուսաստանի հետ, չեն շտապում Դաշինքի կազմում Վրաստանին ընդգրկել՝ հաշվի առնելով Մոսկվայի կեցվածքը:

Հայ-թուրքական հարաբերություններում ևս լավատեսության հիմքեր չկան: Անկարան շարունակում է պնդել երեք նախապայմանները, որոնցից հրապարակավ առաջ է քաշում մեկը՝ առաջընթացը դարաբաղյան բանակցություններում, որը կբավարարի Ադրբեջանի նվազագույն ակնկալիքները: Իսկ դարաբաղյան բանակցություններում 2012 թ. առաջընթացի հույսեր չկան՝ հաշվի առնելով, որ կողմերը հեռու են սեղանին դրված փաստաթուղթը որպես բանակցային հիմք ընդունելուց:

Ղարաբաղա-ադրբեջանական շփման գծի երկայնքով լարվածությունը

կպահպանվի՝ հրադադարի խախտումներով և դիպուկահարների ակտիվ գործողություններով: Ադրբեջանը շարունակելու է անտեսել ԵԱՀԿ-ի՝ շփման գծի առաջապահ դիրքերից դիպուկահարներին հետ քաշելու հորդորները: Շփման գծի երկայնքով լարվածությունը, սակայն, ռազմական լայնածավալ գործողությունների չի տանի: ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամակցությունը Ադրբեջանի համար, դիվանագիտական հնարավորություններ ընձեռելուց բացի, ունի զսպող ուժ:

Արաբական գարունը Աֆրիկայի հյուսիսից՝ Մադրեբից, շարժվում է դեպի Միջին Արևելք: Միջազգային ուշադրության կենտրոնում Սիրիան է և նրա ռազմավարական դաշնակից Իրանը: 2012 թ. Սիրիայի և Իրանի շուրջ միջազգային ձնշումները կավելանան: Իրանը միջազգային ուշադրություն է գրավելու նաև այն պատճառով, որ 2012 թ. այնտեղ տեղի կունենան խորհրդարանական ընտրություններ:

ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

Հայաստանի տարածաշրջանային քաղաքականության մեջ բացակայում է գաղափարական խարիսխը: Հարևանների և դաշնակիցների հետ հարաբերություններ կառուցելու իրենց գործողություններին Հայաստանի իշխանությունները մեկնաբանություններ չեն տալիս: Որպես արդյունք՝ ուրիշներն են մեկնաբանում Հայաստանի քաղաքականությունը: Այդ մեկնաբանությունները հազվադեպ են լինում Հայաստանի օգտին: Հայաստանը պետք է նախաձեռնությունը հետ վերցնի, որպեսզի կարողանա իր ազգային քաղաքականությունն ավելի հստակ հասցնել միջազգային հանրությանը:

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈՍԱՆՔՆԵՐ

Հայաստանը միջազգային ասպարեզում պետք է կրկնապատկի ջանքերը՝ հակակշռելու Ադրբեջանի նոր հնարավորությունները, որպես ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամ: Ավելին՝ Հայաստանը պետք է դիվանագիտական ճնշումներ գործադրի, որպեսզի Բաքուն նվազեցնի ռազմական հռետորաբանությունը, դադարեցնի ագրեսիան շփման գծում և դարաբաղյան բանակցություններում կառուցողական ներգրավում ունենա:

Լեռնային Ղարաբաղի բանակցային փաստաթուղթը անորոշ վիճակում է: Մինչ Ադրբեջանը շարունակում է աղավաղել այդ փաստաթղթի նպատակային մոտեցումները, Հայաստանը պետք է փորձի հստակություն մտցնել, թե ո՞ր փաստաթուղթն է սեղանի վրա, և շեշտադրի ու ամրագրի հանրաքվեի անցկացուման գաղափարը: Հայաստանը պետք է հանրաքվեի կետը ներկայացնի որպես ինքնորոշման սկզբունքն ամրագրելու ոչ սպառնալի միջոց և գործիք:

Հայ-թուրքական հարաբերությունների լճացած իրավիճակը աշխատում է Թուրքիայի օգտին: 2012 թ. առաջին ամիսների ընթացքում Հայաստանը պետք է լուրջ քայլերի դիմի և փորձի Թուրքիային վերադարձնել գործընթացի նախկին հուն: Դրա ամենաարդյունավետ ճանապարհը հայ-թուրքական արձանագրությունների հետ կապված որոշակի քայլերի դիմելն է, ընդհուպ դրանց հետևանքը խորհրդարանից:

Եվրոպական Միության հետ ասոցիացման համաձայնագրի քննարկումները լավ հնարավորություն են հրապարակայնորեն վերահաստատելու Եվրոպայի նկատմամբ Հայաստանի քաղաքականությունը: Առավել խորը եվրոպական ինտեգրացիան պետք

է դառնա մեր առօրյա հրամայականը: Ճիշտ մատուցելու դեպքում եվրոպական ինտեգրացիան չի ընկալվի որպես հակադրություն հայ-ռուսական հարաբերություններին: Հայաստանի եվրոպական ձգտումները պետք է լսելի դառնան չափավորված և ընկալելի հայտարարություններով՝ եվրոպական գործընթացներին ցույց տալով նվիրում, որոնք ավելին են, քան մուտքի արտոնագրային ռեժիմի դյուրինացումը: Որպեսզի այդ նվիրումը հավատ ներշնչի, Հայաստանի առաջնորդները պետք է հստակ քաղաքական քայլեր կատարեն, որոնք համահունչ են եվրոպական չափանիշներին՝ մեկնակետ ընդունելով լավ ընտրությունները:

Եվրոպական ինտեգրացիայի հարցում Հայաստանը Վրաստանից հետ է մնում: Հայաստանի համար անգամ այս անցանկալի վիճակը պետք է օգտագործվի՝ առավել խորացնելու հարաբերությունները Վրաստանի հետ՝ զարգացնելով ընդհանուր ծրագրեր, որոնք կնպաստեն ոչ միայն բարիդրացիությանը, այլև երկու երկրների ինտեգրմանը:

ԳԱՐՆԱՆ ԱԿՆԿԱԼԻՔՈՎ

2011 թ. ընթացքում քաղաքական իրավիճակը Հայաստանում մնում էր լարված, սակայն հանդարտ: Նախագահ Սարգսյանը շարունակեց ամրապնդել իր իշխանությունը 2012 թ. խորհրդարանական ընտրությունների նախաշեմին, որոնք որոշիչ ազդեցություն կունենան 2013 թ. նախագահական ընտրությունների վրա:

Սարգսյանը հմտորեն չեզոքացրեց հանրապետության առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի գլխավորած Հայ ազգային կոնգրեսի (ՀԱԿ) կողմից իշխանությանը սպառնացող մարտահրավերները: Ընդդիմադիր մյուս խոշոր կուսակցությունները՝ Հայ հեղափոխական դաշնակցությունը և Ժառանգությունը, իշխանությունների համար լուրջ վտանգ չէին ներկայացնում: Այս երկու կուսակցություններն ավելի սթափ գնահատեցին ստեղծված իրավիճակը և լռելյայն ընդունեցին, որ և՛ նախագահը և՛ Ազգային ժողովը կկառավարեն մինչև Սահմանադրությամբ նախատեսված ժամկետների ավարտը:

ՀԱԿ-ի ղեկավարները խուսափեցին իշխանությունների հետ առձակատումից և բավարարվեցին Երևանի Ազատության հրապարակում պարբերաբար ցույցեր կազմակերպելով՝ հակառակ իրենց իսկ հրապարակավ հնչեցրած սպառնալիքների, թե Եգիպտոսի և Թունիսի հեղափոխությունների օրինակով իշխանափոխություն են իրականացնելու: Ակնհայտ դարձավ, որ Տեր-Պետրոսյանը

պատրաստ է իշխանությունների հետ գործակցության եզրեր փնտրել: Երկրի նախագահն իր հերթին գնաց զիջումների և խոստումներ տվեց:

Այս փոխադարձ քայլերը վերաճեցին երկխոսության իշխանությունների և ընդդիմադիր ՀԱԿ-ի ներկայացուցիչների միջև: Կարճաժամկետ և անավարտ այդ նախաձեռնության հիմնական շահառուն երկրի նախագահն էր: Սարգսյանին հաջողվեց միավորներ շահել Արևմուտքում, իսկ երկրի ներսում խուսափել ավելորդ զիջումներից, որոնք կարող էին թուլության նշան ընկալվել:

Արևմտյան կառավարությունները և Եվրոպայի խորհուրդը դրվատանքի խոսքերով արձագանքեցին իշխանություն-ընդդիմություն երկխոսությանը, թեև այն չլուծեց երկրում քաղաքական լարվածություն հարուցող հիմնական խնդիրը՝ ազատ ու արդար ընտրությունների հարցը: Հետևաբար, չփարատվեց 2008 թ. ընտրությունների հանդեպ շարունակվող անվստահությունը: Ավելի ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու իշխանությունների խոստումները թե՛ ընդդիմությունը և թե՛ քաղաքացիական հասարակության շատ ներկայացուցիչներ թերահավատորեն ընդունեցին: Ուստի, հասարակության մեջ առկա է մտավախություն, որ համապետական հաջորդ ընտրությունները, որոնք պետք է տեղի ունենան 2012 և 2013 թթ., կարող են ավարտվել քաղաքական ճգնաժամով, ինչպես եղավ 2008 թ.:

Այդ մտավախությունը հիմնավոր է, եթե հաշվի առնվեն զանազան ուսումնասիրություններ՝ սոցիալական համախմբման իշխանությունների և հասարակության միջև փոխադարձ վստահության (կամ անվստահության) ինչպես նաև ժողովրդի հույսերի ու մտահոգությունների վերաբերյալ:

ԳԱՐՆԱՆ ԱՎԵԿԱԼԻՔՈՎ

Տարվա սկզբից ի հայտ եկան նշաններ Հայաստանի իշխանական կոալիցիայի ներսում աճող տարածայնությունների վերաբերյալ: 2008 թ. նախագահական ընտրություններից հետո ձևավորված կոալիցիան փաստացի ղեկավարվում է երկրի նախագահի կուսակցության՝ Հայաստանի հանրապետական կուսակցության (ՀՀԿ) կողմից: Կոալիցիայի երկրորդ խոշոր կուսակցությունը՝ Բարգավաճ Հայաստանը (ԲՀԿ), հետզհետե փորձում էր դառնալ քաղաքական ավելի անկախ և ինքնուրույն ուժ: ԲՀԿ-ի ներկայացուցիչները տարբեր առիթներով հայտարարեցին, որ Ազգային ժողովի պատգամավոր և երկրի խոշորագույն գործարարներից մեկի՝ Գագիկ Ծառուկյանի ղեկավարած կուսակցությունը առանձին է մասնակցելու 2012 թ. խորհրդարանական ընտրություններին և ձգտելու է խորհրդարանում մեծամասնության հասնել:

Արևմտյան կառավարությունները և Եվրոպայի խորհուրդը դրվատանքի խոսքերով արձագանքեցին իշխանություն-ընդդիմություն երկխոսությանը:

Հակառակ Հանրապետական կուսակցության և անձամբ երկրի նախագահի աճող ձնշումների՝ ԲՀԿ-ն ամիսներ շարունակ խուսափում էր պաշտոնապես հայտարարել, որ նախագահական հաջորդ ընտրություններում սատարելու է Սարգսյանի առաջադրումը: Փետրվարին Ծառուկյանը, ի վերջո տեղի տալով ձնշումներին,

Հանրապետական և կոալիցիայի երրորդ անդամ Օրինաց երկիր կուսակցությունների հետ ստորագրեց հուշագիր, համաձայն որի՝ քաղաքական կոալիցիան 2013 թ. նախագահական ընտրություններում հանդես կգա միասնական թեկնածուով՝ ի դեմս գործող նախագահի: Ավելին՝ կոալիցիոն կուսակցությունները հայտարարեցին, որ «միասնական են և նպատակ չունեն 2012 թ. խորհրդարանական ընտրություններում իրենց քաղաքական կշիռն ավելացնել միմյանց դեմ պայքար ծավալելու և կոալիցիայի ներսում ուժերի հարաբերակցությունը փոխելու հաշվին»:

Սա, անշուշտ, ուղղակիորեն հակասում էր ԲՀԿ-ի հավակնություններին՝ շահել ավելի մեծ թվով մանդատներ, նույնիսկ եթե դա լինի Հանրապետականի հաշվին: Սակայն տարեվերջին, կուսակցությունը և նրա ղեկավարը վերստին հայտարարեցին, որ խորհրդարանական ընտրություններին կմասնակցեն առանձին և տեղերի համար կպայքարեն Հանրապետական կուսակցության հետ: Հետևեցին տարատեսակ ձնշումներ Ծառուկյանի և նրա աջակիցների նկատմամբ, ընդհուպ մինչև հավակնոտ գործարարին մոտ կանգնած անձանց կալանքը: Արդյունքում, հանրությունը սկսեց Ծառուկյանի ղեկավարած կուսակցությունն ընկալել եթե ոչ որպես ընդդիմություն, ապա առնվազն ստեղծված ներքաղաքական դասավորումների այլընտրանք:

Փետրվարին, առաջին նախագահ Տեր-Պետրոսյանի ՀԱԿ-ը նախաձեռնեց իշխանությունների դեմ ցույցերի նոր արշավ: Կոնգրեսը և նրա աջակիցներից շատերը, ովքեր մասնակցում էին 2011 թ. գարնանը կազմակերպված բազմահազարանոց հանրահավաքներին, ակնհայտորեն ոգևորված էին Թունիսի և Եգիպտոսի ժողովրդական ապստամբությունների

ԳԱՐՆԱՆ ԱԿՆԿԱԼԻՔՈՎ

հաջողություններով: Տեր-Պետրոսյանը իշխանություններին հորդորեց արտահերթ նախագահական և խորհրդարանական ընտրություններ անցկացնել՝ հակառակ դեպքում իշխանություններին սպառնալով կրկնել արաբական երկրների սցենարը:

Մարտի 1-ի հանրահավաքում, որը նվիրված էր 2008 թ. ընտրություններից հետո տեղի ունեցած ողբերգական դեպքերի տարելիցին, Տեր-Պետրոսյանը ներկայացրեց քաղաքական ու սոցիալ-տնտեսական 15 կետերից կազմված պահանջների ցուցակ, որը Սարգսյանը պետք է կատարեր, եթե ցանկանում էր, որ ՀԱԿ-ը համաձայնի երկխոսություն սկսել: Սակայն հետագայում Տեր-Պետրոսյանը մեղմացրեց հռետորաբանությունը՝ հայտարարելով, որ իր ղեկավարած քաղաքական ուժը պատրաստ է բանակցություններ սկսել, եթե կատարվեն երեք առանցքային պայմաններ՝ անհապաղ ազատ արձակվեն քաղաքատարկյալները, Ազատության հրապարակում հանրահավաքներ անցկացնելու հնարավորություն ընձեռվի և մարտի 1-ի սպանությունները բացահայտելու վերաբերյալ պաշտոնական հավաստիացում տրվի:

Սարգսյանը, փաստորեն, ընդունեց բոլոր երեք նախապայմանները: Ավելի ուշ՝ մարտին, ՀԱԿ-ը երեք տարիների ընթացքում առաջին անգամ անարգել հազարավոր կողմնակիցներ հավաքեց Ազատության հրապարակում, չնայած, ինչպես նախկինում, չկար քաղաքապետարանի արտոնությունը:

Ապրիլի վերջին ՀԱԿ-ը հայտարարեց, որ վերականգնված է Ազատության հրապարակում հավաքներ անցկացնելու՝ քաղաքացիների երեք տարուց ի վեր ոտնահարված իրավունքը, և իշխանությունը վերջնականապես հրաժարվել է այդ հրապարակը քաղաքական միջոցառումների համար արգելված տարածքների շարքը

դասելու մտադրությունից: Մեջբերելով նախագահ Սարգսյանի՝ նախօրեին արված հավաստիացումը մարտի 1-ի դեպքերի անաչառ քննություն կատարելու վերաբերյալ, Լևոն Տեր-Պետրոսյանն ընդգծեց, որ դա իրավապահ մարմիններին իջեցված ուղղակի ցուցում-հանձնարարական է նշանակում:

Տարվա սկզբից ի հայտ եկան նշաններ Հայաստանի իշխանական կռալիցիայի ներսում աճող տարածայնությունների վերաբերյալ:

Սարգսյանը նախաձեռնեց համընդհանուր համաներում, որի արդյունքում զանազան հանցագործությունների համար դատապարտված շուրջ 1000 մարդ ազատ արձակվեց: ՀԱԿ-ի չորս առանցքային գործիչներ, ովքեր բանտում էին վիճելի մեղադրանքներով, ևս ազատ արձակվեցին, այդ թվում՝ ընդդիմադիր «Հայկական ժամանակ» թերթի գլխավոր խմբագիր Նիկոլ Փաշինյանը և Ազգային ժողովի նախկին պատգամավոր Սասուն Միքայելյանը: Համաներումը, որ կիրառվելու էր մայիսի 27-ից մինչև սեպտեմբերի 21-ը, պաշտոնապես նվիրված էր Հայաստանի անկախության 20-րդ տարեդարձին:

Մայիսի վերջին Ազատության հրապարակում կայացած մեկ այլ հանրահավաքի ժամանակ Տեր-Պետրոսյանն իշխանությունների զիջումները որակեց իր մեծագույն հաղթանակը 2008-ից ի վեր և նշեց, որ ստեղծված նոր քաղաքական իրավիճակը իշխանություններին և ընդդիմությանը

ԵԳԱՐՆԱՆ ԱՎՆԿԱԼԻՔՈՎ

հնարավորություն է տալիս փոխըմբռնման հասնել երկխոսության միջոցով:

Նախապես ակնկալվում էր, որ նման երկխոսությունը կարող է լավագույն դեպքում երկրում բարելավել ներքաղաքական իրավիճակը, բարձրացնել Հայաստանի միջազգային վարկը և հավելյալ լույս սփռել Հայաստանում տեղ գտած հետընտրական անկայունության դրդապատճառների վրա: Երկխոսությունը չէր կարող վերացնել բոլոր գործոնները, սակայն հավանաբար կարող էր մեղմացնել 2008 թ. հետո առաջացած անջրպետը իշխանության և հասարակության միջև, ինչպես նաև՝ հասարակության ներսում:

Ընդդիմադիր այլ ուժեր, ինչպես նաև որոշ մեկնաբաններ պնդում էին, որ Տեր-Պետրոսյանը գործարքի մեջ է մտել Սարգսյանի հետ, ինչի արդյունքում Սարգսյանը կկարողանա առնվազն ավարտին հասցնել իր հնգամյա պաշտոնավարումը 2013 թ.:

Այդուհանդերձ, ընդդիմադիր այլ ուժեր, ինչպես նաև որոշ մեկնաբաններ պնդում էին, որ Տեր-Պետրոսյանը գործարքի մեջ է մտել Սարգսյանի հետ, ինչի արդյունքում Սարգսյանը կկարողանա առնվազն ավարտին հասցնել իր հնգամյա պաշտոնավարումը 2013 թ.: Նշվում էր նաև, որ ՀԱԿ-ի առաջնորդը իշխանություններից ակնկալում է հավաստիացումներ, որ հաջորդ գումարման

Ազգային ժողովում ՀԱԿ-ը տպավորիչ ներկայություն կունենա: Տեր-Պետրոսյանը հերքեց նման մեկնաբանությունները՝ պնդելով, որ իշխող կոալիցիայի հետ բանակցություններում ՀԱԿ-ը պահանջելու է արտահերթ ընտրություններ անցկացնել: Կոալիցիոն երեք կուսակցությունների և ՀԱԿ-ի ներկայացուցիչները բանակցությունների հինգ փուլ ունեցան՝ առաջին հերթին կենտրոնանալով արտահերթ ընտրություններ կազմակերպելու ՀԱԿ-ի պահանջի վրա:

Քննարկումները կասեցվեցին, երբ ՀԱԿ-ը դադարեցրեց երկխոսությունը՝ պատճառաբանելով ՀԱԿ-ի համակիր մի երիտասարդի ձերբակալությունը: Վերջինս ՀԱԿ-ի երիտասարդական թևի վեց այլ անդամների հետ կալանքի տակ վերցվեց Երևանի կենտրոնում օգոստոսին ոստիկանության հետ չպարզված և վիճելի հանգամանքներում տեղի ունեցած քաշքշուկի արդյունքում: Ի տարբերություն իր ընկերների, ոստիկանի վրա հարձակման մեջ մեղադրվող այդ ակտիվիստը, դատավարությունից առաջ ազատ չարձակվեց և մինչև տարեվերջ մնում էր կալանքի տակ:

Տեր-Պետրոսյանը սեպտեմբերին վերստին հասկացրեց, որ դեմ է «հեղափոխություն կամ ապստամբություն» իրականացնելու գաղափարին և, որպես Սարգսյանի վարչակազմի հետ «ողջամիտ փոխզիջման» մաս, փաստացի հետ կանգնեց արտահերթ ընտրությունների պահանջից:

Այսպիսով՝ մեկ տարի շարունակ նշաձողը բարձրացնելուց և պահանջներ ներկայացնելուց հետո Տեր-Պետրոսյանը հրաժարվեց իր գլխավոր՝ արտահերթ ընտրություններ անցկացնելու պահանջից և դադարեցրեց երկխոսությունը: Հաջորդ հանրահավաքի ժամանակ նա զգուշորեն համագործակցության առաջարկ արեց Բարգավաճ Հայաստան

ԳԱՐՆԱՆ ԱԿՆԿԱԼԻՔՈՎ

կուսակցությանը՝ ողջունելով վերջինիս որոշումը՝ մարտահրավեր նետել իշխող Հանրապետական կուսակցությանը, դա որակելով դրական ներդրում արդար ընտրությունների գործընթացին:

Ոստիկանությունը ՀԱԿ-ի կազմակերպած հանրահավաքների և ցույցերի ընթացքում քաղաքացիների հանդեպ ավելի հանդուրժողական էր, քան նախկինում: Երբ աշնանը ՀԱԿ-ը Ազատության հրապարակում վրանային ճամբար կազմակերպեց, ոստիկանությունը հայտարարեց, որ այն անօրինական է և այդ մասին պարբերաբար տեղեկացնում էր մասնակիցներին: Ոստիկանությունը պարզաբանեց, որ աջակցում էր հավաքի անցկացմանը, քանի որ «այն խաղաղ բնույթ ուներ»:

Իր հերթին Սարգսյանը գովասանքի արժանացավ Եվրոպայում: Եվրոպական Միությունը և Եվրոպայի խորհուրդը ողջունեցին երկխոսությունը, չնայած այն արդեն սառեցված էր: Հոկտեմբերին Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը (ԵԽՏՎ) բանաձև ընդունեց և ողջունեց նախագահի քայլերը, հայտարարելով, որ «2008 թ. մարտյան իրադարձությունների էջը վերջապես կարելի է փակված համարել»: ՀԱԿ-ը և Ժառանգությունը քննադատեցին այդ եզրակացությունը՝ ԵԽՏՎ-ին մեղադրելով կողմնակալության մեջ:

Սակայն ԵԽՏՎ բանաձևում շեշտվում էր նաև, որ 2008 թ. մարտյան իրադարձությունների կրկնությունից խուսափելու համար անհրաժեշտ են «իրական ժողովրդավարական խորհրդարանական ընտրություններ»:

Սարգսյանը խոստացավ անել հնարավորը, որպեսզի 2012 թ. ընտրություններն անցնեն պատշաճ ձևով: Նա վկայակոչեց

Հայաստանի ընտրական օրենսգրքում 2011 թ. մայիսին արված փոփոխությունները, որոնք հիմնականում արժանացել էին Եվրոպայի խորհրդի փորձագետների հավանությանը:

**Ընդդիմությունը
պնդում է, քանի դեռ
իշխանությունների
առջև կանգնած է
իշխանությունը կորցնելու
վտանգը, նրանք ազատ և
արդար ընտրություններ
անցկացնելու անհրաժեշտ
քաղաքական կամք չեն
դրսևորի:**

Բոլոր երեք ընդիմադիր ուժերը՝ ՀԱԿ-ը, Դաշնակցությունը և Ժառանգությունը, լուրջ ուշադրություն չդարձրեցին ո՛չ նախագահի խոստումներին և ո՛չ էլ ընտրական օրենսգրքի փոփոխություններին: Ընդդիմության գլխավոր փաստարկն այն է, որ Հայաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովում և ընտրատարածքային հանձնաժողովներում հիմնականում ընդգրկվել են իշխանամետ անձինք: Սակայն, ամենահետաքրքրականը, ըստ ընդդիմության, փետրվարին ստորագրված կոալիցիոն հուշագիրն է, որն ազդարարում է գալիք խորհրդարանում մանդատների և դրանց բաշխման վերաբերյալ կոալիցիոն կուսակցությունների արդեն իսկ ձեռք բերված համաձայնությունը: Այսօր Ազգային ժողովի 131 տեղերից կոալիցիան ունի առնվազն 100-ը: Սա հաշվի առնելով, ընդդիմությունը պնդում է, որ Սարգսյանը և նրա քաղաքական դաշնակիցները իրականում արդեն կանխորոշել են 2012 թ. խորհրդարանական ընտրությունների

ԳԱՐՆԱՆ ԱՎՆԿԱԼԻՔՈՎ

արդյունքները, հարցականի տակ դնելով ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու իրենց հավաստիացումները: Քանի դեռ իշխանությունների առջև կանգնած է իշխանությունը կորցնելու վտանգը, նրանք ազատ և արդար ընտրություններ անցկացնելու անհրաժեշտ քաղաքական կամք չեն դրսևորի:

Հասարակությունը սկսում է կռալիցիայի մաս կազմող ԲՀԿ-ին հետզհետե ընկալել եթե ոչ որպես ընդդիմություն, ապա առնվազն ստեղծված ներքաղաքական դասավորումների այլընտրանք:

Երեք հիմնական ընդդիմադիր կուսակցություններից երկուսը Ազգային ժողովում ունեն ներկայություն: Դաշնակցությունը, որն ունի 16 տեղ, փետրվարին սկսեց «Զվեն ուժ է» արշավը, որի նպատակը ընտրական իրավունքի վերաբերյալ բնակչության իրազեկության բարձրացումն էր: Կուսակցությունը պնդում է, որ բնակչության հետ երկրի ողջ տարածքում ստորագրել է հազարավոր խորհրդանշական «պայմանագրեր»՝ պարտադրելով նրանց մասնակցել գալիք ընտրություններին և չվաճառել իրենց ձայնը: Սեպտեմբերի սկզբին Դաշնակցությունը Գյումրիում կազմակերպեց հանրահավաք, որին մասնակցեցին մի քանի հարյուր աջակիցներ: Կուսակցության առաջնորդները դա որակեցին համընդհանուր ցույցերի սկիզբ, որի նպատակն է «վարչակարգը փոխելու»

հանրային աջակցություն ապահովել: Սակայն դա արվեց առանց հանրապետության նախագահի ուղղակի քննադատության կամ նրա հրաժարականի պահանջի:

Այսպիսով՝ Դաշնակցության դերը շարունակում էր մնալ երկիմաստ՝ հաշվի առնելով կուսակցության զգուշավոր հայտարարությունները և այն իրողությունը, որ 2009 թ. կռալիցիան լքելուց հետո խորհրդարանի հանձնաժողովներից երկուսում Դաշնակցությունը պահեց նախագահությունը: Ընդդիմադիր երրորդ կուսակցությունը՝ Ժառանգությունը, Ազգային ժողովում ունի ընդամենը յոթ մանդատ: Բայց յոթ պատգամավորը բավարարում է, որպեսզի կուսակցությունը կարողանա առաջ քաշել հարցեր, որոնք հրատապ են քաղաքացիական հասարակության համար, ներառյալ բնապահպանական ահազանգերը, ընտանեկան բռնությանը և բանակում հանցավորությանն առնչվող հարցերը:

Մարտին կուսակցության հիմնադիր Ռաֆֆի Հովհաննիսյանը հացադուլ հայտարարեց, որը շարունակվեց 15 օր: Այդ քայլին նա դիմեց, իր խոսքով՝ «հանուն արդարության», Ազատության հրապարակի երկաթյա նստարանին նստած, հանրահավաքների անցկացումն այնտեղ թույլ տալու որոշումից առաջ և հետո: Հովհաննիսյանին տեսակցելու և աջակցելու գնացին հազարավոր մարդիկ, այդ թվում մի շարք քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներ, սակայն ոչ Տեր-Պետրոսյանը:

Հրապարակային այս քայլից ամիսներ անց Հովհաննիսյանը երկարաշունչ ու մանրամասն բաց նամակ հղեց նախագահին, որտեղ նշում էր, թե ինչ քայլեր են անհրաժեշտ ազատ և արդար ընտրություններ անցկացնելու համար: Նախագահը խիստ հակադարձեց՝ հայտարարելով, որ ազատ

ԳԱՐՆԱՆ ԱԿՆԿԱԼԻՔՈՎ

և արդար ընտրությունների գործընթացը վերահսկողության տակ է:

Այսպիսով, քաղաքական կամ անձնական պատճառներով, իրադարձություններով առանձնապես ոչ հարուստ տարվա ընթացքում ՀԱԿ-ը, Դաշնակցությունը և Ժառանգությունը ուժերը միավորելու մի քանի հնարավորություն կորցրին: Հաշվի առնելով այս կուսակցությունների խիստ տարբեր գաղափարական հիմքերը՝ նրանք միմյանց ընտրազանգվածների համար լուրջ վտանգ չեն ներկայացնում. այդուհանդերձ, նրանք փոխադարձ հարձակումներից զերծ մնալու կամ համագործակցության ուղիներ փնտրելու ակներև քայլեր չձեռնարկեցին:

Նրանք բաց թողեցին նույնիսկ տեղական ընտրություններում ստեղծված հնարավորությունը: Տարվա ընթացքում, գրեթե ամեն շաբաթ տարբեր քաղաքներում ու գյուղերում տեղի էին ունենում քաղաքապետների, գյուղապետների կամ ավագանու անդամների ընտրություններ: Դրանցից ամենանշանակալի ընտրությունները կայացան սահմանամերձ Իջևան քաղաքում, որտեղ ԲՀԿ-ի թեկնածուն հաղթեց իշխող ՀՀԿ-ի թեկնածուին, պարզ դարձնելով, որ 2012 թ. ընտրությունները կարող են մրցակցության իրական հնարավորություն ստեղծել: Տարվա ընթացքում տեղական որևէ այլ ընտրությունում ՀՀԿ-ի թեկնածուն չէր պարտվել:

Հավանաբար հենց այս հաղթանակը դրդեց Տեր-Պետրոսյանին և քաղաքական այլ դերակատարների ու դիտորդների մտորելու ուժերի հնարավոր վերաբաշխման մասին: Հասարակությունը սկսում է կոալիցիայի մաս կազմող ԲՀԿ-ին հետզհետե ընկալել եթե ոչ որպես ընդդիմություն, ապա առնվազն ստեղծված ներքաղաքական

դասավորումների այլընտրանք: Եթե ԲՀԿ-ն հասնի հաջողության, դա կլինի ոչ այնքան Ծառուկյան անձի, որքան Ծառուկյանի՝ որպես այլընտրանքի շնորհիվ:

Ստեղծված ներքաղաքական այս խճանկարում հնարավոր է նկատել երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի չերևացող ներգրավվածությունը:

Քաղաքացիական հասարակության ներսում հայտնվեցին նեղ մասնագիտական խմբեր, որոնք մեծ ակտիվություն ցուցաբերեցին որոշ հատուկ հարցերի քննարկման շուրջ:

Տարեսկզբին Քոչարյանը քննադատեց կոալիցիայի նշմարվող երկխոսությունը ՀԱԿ-ի հետ՝ նշելով, որ եթե երկխոսությունն առնչվում է «քաղաքական պայքարի իմիտացիայի չափանիշներին՝ համապատասխան պարզատրման դիմաց, ապա դա ընտրողների թիկունքում կատարվող գործարք է, և այդ գործարքի գինը ժողովուրդն է վճարելու՝ իր առանց այդ էլ սակավ միջոցներից»:

Քոչարյանի այդ հայտարարություններից ակնհայտ դարձավ, որ նրա և նախագահ Սարգսյանի միջև տարածայնություններ կան: Փետրվարին նախկին նախագահը իր դժգոհությունն էր հայտնել գործող իշխանություններից, երբ հրապարակավ սատարեց Ծառուկյանին՝ Հանրապետական կուսակցության հետ նրա առաջին վեճի ժամանակ: Անակնկալ կերպով, Քոչարյանն ինքը դարձավ այդ վեճի մաս,

ԳԱՐՆԱՆ ԱՎՆԿԱԼԻՔՈՎ

Երբ ԲՀԿ առաջնորդը հայտարարեց, որ Երկրորդ նախագահը «երբեք ու երբեք ոչ ցանկացել է կուսակցություն ունենալ, ոչ կուսակցության նախագահ լինել, եթե ցանկանար՝ վաղուց կլիներ Հանրապետական կուսակցության նախագահ»: Ծառուկյանի խոսքերով՝ «հզոր կուսակցությունը որևէ մեկի սեփականությունը չէ»՝ այսպիսով ակնարկելով Քոչարյանի հնարավոր վերադարձը քաղաքականություն: Երկրորդ նախագահը ոչ հերքեց, ոչ էլ հաստատեց նման հնարավորությունը: Քոչարյանի հնարավոր վերադարձի առկախված հարցը իր ազդեցությունը կթողնի ԲՀԿ-ի և ՀՀԿ-ի միջև հնարավոր հակասությունների վրա: Այն, անկասկած, կազդի նաև ԲՀԿ-ի՝ քաղաքական այլ ուժերի հետ համագործակցության հավանականության վրա:

Մարտի 24-ին ընդունվեց նոր ընտրական օրենսգրքը: Օրենսգրքի երկու նախագիծ էր դրված քննարկման՝ մեկը կոալիցիայի կողմից (ՀՀԿ, ԲՀԿ, ՕԵԿ), մյուսը՝ խորհրդարանական ընդդիմադիր կուսակցությունների (ՀՅԴ, Ժառանգություն): Կոալիցիայի նախագիծը հիմնականում առաջարկում էր ընդհանուր բնույթի բարեփոխումներ՝ գոհացնելու համար միջազգային կառույցների (Եվրոպայի խորհուրդ, ԵԱՀԿ) փորձագետներին՝ մասնավորապես կապված ընտրությունների հրապարակայնության և թափանցիկության ապահովման հետ: Ընդդիմադիր առաջարկը սահմանում էր 100 տոկոսանոց համամասնական ընտրակարգ և ընդդիմադիր և իշխանական խմբակցությունների հավասար թվով մասնակցություն ընտրական հանձնաժողովներում: Ընդունվեց մեծամասնության նախագիծը:

Հայկական բանակում խաղաղ պայմաններում զինվորների մահվան դեպքերը շարունակում են մնալ ցավալի խնդիրների շարքում:

Իրապես, փոփոխվող այս վերադասավորումները և քաղաքական վտանգները դարձան կառավարության ներսում տարեվերջին տեղ գտած մի քանի աղմկոտ հրաժարականների և՛ պատճառը և՛ հետևանքը, ներառյալ նախագահի աշխատակազմի ղեկավարը և հանրապետության երկրորդ պաշտոնյա Ազգային ժողովի նախագահը:

Քաղաքական այս զարգացումներին զուգահեռ՝ Ազգային ժողովն ընդունեց մի քանի կարևոր օրենսդրական փաթեթներ:

Գարնանն ընդունված փաթեթներից էր «Հավաքների ազատության մասին» օրենքում առաջարկված փոփոխությունները: Չնայած ընդդիմադիր պատգամավորները քննադատության ենթարկեցին նախագիծը՝ նշելով, որ այն բազմաթիվ սողանքներ է թողնում հավաքների ազատությունը սահմանափակելու առումով, օրինագիծն ընդունվեց ձայների ճնշող մեծամասնությամբ:

Նոյեմբերին քննարկման դրվեց եկամտահարկի մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագիծը, որի նպատակն էր բարձր եկամուտ (երկու միլիոն դրամից ավելի) ունեցող ֆիզիկական անձանցից գանձել առավել բարձր (պրոգրեսիվ) դրույքաչափերով հարկեր:

Նոյեմբերին Բնապահպանության նախարարությունը Ազգային ժողով ուղարկեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» օրինագիծ:

ԳԱՐՆԱՆ ԱՎՆԿԱԼԻՔՈՎ

փաթեթը: Այն երկիմաստորեն էր սահմանում հանրային լուսնների անհրաժեշտությունը բնապահպանական ծրագրերի «հատկացման նախնական փուլում»: Օրենքին դեմ հանդես եկող բնապահպանները այն համարում էին Օրիուսի կոնվենցիայի խախտում, որի անդամ է նաև Հայաստանը: Նշվում էր նաև, որ օրինագիծը լի է կոռուպցիոն ռիսկերով և փորձագիտական կոպիտ բացթողումներով, ու պահանջում էին, որ օրինագիծը հետ կանչվի: Այդուհանդերձ, այն ընդունվեց առաջին ընթերցմամբ:

Նշված օրենսդրական փաթեթներից ոչ մեկի ընդունման հիմքում հասարակական ճնշումը չէր, թեև տարվա ընթացքում քաղաքացիական ակտիվությունն աճում էր՝ հիմնականում Ֆեյսբուքի և սոցիալական այլ ցանցերի միջոցով:

Թեև հասարակական կազմակերպությունների ղեկավարները նշում են, որ իրենց գործունեության համար խոչընդոտներ չեն հարուցվել, այդուհանդերձ օրենսդիր և սոցիալական ասպարեզներում հանրության զգալի ներգրավվածության բացակայությունը հետքայլ է նշանակում:

2011 թ. արձանագրվեց հասարակական կազմակերպությունների գրանցման դյուրացում, ինչի արդյունքում հնարավոր դարձավ նոր կազմակերպություն գրանցել պարզ էլեկտրոնային եղանակով: 2010 թ. Արդարադատության նախարարության գործադրած ջանքերը՝ ստեղծել հասարակական կազմակերպությունների վերահսկման պետական մեխանիզմ, կասեցվեցին, երբ նախարարությունը փակեց այն գործակալությունը, որն օժտված էր այդ իրավասություններով: Պետության կողմից ճնշումները հիմնականում բացակայում էին, սակայն դրա հետ մեկտեղ պետությունը հասարակական կազմակերպությունների

հանդեպ մեծ հետաքրքրություն չի դրսևորել, համագործակցությունը ՀԿ-ների հետ, ինչպես նաև նրանց գործունեությունը և դերի բարձրացումը չեն խթանվել:

Քաղաքացիական հասարակության ներսում հայտնվեցին նեղ մասնագիտական խմբեր, որոնք մեծ ակտիվություն ցուցաբերեցին որոշ հատուկ հարցերի քննարկման շուրջ: Նրանք կառավարությանը իրենց մտահոգությունները ներկայացնում էին հրապարակային միջոցառումների միջոցով, թեև թերահավատ էին գործադիր և օրենսդիր իշխանությունների ունակության կամ ցանկության վերաբերյալ՝ գործել առանց հանրային վերահսկողության:

Որպես կանոն ոչ քաղաքական ու երիտասարդական խմբերը, որոնցից շատերը նույնիսկ գրանցված չեն, հանրային աջակցություն ստանալու համար ապավինում են Հայաստանում ինտերնետի արագ զարգացմանը:

Քաղաքացիական հասարակության ակտիվիստները կամ վախենում էին երկխոսություն սկսել կառավարության հետ ու տատանվում իրենց տեսակետները ներկայացնելու հարցում կամ պարզապես վստահ չէին, որ կառավարությունը դրանք ուշադրության կարժանացնի: Հարկ է նաև նշել, որ համեմատաբար խրթին հարցերում հասարակական կազմակերպությունների կարողությունները երբեմն բավարար չէին որոշում ընդունողների հետ պատշաճ մակարդակով արդյունավետ երկխոսության

ԳԱՐՆԱՆ ԱՎԵԿԱԼԻՔՈՎ

մեջ մտնելու համար: Արդյունքում, քաղաքացիական հասարակության գործիչները կարողացան ազդել առանձին դեպքերի կամ որոշումների վրա, սակայն հանրային քաղաքականության մեջ դերակատարում չունեցան:

2011 թ. խաղաղ պայմաններում գրանցվեցին մեծ թվով կորուստներ, թեև բանակի ղեկավարությունը պնդում էր, որ դրանց ընդհանուր թիվը նվազել է:

Համալսարանները և հետազոտական կենտրոնները քաղաքականության այլընտրանքային վերլուծություն չեն առաջարկել: Հանրային քաղաքականության մշակման գործընթացը չի հենվել վիճակագրական և քանակական տվյալների վրա, բացի մի քանի հարցումների և ժողովրդագրական ուսումնասիրությունների արդյունքներից: Մյուս կողմից, որոշ հասարակական կազմակերպությունների առանձին ու նպատակաուղղված ջանքերը, որոնք նախաձեռնվել էին Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների միջոցով օրենսդիր մարմնին առաջարկներ ներկայացնելու նպատակով, անարդյունավետ չեղան: Հաջողությունը պայմանավորված է առաջարկվող լուծումների բնույթով, քանի որ դրանք ուղղված չէին տնտեսական կամ քաղաքական մասնավոր շահերի դեմ, այլ կենտրոնանում էին, հիմնականում, քաղաքական ընդհանուր որոշումների կայացման վրա:

Հանրային խմբերն ու շարժումները կազմված են ակտիվիստներից, ովքեր մտահոգ են տարբեր ոլորտներում տիրող իրավիճակով: Թեև նրանց միավորում է անհամաձայնությունը կառավարության որդեգրած դիրքորոշումների վերաբերյալ, այդուհանդերձ մշտական կառույցների կամ դաշինքների տեսանկյունից բյուրեղացում տեղի չունեցավ: Բացի այդ, երիտասարդ ակտիվիստների մուտքը քաղաքացիական ակտիվության դաշտ, ցույց տվեց, որ հանրային դժգոհության արտահայտությունները քաղաքականություն վերափոխելու համար անհրաժեշտ են նոր հմտություններ:

Լրատվամիջոցները քաղաքացիական հասարակությունը ներկայացնող կազմակերպություններին և դերակատարներին մեծ ուշադրության չեն արժանացրել, քանի որ չի համարվել, որ նրանց գործունեությունը կարող է մեծ արձագանք ունենալ և անհրաժեշտ լսարան ապահովել: Ինչպես մյուս բնագավառներում, լրատվամիջոցների համար իրենց սեփական շահերն ի վերջո ավելի ծանրակշիռ են համարվել, քան հասարակության շահերը: Միևնույն ժամանակ, քաղաքացիական հասարակության գործունեությունը շարունակում է համարվել թույլ և անարդյունավետ կամ նույնիսկ՝ անտեղի: Տեղական դոնորները սատարում են հասարակական կազմակերպությունների գործունեությանը, սակայն դա անում են անաղմուկ կամ անանուն՝ պետության անկանխատեսելի արձագանքից խուսափելու համար:

Որպես կանոն ոչ-քաղաքական ու երիտասարդական խմբերը, որոնցից շատերը նույնիսկ գրանցված չեն, հանրային աջակցություն ստանալու համար ապավինում են Հայաստանում ինտերնետի արագ

ԳԱՐԼԱՆ ԱՎԵԿԱԼԻՔՈՎ

զարգացմանը: Նրանց բարձրացրած հարցերը տարածվում են բնապահպանական խնդիրներից մինչև բանակում չդադարող բռնությունները: Արդյունքում, նրանք սկսեցին հաստատվել որպես այլընտրանք, շատ դեպքերում ավելի արդյունավետ, արդեն իսկ կայացած Հասարակական կազմակերպություններին: Ինտերնետը հնարավորություն տվեց կոնկրետ խնդրի շուրջ ստեղծված խմբերին գրավել գլխավոր լրատվամիջոցների ուշադրությունը և չնայած ֆինանսական ռեսուրսների բացակայությանը, իրենց շուրջ արագ հավաքել աջակիցների:

Էլեկտրոնային ակտիվությունն այնքան առաջ գնաց, որ սկսեց հարցականի տակ դնել Հայ առաքելական եկեղեցու և Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի բարոյական հեղինակությունը: Հունիսին և հուլիսին Ֆեյսբուքի միջոցով մարդկանց մի մեծ խումբ պահանջում էր Հայոց հոգևոր հայրապետի հրաժարականը՝ միջնադարյան վանքերի նկատմամբ նրա ենթադրյալ անուշադրության և այլ բացթողումների համար: Ի պատասխան այս աննախադեպ արշավի, Մայր Աթոռը ստիպված եղավ դիմել իր հասարակական իմիջը պահելու մեթոդների:

Հայկական բանակում խաղաղ պայմաններում զինվորների մահվան դեպքերը շարունակում են մնալ ցավալի խնդիրների շարքում: Թեև խնդիրը նոր չէ և սկիզբ է առնում 1990-ականներից, հանրային մեծ արձագանքի արժանացավ 2010 թ. ամռանը, ինչին մեծապես նպաստեց սոցիալական մեդիան: Դիմակայելով աճող հանրային դժգոհությանը, բանակի ղեկավարությունը բազմիցս խոստացավ ավելի կոշտ դիրքորոշում որդեգրել զինված ուժերում խոշտանգումների և անձի նվաստացման դեպքերի դեմ: Տարվա ընթացքում զինվորներ ու սպաներ ձերբակալվեցին, պատժվեցին

զինվորական աստիճանի իջեցումով կամ ազատվեցին զբաղեցրած պաշտոններից:

Այդուհանդերձ, 2011 թ. խաղաղ պայմաններում գրանցվեցին մեծ թվով կորուստներ, թեև բանակի ղեկավարությունը պնդում էր, որ դրանց ընդհանուր թիվը նվազել է: Ֆեյսբուքի միջոցով կազմակերպվեց մի այլ նախաձեռնություն: Մի քանի տասնյակ հասարակական ակտիվիստներ միացան սպանված զինվորների ծնողներին, ովքեր սեպտեմբերի սկզբին ամենշաբաթյա ցույցեր էին կազմակերպում կառավարության շենքի առջև: Նրանք պահանջեցին անհապաղ գործողություններ ձեռնարկել բանակային հանցավորության դեմ և մեղադրեցին ռազմական դատախազներին այդ դեպքերը քողարկելու մեջ: Սեպտեմբերի վերջին պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը հանդիպեց ցուցարարների հետ և հավաստիացրեց, որ կանի հնարավորը հանցագործությունները բացահայտելու համար:

2011 թ. զգալի աճեց իշխանությունների հանդեպ առավել քննդատական դիրքորոշում ունեցող հայաստանյան թերթերի ու այլ լրատվամիջոցների դեմ զրպարտության մեղադրանքներով հարուցված գործերի թիվը:

Ազգային ժողովի պաշտպանության ու անվտանգության հանձնաժողովի նախագահ Հրայր Կարապետյանը միացավ քննադատությանը՝ նշելով, որ

ԳԱՐՆԱՆ ԱՎՆԿԱԼԻՔՈՎ

Խնդիրը լուծելու համար զինվորական իշխանությունները դեռևս անհրաժեշտ քայլեր չեն ձեռնարկել: Ընդհանրապես ԶՅԴ-ի առանցքային ներկայացուցիչն ասաց նաև, որ արմատական խնդիրները լուծելու համար պաշտպանության ոլորտում անհրաժեշտ են ավելի հաստատակամ քայլեր:

Իշխանությունները շարունակեցին վերահսկողության տակ պահել էլեկտրոնային լրատվամիջոցների կողմից քաղաքական նորությունների լուսաբանումը:

Հայաստանում արդեն սկիզբ է դրվել բանակային բարեփոխումներին՝ ՆԱՏՕ-ի Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի շրջանակներում, որը մեկնարկվել է 2005 թ.: Երևանը պարտավորություն է ստանձնել ապահովել երկրի զինված ուժերի ավելի խոր ներդաշնակությունը ՆԱՏՕ-ի չափանիշներին և գործառույթներին: 2010 թ. հրապարակվեց ծրագրի նորացված տարբերակը, որտեղ կոչ է արվում ապահովել «առավելագույն թափանցիկություն» պաշտպանության ծրագրավորման և ֆինանսավորման հարցերում, ինչպես նաև քաղաքացիական և ռազմական անձնակազմի «համաչափ ներկայությունը» Հայաստանի զինված ուժերում:

Ելույթ ունենալով 2011 թ. հուլիսին Բրյուսելում կայացած ՆԱՏՕ-ի անդամ երկրների Հյուսիսատլանտյան խորհրդի տարեկան ժողովի ժամանակ՝ նախարար Օհանյանը հայտարարեց, որ Հայաստանի

կառավարությունը մշակել է ռազմական ոլորտում բարեփոխումների նոր հնգամյա ծրագիր: Նա նշեց, որ կառավարությունը 2010 թ. սկզբին վերանայել է Հայաստանի ռազմական կարողությունները և անվտանգության մարտահրավերները և նշված ծրագիրը այդ վերանայման արդյունքն է: Օհանյանի առաջին տեղակալ Դավիթ Տոնոյանը նշված վերանայման արդյունքները քննարկեց ավելի վաղ Վաշինգտոնում, ԱՄՆ Պաշտպանության նախարարության բարձրաստիճան պաշտոնյաների հետ: Հայաստանի պաշտպանության նախարարությունը հայտարարեց, որ երկու կողմերը նախանշել են Հայաստանի և ԱՄՆ-ի բանակայինների միջև «հետագա համագործակցության նոր բնագավառները»:

2011 թ. զգալի աճեց իշխանությունների հանդեպ առավել քննադատական դիրքորոշում ունեցող հայաստանյան թերթերի ու այլ **լրատվամիջոցների** դեմ զրպարտության մեղադրանքներով հարուցված գործերի թիվը: Նման արդյունք շատերն էին ակնկալում այն բանից հետո, երբ 2010 թ. մարտին Հայաստանի լրատվական դաշտի վերաբերյալ Ազգային ժողովն ընդունեց օրենսդրական փոփոխություններ: Զրպարտությունը ապաքրեականացվեց, սակայն անձին վարկաբեկելու համար խստացվեցին ֆինանսական պատժամիջոցները: Իրավապաշտպան և մամուլի հարցերով զբաղվող կազմակերպությունները մտահոգություն հայտնեցին, որ զրպարտանքի ապաքրեականացումը ֆինանսական պատժամիջոցներով փոխարինելը իշխանությունների համար կոյուրացնի մամուլի ազատությունը սահմանափակելուն ուղղված փորձերը: 2011 թ. առաջին եռամսյակում միայն արձանագրվեց այդպիսի 12 գործ:

Առաջին գործը հարուցվեց «Հայկական ժամանակ» օրաթերթի դեմ: 2010 թ.

ԳԱՐՆԱՆ ԱԿՆԿԱԼԻՔՈՎ

հոկտեմբերին ՀԱԿ-ին մոտ կանգնած այս թերթում տպագրվել էր մի հոդված, որն ակնարկում էր, թե Ազգային ժողովի երեք պատգամավորներ (նախագահ Սարգսյանի հետ միասին), ովքեր նաև Հայաստանի ամենահարուստ գործարարներից են, Ռուսաստանում ծավալել են հանցավոր գործունեություն: Հայցվորները այդ հոդվածը համարեցին զրպարտություն և պահանջեցին 7,5 միլիոն դրամ փոխհատուցում: Դատարանը փետրվարին կայացրեց դատավճիռը՝ «Հայկական ժամանակ»-ին պարտադրելով վճարել 6 միլիոն դրամ: Տույժի վճարման հարցում թերթին ֆինանսապես օժանդակեցին այլ թերթեր և հասարակական կազմակերպություններ:

Իշխանությունների հանդեպ քննադատաբար տրամադրված երկու այլ թերթեր՝ «Ժամանակը» և «Հրապարակը», դատարանի կողմից տուգանվեցին համապատասխանաբար երեք և վեց միլիոն դրամով: Երկու օրաթերթերի դեմ դատական հայց էր ներկայացվել նախկին նախագահ Քոչարյանի ընտանիքի անդամների պահանջով:

«Երկիր» օրաթերթը տուգանվեց ավելի համեստ գումարով՝ 288 հազար դրամ, երբ ՀՅԴ տեսակետներն արտահայտող պարբերականը վարկաբեկող հոդված տպագրեց մի մեծահարուստ գործարարի մասին, որը նաև ԱԺ պատգամավոր է:

Հայաստանի փաստաբանների միությունը լուրջ մտահոգություն հայտնեց լրատվամիջոցների դեմ սանձազերծված այս պատերազմի համար: Փարիզում գործող «Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպությունը լուրջ մտահոգություն հայտնեց զրպարտության վերաբերյալ գործերի առնչությամբ: Մայիսին կազմակերպությունը հայտարարեց, որ լրատվամիջոցների նկատմամբ

կիրառվող խիստ տուգանքները վտանգում են նրանց գոյությունը և խրախուսում ինքնագրաքննությունը:

Հոկտեմբերին Հայաստանի վերջին անկախ հեռուստաընկերությունը՝ Գյումրիի «ԳԱԼԱ»-ն, ստիպված էր իր հաղորդիչը հանել քաղաքի հին հեռուստաաշտարակի վրայից:

Իշխանությունները շարունակեցին վերահսկողության տակ պահել էլեկտրոնային լրատվամիջոցների կողմից քաղաքական նորությունների լուսաբանումը: Տարվա ընթացքում Հայաստանի լրատվական դաշտում տեղի ունեցան մի քանի խոշոր փոփոխություններ: Ելու Յորքում գործող Լրագրողների պաշտպանության կոմիտեն փետրվարին հրապարակած իր ամենամյա զեկույցում, որը կրում էր «Հարձակումներ մամուլի վրա» խորագիրը, քննդատեց Հայաստանի հեռարձակման մասին օրենքում կատարված փոփոխությունները, որոնք ընդունվել էին 2010 թ.՝ հակառակ ներքին և արևմտյան ուժգին քննադատության: Փոփոխությունները վերաբերում են հեռարձակման թվայնացմանը: Կազմակերպությունը պնդեց, որ փոփոխությունները միտված են հիմնականում Ա1+ անկախ հեռուստաալիքը եթերից դուրս պահելուն և Գյումրիի ԳԱԼԱ անկախ հեռուստաալիքը 2015-ից հետո եթերազրկելու փորձերին: Իրականում, երկու հեռուստաընկերություններն էլ դիմեցին հաճախականություն ստանալու համար, սակայն մերժվեցին:

ԳԱՐՆԱՆ ԱՎՆԿԱԼԻՔՈՎ

Հունիսին Եվրոպայի խորհրդի որոշումներ ընդունող բարձրագույն մարմինը՝ Նախարարների կոմիտեն, եզրակացրեց, որ Հայաստանի կառավարությունը լիովին կատարել է Ա1+ հեռուստաընկերության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշման պահանջները:

**Խորհրդարանական
և նախագահական
ընտրությունների
նախաշեմին
իշխանությունները
դժվար թե թուլացնեն
վերահսկողությունը
հեռուստաընկերությունների
և ռադիոընկերությունների
նկատմամբ:**

Հայաստանի առաջատար լրատվամիջոցները քննադատեցին եզրակացությունը, քանի որ անտեսվում էր Եվրոպական դատարանի որոշման ոգին: Ըստ դատարանի որոշման՝ Հայաստանի կառավարությունը պետք է հեռուստաալիքին վճարեր 20 000 եվրո կամ 28 500 ԱՄՆ դոլար՝ 2002 թ. հեռուստաընկերությունը եթերազրկելու, ինչպես նաև Ա1+-ի հաճախականություններ ձեռք բերելու դիմումները մերժելու համար: Որոշումը, սակայն, Հայաստանի իշխանություններին չէր պարտավորեցնում ապահովել Ա1+-ի եթեր վերադարձը: Այսպիսով՝ 2011 թ. Նախարարների կոմիտեն որոշեց, որ Հայաստանի կառավարությունը հետևել է դատավճռի տառին: Ա1+-ի փակումը հիմնական պատճառն է, որ ամերիկյան

Ֆրիդըմ Հաուս կազմակերպությունը 2003-ից ի վեր Հայաստանի լրատվական դաշտը նկարագրում է «ոչ ազատ»:

Հոկտեմբերին Հայաստանի վերջին անկախ հեռուստաընկերությունը՝ Գյումրիի ԳԱԼԱ-ն, ի վերջո պարտվելով Գյումրիի քաղաքապետարանի դեմ երկար տևած դատական քաջքշուկում, ստիպված էր իր հաղորդիչը հանել քաղաքի հին հեռուստաաշտարակի վրայից: Ընկերությանը համենայն դեպս թույլ տրվեց հաղորդիչ տեղադրել քաղաքի նոր հեռուստաաշտարակի վրա, որն օգտագործվում է նաև այլ տեղական հեռուստաընկերությունների կողմից: Սակայն ԳԱԼԱ-ն դա կարող է անել միայն մինչև 2015-ը, երբ լրանում է նրա լիցենզիայի ժամկետը:

Եսես-Վ-ն ավելի քննադատաբար էր տրամադրված իշխանությունների հանդեպ: Սեպտեմբերին տարածված բանաձևի նախագծում Եսես-Վ-ն նշում էր, որ հակառակ կրկնվող հորդորներին՝ Հայաստանի ղեկավարությունը չի ապահովել բազմակարծությունը հեռարձակվող լրատվամիջոցներում:

Խորհրդարանական և նախագահական ընտրությունների նախաշեմին իշխանությունները դժվար թե թուլացնեն վերահսկողությունը հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների նկատմամբ: Փոխարենը, իշխանությունները շարունակում են ավելի հանդուրժող լինել տպագիր և էլեկտրոնային լրատվության հանդեպ:

Հանրային կարծիքի վրա հայաստանյան թերթերի ազդեցությունը մնում է սահմանափակ փոքր տպաքանակի պատճառով: Տպաքանակը չի ավելանում, քանի որ մամուլում բացահայտ է քաղաքական կողմնակալությունը: Մինևույն ժամանակ,

ԳԱՐԵԱՆ ԱԿՆԿԱԼԻՔՈՎ

թերթերում նկատելի է բազմակողմանի տեղեկատվության պակասը:

Նկատելիորեն ավելանում են առցանց լրատվամիջոցները: Ինտերնետի նվազող գների և կապի աճող արագության շնորհիվ երկու տասնյակ կայքեր վերածվեցին հանրության համար տեղեկատվության հիմնական աղբյուրների: Այդուհանդերձ, նրանց պակասում է խմբագրական ենթակառուցվածքը, ինչն անհրաժեշտ է այնպիսի լուրջ իրադարձությունների լուսաբանման համար, ինչպիսին ընտրություններն են:

ՀԵՌԱՆԿԱՐ

Ռուսաստանի խորհրդարանական ընտրությունները, որոնք խիստ քննադատության արժանացան Արևմուտքում և նաև երկրի ներսում, կարևոր էին Հայաստանի համար: Համաշխարհային առաջատար լրատվամիջոցները և հասարակական կարծիքը ազդելու են Հայաստանի ընտրությունների և ներքաղաքական իրավիճակի վրա:

Հայաստանի նախորդ բոլոր խորհրդարանական և նախագահական ընտրությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ իշխանությունը, ընդդիմությունը և հասարակությունը առավել կարևորում են նախագահական ընտրությունները: Խորհրդարանական նախորդ չորս ընտրություններից հետո ոչ մի դեպքում հետընտրական ցնցումներ չեն արձանագրվել, մինչդեռ նախագահական անարդար ընտրություններից հետո 1996, 2003 և 2008 թվականին գրանցվել են հետընտրական ցնցումներ: Սակայն խորհրդարանական գալիք ընտրությունները, որոնք նախորդում են 2013 թ. փետրվարին սպասվող

նախագահական ընտրություններին, այնքան կարևոր են, որ աղաղակող ընտրակեղծիքների դեպքում իշխանությունները ներքաղաքական և միջազգային նոր բարդությունների առաջ կկանգնեն:

Հանրապետական կուսակցությունը շարունակելու է ճնշումներ բանեցնել կոալիցիոն գործընկեր Բարգավաճ Հայաստանի նկատմամբ, որպեսզի կոալիցիոն կուսակցությունները ընտրություններին մասնակցեն միասնական ցուցակով: Եթե ԲՀԿ-ն ստիպված լինի ընդունել իշխանությունների խաղի կանոնները, ապա ընտրություններում ՀՀԿ-ԲՀԿ-ՕԵԿ եռյակը կապահովի ձայների մեծամասնությունը և հերթական անգամ Հայաստանը կունենա խորհրդարան, որը կլինի կառավարության կամակատարը և ոչ հակակշիռը:

Ընդդիմության դաշտում դաշինքները քիչ հավանական են: Երեք հիմնական ընդդիմադիր ուժերից երկուսը՝ ՀԱԿ-ը և ՀՅԴ-ն ամենայն հավանականությամբ առանձին կմասնակցեն ընտրություններին, իսկ Ժառանգությունը հնարավոր է մասնակցի ՀԱԿ-ից անջատված ամենամեծ և լիբերալ հատվածի՝ Ազատ դեմոկրատների հետ:

Խորհրդարանական ընտրություններից առաջ և հետո աննախադեպ ակտիվություն են ցուցաբերելու քաղաքացիական խմբերը, որոնք նախորդ տարիներին պայքարել են անարդարությունների դեմ:

Էլեկտրոնային լրատվամիջոցները ենթարկվելու են ճնշումների, որը ավելի շատ դրսևորվելու է ինքնագրաքննության տեսքով: Ընդդիմությունը լրատվական լուսաբանումներում հայտնվելու է անհավասար վիճակի մեջ:

ԳԱՐՆԱՆ ԱՎԵԿԱԼԻՔՈՎ

ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

2012 թ. մայիսի խորհրդարանական ընտրությունները կլինեն առաջին համապետական ընտրությունները 2008 թվականի նախագահական վիճելի ընտրություններից և մարտի 1-ի իրադարձություններից հետո: Իշխանության և հասարակության միջև, ինչպես նաև հենց հասարակությանն ներսում, երբեմն թշնամանքի հասնող անվստահությունը հաղթահարելու համար չափազանց կարևոր է, որ ընտրությունները ոչ միայն անցնեն ազատ և արդար, այլ հասարակությունը հավատա դրանց արդարությանը՝ անկախ միջազգային կառույցների գնահատականների:

Հաշվի առնելով հանրության բարձր սպասումները խորհրդարանական ընտրություններից, հատկապես Ռուսաստանի և Եվրոպական կառույցների զարգացումների համատեքստում և հաշվի առնելով հայ բարձրաստիճան դեկավարության կողմից տրված խոստումները եվրոպական ամբիոններից, խորհրդարանական ընտրությունների անարդար կազմակերպումը արմատապես կվսասի Հայաստան-ԵՄ հարաբերություններին: Կառավարությունը պետք է դիմադրի ադմինիստրատիվ և այլ ռեսուրսների օգտագործման գայթակղությանը և ցուցադրի Հայաստանի եվրոպական հանձնառության լրջությունը:

Կառավարությունը պետք է չվախենա էլեկտրոնային լրատվամիջոցների «սանձերը թուլացնելուց» և դրանք մատչելի դարձնի ընդդիմության համար անգամ օրենքով նախատեսված քարոզչության ժամկետներից առաջ:

Կառավարությունը, որպեսզի հասարակական կազմակերպություններին իրենց ծրագրերով ու գործունեությամբ ամրանալու և ավելի

անկախ դառնալու հնարավորություն տա, նվիրատու անհատներին և ընկերություններին պետք է հարկային արտոնություններ շնորհի:

Ոստիկանական համակարգի ժողովրդավարացումը և ոստիկանություն-հասարակություն հարաբերությունների բարելավումը էական են լինելու նախընտրական և հետընտրական հաջորդ երկու տարիներին: Հասարակության և ոստիկանության շփումը, որ 2008 թվականի հետընտրական բռնությունների ամենապայթուցիկ կողմն էր, շատ քիչ է քննարկվել, բայց նորից առանցքային նշանակություն է ունենալու:

Ոստիկանությունը ոչ միայն պետք է աշխատի հասարակական կարգի կառավարման բարեփոխումների ուղղությամբ, այլ նաև պետք է կարողանա հասարակությանը ներկայացնել բարեփոխումների արդյունքները, որպեսզի վերստանա կորցրած վստահությունը:

Մահվան դեպքերը բանակում շարունակելու են մնալ հասարակության ուշադրության կենտրոնում և պետք է պաշտպանության կառույցների կողմից ավելի թափանցիկ քննության արժանանան: Վստահություն ձեռք բերելու համար զինվորական դատախազը պետք է պատասխանատվության ենթարկի ծիշտ մարդկանց և իրական հանցանքների համար: Պաշտպանության նախարարությունը պետք է նաև ջանքեր չխնայի զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության համար, կրթության և ավելի խիստ կարգապահության միջոցով:

Քաղաքացիական հասարակության ակտիվիստները պետք է սկսեն զբաղվել նաև քաղաքականության մշակման հարցերով և չկենտրոնանան միայն տարբեր միջոցառումներ կազմակերպելու վրա:

ԿԱՂԱՅՈՂ ԱՃ

2011 թ. համաշխարհային տնտեսության հիմնական մարտահրավերը պարտքային խնդիրներն էին Եվրոպայում և ԱՄՆ-ում:

Այդ խնդիրները եվրոգոտու երկրների մեծ մասին դրդեց ձեռնարկել խնայողությունների խիստ միջոցառումներ: Եվրոպայի՝ իրացվելիության խնդիրներ ունեցող երկրները դրան գնացին տնտեսական աղետից խուսափելու համար: Աշխարհամասի առաջատար տնտեսություններն էլ շտապեցին կանխարգելիչ միջոցառումներ ձեռնարկել՝ արդյունքում մեծացնելով տնտեսական աճի դանդաղման և նույնիսկ անկման հավանականությունը:

Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպությունը իր 34 անդամ երկրների՝ 2012 թվականի տնտեսական աճի տարեվերջյան կանխատեսումը տարեմիջյան 2,3 տոկոսից իջեցրեց մինչև 1,6 տոկոսի, իսկ միայն Եվրոպայի համար՝ երկու տոկոսից մինչև 0,2 տոկոսի:

Տարեվերջին զարգացած տնտեսությունները, տնտեսական դանդաղ աճի և աճող գործազրկության պայմաններում, ստիպված էին հարկաբյուջետային պակասուրդը

միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածում նվազեցնելու հուսալի ռազմավարություն ընդունել: Զարգացող շուկայական տնտեսություններից ակնկալվում էր, որ նրանք կնպաստեն համաշխարհային տնտեսության հավասարակշռությանը՝ առավելապես հիմնվելով ներքին պահանջարկի վրա:

2011 թ. Հայաստանում որոշակի աճ արձանագրվեց, սակայն տնտեսությունը շարունակեց կրել 2009 թ. 14,5 տոկոս անկման հետևանքները: Տարեվերջին Moody's վարկանշային գործակալությունը Հայաստանի սուվերեն վարկանիշի կանխատեսումը կայունից իջեցրեց բացասականի՝ ընդգծելով, որ երկրի տնտեսական աճի համար կան ռիսկեր:

2011 թ. Հայաստանը կանգնած էր նույն տնտեսական դժվարությունների առջև, թերևս տարբեր ուժգնությամբ արտահայտվող, ինչ աշխարհի մյուս երկրները:

Այս տարի, ինչպես և անցած տարի, կառավարության նպատակն էր ապահովել տնտեսական աճ, կրճատել աղքատությունը, արտաքին առևտրի պակասուրդը, ապահովել բյուջեի և պարտքի կայունությունը, գնաձր պահել նախանշված սահմաններում և խորացնել տնտեսության կառուցվածքային բարեփոխումները:

Այդ խնդիրները միաժամանակ լուծելու փորձերը, սակայն, կառավարությանը նոր երկրնորանքների առաջ կանգնեցրին:

Առաջին՝ պետական պարտքի կառավարումը և բյուջեի պակասուրդի կրճատումը պահանջում էին այնպիսի քայլերի իրականացում, որոնք հակասում են տնտեսական աճի խթանմանն ու աղքատության հաղթահարմանը: **Երկրորդ՝** արտաքին առևտրի պակասուրդը, ի

ԿԱՂԱՑՈՂ ԱՃ

թիվս այլ քայլերի, ենթադրում է դրամի արժեզրկում, որը հակասում է գնաձի գսպման քաղաքականությանը: **Երրորդ**՝ տնտեսությանն այսօր անհրաժեշտ կառուցվածքային փոփոխությունները հակասում են քաղաքականությանը սերտաճած խոշոր գործարարների շահերին, որոնք վերահսկում են Հայաստանի տնտեսության էական հատվածը:

2011 թ. ցուցանիշները վկայում են, որ 2010 թ. 2008 թ. համեմատ աճել են աղքատության մակարդակը և չափերը:

Իրապես ազատ շուկայական տնտեսության բացակայության պայմաններում՝ առանց հավասար բիզնես միջավայրի, ազատ և արդար մրցակցության ու մասնավոր սեփականության պաշտպանության, այդ երկրներն անհրաժեշտ է հաղթահարել հնարավոր չէ:

2011 թ. կառավարությունը խստացրեց հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունը: **Նախ** նա կենտրոնացավ ոչ թե տնտեսական աճի, այլ առավելապես գնաձի գսպման և այն բյուջեով նախանշված թիրախային միջակայքին մոտեցնելու վրա: Կենտրոնական բանկը մի քանի անգամ բարձրացրեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը: **Երկրորդ**, բյուջեի հավելյալ եկամուտների հավաքագրման համար ավելի մեծ գին էին վճարում փոքր և միջին ձեռնարկությունները, քան ստվերում գործող տնտեսավարողները: Չնայած տարվա ընթացքում ակցիզային հարկման փոփոխություններին և հարկային հիմքի ընդլայնմանը՝ հարկային եկամուտներ-

ՀՆԱ հարաբերակցությունը բարելավվեց ընդամենը 0,5 տոկոսով (Հայաստանի այս ցուցանիշը տարածաշրջանում ամենացածրն է): **Երրորդ**, չնայած տնտեսությունը դիվերսիֆիկացնելու խոստմանն ու ջանքերին, այն շարունակեց մեծապես կախված մնալ հանքարդյունաբերությունից ու գյուղատնտեսությունից: Վերջապես, կառուցվածքային բարեփոխումների միջոցով տնտեսության արտադրողականության և մրցակցության խթանմանն ուղղված քայլերը, որ ենթադրում են հովանավորչության և կոռուպցիայի վերացում, բավարար չէին:

Տարեվերջին Հայաստանի տնտեսական աճը դեռ անկայուն և թույլ էր: 2011 թ. գնաձի հիմնականում դուրս էր նախանշված ցուցանիշից, աղքատության մակարդակը՝ բարձր, պետական պարտքը՝ էապես աճած, արտաքին առևտրի պակասուրդը՝ մեծ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ

Այսպիսով՝ համաշխարհային տնտեսական ճգնաժամի հնարավոր երկրորդ ալիքի շեմին քիչ բան է արվել վերացնելու այն հիմնական պատճառները, որոնք հանգեցրին Հայաստանի 2009 թ. խոր տնտեսական անկմանը: Հայաստանը տակավին կանգնած է նույն խնդիրների առջև՝ տնտեսության թույլ դիվերսիֆիկացիա, հումքի արտահանումից աճող կախվածություն և մեծացող արտաքին պարտք: 2011 թ. Հայաստանը շարունակում է խոցելի մնալ արտաքին տնտեսական շոկերի նկատմամբ:

2009 թ. կտրուկ տնտեսական անկումից հետո, որին 2010 թ. հաջորդեց չափավոր՝ 2,1 տոկոս աճ, ակնկալվում է, որ 2011-ին աճը կկազմի 4,6 տոկոս: Բացարձակ թվերով՝ 2011 թ. ՀՆԱ-ն հաշվարկված է 3,763 միլիարդ դրամ

ԿԱՂԱՑՈՂ ԱՃ

(կամ շուրջ 10 միլիարդ ԱՄՆ դոլար): Սակայն 2011 թ. առաջին կեսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գրանցվեց ընդամենը 2,8 տոկոս աճ, մինչդեռ 2010 թ. առաջին կեսին ՀՆԱ-ն աճել էր 6,1 տոկոսով:

Կենտրոնական բանկի տվյալներով՝ 2011 թ. աճել է սպառողների վստահության ինդեքսը, սակայն վատթարացել է բիզնես միջավայրը և թուլացել տնտեսական ակտիվությունը: Այսպես՝ անցյալ տարվանից տնտեսական ակտիվության ինդեքսը փոխվել է աննշան. 2011 թ. երրորդ եռամսյակում այն 0,1 տոկոսով նվազել է նախորդ եռամսյակի համեմատ: Ընդհանուր առմամբ՝ տնտեսական ակտիվությունն այս տարի առավել անկայուն վարքագիծ է դրսևորել՝ պայմանավորված տնտեսության թույլ դիվերսիֆիկացիայով և սեզոնայնությամբ: Օրինակ՝ 2010 և 2011 թ.թ. տնտեսական ակտիվության ամիս առ ամիս համեմատականներից երևում է, որ մայիսին գրանցվել է 9,9 տոկոս աճ, հունիսին՝ ընդամենը՝ 2,3 տոկոս, հուլիսին՝ 7, օգոստոսին՝ 9,6, սեպտեմբերին՝ 9, իսկ հոկտեմբերին՝ 2,4 տոկոս: Տնտեսական ակտիվության աճը հիմնականում պայմանավորված էր ծառայությունների, գյուղատնտեսության և արդյունաբերության ոլորտների աճով: Ի տարբերություն այս ոլորտների՝ շինարարության և առևտրի ոլորտներում էական բարելավում չի գրանցվել այս տարի:

Չնայած գյուղատնտեսական ապրանքների գների սեզոնային նվազման արդյունքում գնաճը մեղմվեց, բարձր գնաճի միտումը պահպանվեց: Հունվար-հոկտեմբեր ամիսներին գնաճի միջին ցուցանիշը կազմել է 8,3 տոկոս՝ էականորեն բարձր Կենտրոնական բանկի սահմանած 4±1,5 տոկոս թիրախային միջակայքից: Ավելին՝ ամենաշատը թանկացավ սննդամթերքը. ձվի, կաթնամթերքի, շաքարավազի և մրգերի

մասով նշված ժամանակահատվածում գնաճը կազմեց 12,3 տոկոս: Սա ինքնին ավելի վատացրեց աղքատների վիճակը, որոնց սպառողական զամբյուղի մինչև 69 տոկոսը կազմում է սննդամթերքը:

2011 թ. ակնկալվող աճը աշխատանքի շուկայում էական փոփոխության չի հանգեցրել:

2010 թ.՝ այսպես կոչված տնտեսական աճի տարվա արդյունքները հավասար չբաշխվեցին՝ ավելի մեծացնելով Հայաստանի բնակչության սոցիալական բևեռացումը: Վերջին երկու տարվա ընթացքում Gini գործակիցը, որով չափվում են երկրում սպառման և եկամուտների անհավասարությունները, էականորեն աճել է: 2010 թ. այդ գործակիցի ցուցիչները համապատասխանաբար կազմեցին 0,265 և 0,362 կետ: Ավելին՝ բնակչության ամենահարուստ 10 տոկոսը չի տուժել ճգնաժամից, մինչդեռ ամենաաղքատ 10 տոկոսը բոլոր մյուսներից շատ է տուժել, և հարուստների ու աղքատների միջև անջրպետն ավելի է մեծացել: Նոր հրապարակված թվերը ցույց են տալիս, որ 2010 թվականին երկրում ամենահարուստները 14,2 անգամ ավելի շատ եկամուտ են ունեցել և 8,1 անգամ ավելի շատ ծախսել, քան ամենաաղքատները: Երկու տարվա ընթացքում սպառման անհավասարությունը աճել է 10 տոկոսով, իսկ եկամուտներինը՝ յոթ տոկոսով:

2011 թ. ցուցանիշները վկայում են, որ 2010 թ. 2008 թ. համեմատ աճել են աղքատության մակարդակը և չափերը: Ներկայում Հայաստանի բնակչության ավելի քան մեկ

ԿԱՂԱՑՈՂ ԱՃ

երրորդը՝ 35,8 տոկոսը, համարվում է աղքատ, իսկ 21,3 տոկոսը՝ «շատ աղքատ»: Ծայրահեղ աղքատ է բնակչության 3 տոկոսը՝ մեկ շնչին ընկնող օրական երկու դոլարից պակաս եկամուտով: 2008 թ. «ծայրահեղ աղքատ» է համարվել բնակչության 1,6 տոկոսը:

2010 թ.՝ այսպես կոչված տնտեսական աճի տարվա արդյունքները հավասար չբաշխվեցին՝ ավելի մեծացնելով Հայաստանի բնակչության սոցիալական բևեռացումը:

Միայն վերջին երկու տարվա ընթացքում 270 հազար հոգի դարձել է աղքատ, ինչի արդյունքում ամսական 33 500 դրամից (90 դոլար) պակաս գումարով ապրող մարդկանց թիվը հասել է 1,2 միլիոնի: «Շատ աղքատների» թիվը հասել է 694 հազարի: Նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը 42 հազար դրամ է, և նրանք, ովքեր աղքատության՝ 33 500 դրամի սահմանագծից ներքև են, առավել խոցելի են: Ավելին, աղքատների 54 տոկոսը այնպիսի տնային տնտեսություններում է ապրում, որտեղ, չնայած ընտանիքի անդամներից երկուսի աշխատանք ունենալուն, ընտանիքն աղքատության սահմանագծից ցած է:

2009 թ. խոր անկումից հետո 2010 թ. տնտեսության վերականգնումը և 2011 թ. ակնկալվող աճը աշխատանքի շուկայում էական փոփոխության չեն հանգեցրել: Աշխատանքի միջազգային կազմակերպության հաշվարկով՝ գործազրկության մակարդակը բարձրացել և հասել է 19 տոկոսի:

Կազմակերպության տվյալներով՝ աշխատունակ և աշխատանքային տարիքի բնակչության մեկ հինգերորդը գործազուրկ է՝ 278 հազար հոգի: Նրանց շուրջ 38 տոկոսը երբեք չի աշխատել, իսկ 19 տոկոսը չորս տարուց ի վեր չի աշխատել: Վերջին երկու տարիներին նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը բարձրացել է 18 տոկոսով և հասել 42 հազար դրամի, մինչդեռ գործազրկության նպաստը մնացել է անփոփոխ՝ 18 հազար դրամ:

Մյուս կողմից՝ Հայաստանը բարելավել է դիրքերը Համաշխարհային բանկի «Բիզնես անելու» զեկույցում, ինչպես նաև Համաշխարհային տնտեսական ֆորումի Մրցունակության համաշխարհային զեկույցում: Բիզնես սկսելու դյուրինության տեսակետից Հայաստանը նախորդ տարվա համեմատ դիրքերը բարելավել է վեց կետով: Առաջընթաց է արձանագրվել շինարարական աշխատանքների թույլտվություն ստանալու, հարկեր վճարելու և վարկերի մատչելիության ցուցանիշներով: Իսկ Մրցունակության համաշխարհային զեկույցում Հայաստանը 98-րդ հորիզոնականից բարձրացել է 92-րդը: Համաշխարհային տնտեսական ֆորումի զեկույցի համաձայն՝ Հայաստանը 12 ցուցիչներից 10-ում առաջընթաց է ունեցել և բարելավել է դիրքը աշխատուժի շուկայի արդյունավետության մասով:

Տարեվերջին Moody's-ի վարկանշային գործակալությունը Հայաստանի վարկանիշի կանխատեսումը կայունից իջեցրեց բացասականի: Գործակալությունը դա պայմանավորեց Հայաստանի տնտեսական խոցելիությամբ Ռուսաստանի և Եվրոպական Միության շուկաներից, որոնց բաժին է ընկնում Հայաստանի արտահանման 58 տոկոսը: Moody's-ի որոշման հիմքում ընկած էր նաև երկրի ընթացիկ հաշվեկշռի պակասությունը (ակնկալվում է, որ 2011 թ. այն

ԿԱՂԱՑՈՂ ԱՃ

կլինի ՋՆԱ-ի 11 տոկոսի չափ), արտաքին պետական պարտք-ՋՆԱ հարաբերակցության ցուցանիշի փոփոխությունը, որը 2008 թ. 14 տոկոսից 2011 թ. հասել է 35 տոկոսի:

2011 թվականին Հայաստանի դիրքը չփոփոխվեց «Թրանսպարենսի Ինթերնեշնլ» կազմակերպության կոռուպցիայի ընկալման ինդեքսում: Նախորդ տարվա 2,6 ցուցիչով Հայաստանը 2011-ին 183 երկրների շարքում զբաղեցրեց 129-րդ տեղը:

Համաշխարհային ճգնաժամից ամենա-
ծանր հարվածը ստացած Հայաստանի **շինարարության** ոլորտում 2011 թ. շարունակվեց անկումը: Ավելին՝ ոլորտի ցուցանիշները ոչ միայն հեռու են նախաճգնա-
ժամայինից, այլև գնալով նվազում են: Հունվար-հոկտեմբեր ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ոլորտի անկումը կազմել է շուրջ 25 տոկոս:

Ավելին՝ ոլորտում աշխատանքների շուրջ 40 տոկոսը իրականացվել է պետության և միջազգային կազմակերպությունների ֆինանսավորմամբ, կամ էլ մարդասիրական ծրագրերով, ինչը բավարար չէր ոլորտը անկումից դուրս բերելու համար: Բնակչությունը և բիզնեսները չեն շտապել ներդրումներ կատարել շինարարությունում. ոլորտում նրանց մասնաբաժինը չի անցել 60 տոկոսից: Ճգնաժամից առաջ Հայաստանում մասնավոր շինարարությունն ու բնակարանաշինությունը կազմում էին ոլորտի 89 տոկոսը և ներդրումների վերադարձելիություն էին ապահովում: Ակնկալվում է, որ գալիք տարի ոլորտը որոշակիորեն կաշխուժանա՝ Համաշխարհային բանկի և Ասիական զարգացման բանկի միջոցներով իրականացվելիք խոշոր ենթակառուցվածքային ծրագրերի հաշվին:

Արդյունաբերությունը տպավորիչ առաջընթաց է արձանագրել՝ տարվա 10 ամիսների կտրվածքով աճելով 20 տոկոսով: Ոլորտի աճին նպաստել է մետաղների միջազգային գների բարձրացումը, ինչը խոսում է այն մասին, որ սա չի արտացոլում ոլորտի իրական աճը: Եթե աճը հաշվարկվի կայուն գներով, ապա այն չի գերազանցի 13 տոկոսը: Արդյունաբերության ոլորտում աճին կրկին հիմնականում նպաստել են հանքարդյունաբերությունն ու դրան հարակից ճյուղերը: Հանքարդյունաբերության և մետաղների արդյունահանման մասնաբաժինը արդյունաբերության ոլորտում աճել է՝ հասնելով 34 տոկոսի: Հումքի միջազգային գներից կախված արդյունաբերության այս ճյուղի զարգացումը մեծացնում է տնտեսության խոցելիությունը արտաքին շուկաների տատանումների նկատմամբ:

Հայաստանը բարելավել է դիրքերը Համաշխարհային բանկի «Բիզնես անելու» զեկույցում, ինչպես նաև Համաշխարհային տնտեսական ֆորումի Մրցունակության համաշխարհային զեկույցում:

Գյուղատնտեսությունն այս տարի հանդես է եկել որպես «տնտեսության փրկիչ»: Եթե 2010 թ. այս ոլորտի 13,4 տոկոս անկումը արգելակեց ընդհանուր տնտեսական աճը, այս տարի ոլորտն աշխուժացել է և էապես նպաստել տնտեսական ակտիվությանը: Բարենպաստ եղանակի շնորհիվ տարվա ինը

ԿԱՂԱՑՈՂ ԱՃ

ամիսներին ոլորտում գրանցվել է 15 տոկոս աճ: Գյուղատնտեսական հողերի վերաբերյալ տվյալները նույնպես ցույց են տալիս, որ ոլորտի աճը հիմնականում պայմանավորված է եղել կլիմայով:

**Հայաստանի
շինարարության ոլորտում
2011 թ. շարունակվեց
անկումը: Ավելին՝
ոլորտի ցուցանիշները
ոչ միայն հեռու են
նախաճգնաժամայինից,
այլև գնալով նվազում են:**

Չնայած գյուղատնտեսությունը Հայաստանի տնտեսության ամենակարևոր ճյուղերից է, այն մնում է թերվարկավորված: Մարտին կառավարությունը որոշում ընդունեց 200 միլիոն դրամ հատկացնել գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների՝ 4-տոկոսային կետի չափով սուբսիդավորմանը, ինչի արդյունքում բանկերի գյուղատնտեսական վարկերի պորտֆելը տարվա 10 ամիսների կտրվածքով աճեց 34 տոկոսով՝ հասնելով 18 միլիարդ դրամի: Կառավարության այս ծրագրով գյուղացիական տնտեսություններին, ընդհանուր առմամբ, տրամադրվել են 7,3 միլիարդ դրամի վարկեր: Բայցևայնպես, գյուղատնտեսական վարկերի մասնաբաժինը բանկերի ընդհանուր վարկային պորտֆելում կազմել է ընդամենը 6,2 տոկոս: Հաշվի առնելով, որ գյուղատնտեսությունը կազմում է ՀՆԱ-ի 18 տոկոսը, և, որ ոլորտում ներգրավված է երկրի աշխատունակ բնակչության շուրջ 45 տոկոսը, գյուղվարկերի

մասնաբաժինը ընդհանուր վարկային պորտֆելում անհամաչափ փոքր է: Սպառողական վարկերը, մինչդեռ, աճել են 38 միլիարդ դրամով և բանկերի ընդհանուր վարկային պորտֆելում կազմում են 18 տոկոս: Թեև այս երկու ոլորտներին հատկացվող վարկերի տոկոսադրույքը նույնն է՝ մոտ 24 տոկոս, առևտրային բանկերն ակնհայտորեն նախապատվությունը տալիս են սպառողական վարկերին՝ գյուղատնտեսությունը համարելով բարձրռիսկային:

Հայաստանում գյուղատնտեսության ոլորտում ռիսկային գործոնը միայն եղանակը չէ: Բանկերի՝ գյուղվարկեր հատկացնելու դժկամությունը մեծապես պայմանավորված է նաև ոլորտի անկանխատեսելիությամբ և իրականացվող քաղաքականության կարճաժամկետ բնույթով: Ավելին, քանի որ ոլորտի շարժիչ ուժը գյուղացիական փոքր տնտեսություններն են, գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքը շատ ավելի փոքր է նրա իրական պոտենցիալից: Օրինակ՝ Հայաստանում գյուղօլորտի մեկ աշխատողի կողմից ստեղծվող արդյունքը հինգ անգամ փոքր է զարգացած երկրների համանման ցուցանիշից: Հայաստանում միջին գյուղացիական տնտեսությունը տարեկան ապահովում է 4000 դոլարի արդյունք, ինչը հազիվ բավարարում է սեփական ապրուստը հոգալուն: Կառավարությունն ըստ էության որոշել է ոչ թե գյուղատնտեսության ռիսկայնությունը նվազեցնող և արտադրողականությունը բարձրացնող մեխանիզմներ ստեղծել, այլ գնալ կարճ ժամապարհով՝ սուբսիդավորելով բարձր տոկոսադրույքները և բանկերին պարտադրելով մտնել գյուղվարկավորման սեգմենտ:

Մանրածախ առևտրի շրջանառությունն այս տարի չնայած կայուն, բայց դանդաղ է աճել: Ընդհանուր առմամբ, մանրածախ առևտուրը երրորդ եռամսյակի վերջի դրությամբ

ԿԱՂԱՑՈՂ ԱՃ

աճել էր 2,8 տոկոսով՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: Սա հիմնականում պայմանավորված էր ինը ամիսներին սուպերմարկետների և խանութների պաշտոնական համախառն շրջանառության 65 տոկոս աճով: Մեծ սուպերմարկետների մասնաբաժինն ընդհանուր մանրածախ առևտրում կազմել է 52 տոկոս, իսկ միջին չափի խանութների շրջանառությունը նվազել է 22,4 տոկոսով:

Տարվա 10 ամիսների կտրվածքով խանութների և սուպերմարկետների ընդհանուր շրջանառությունը կազմել է 624 միլիարդ դրամ, ինչին նպաստել է նաև ՀԴՄ կտրոններով խաղարկությունների լայնածավալ քաղաքականությունը, որով Պետեկամուտների կոմիտեն նպատակ ուներ սովերային շրջանառությունից դուրս բերել մանր խանութներին: Թեև հնարավոր է՝ խաղարկություններն էապես նպաստել են սովերի կրճատմանը, բայցևայնպես շուկան մեծ մասամբ կենտրոնացված է, և այն վերահսկում են քաղաքականությանը սերտաձած խոշոր գործարարները:

Այս տարի **ծառայությունների** ոլորտում որոշ աճ է արձանագրվել: Հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում այն կազմել է 5,8 տոկոս: Չնայած վերջին տասնամյակում ծառայությունների ոլորտը կայուն աճել է, տնային տնտեսություններն իրենց ամսական ծախսումների 30 տոկոսից պակաս մասն են հատկացնում ծառայություններին (զարգացած երկրներում այդ ցուցանիշը կազմում է 70 տոկոս):

Ծառայությունների ոլորտում գործարքների շուրջ երկու երրորդը բաժին է ընկնում ֆինանսական հատվածին, տրանսպորտին, տեղեկատվական տեխնոլոգիաներին և հեռահաղորդակցությանը: Չնայած

դրան՝ նույնիսկ այս ճյուղերի ներուժն ամբողջությամբ օգտագործված չէ, իսկ արտադրողականության առումով դրանք էականորեն հետ են մնում զարգացած երկրներից: Օրինակ՝ Հայաստանում տեղեկատվական տեխնոլոգիաների միջին մասնագետը 3,2 անգամ քիչ արդյունք է ապահովում սինգապուրցի ծրագրավորողից և 2,8 անգամ քիչ՝ իսրայելցի ծրագրավորողից:

Արդյունաբերության ոլորտում աճին կրկին հիմնականում նպաստել են հանքարդյունաբերությունն ու դրան հարակից ճյուղերը:

Ընդհանուր առմամբ՝ **տեղեկատվական և հաղորդակցային տեխնոլոգիաները** Հայաստանի տնտեսության ամենաարագ զարգացող ոլորտներից են: Երկու տարվա ընթացքում՝ մինչև 2010 թվականի ավարտը, այս ոլորտի հասույթն աճել է 34 տոկոսով կազմելով 149 միլիոն դոլար: Ավելին, համեմատաբար էժան լայնաշերտ և անլար ինտերնետ ծառայությունների տարածման արդյունքում, որը մասամբ պայմանավորված էր շուկայում երրորդ բջջային օպերատորի մուտքով և գործունեությամբ, ինտերնետից օգտվողների թիվն էապես ավելացավ: 2010 թվականի արդյունքներով՝ լայնաշերտ ինտերնետից օգտվողների թիվը հասել էր 200 հազարի, իսկ անլար ինտերնետի բաժանորդներինը՝ 100 հազարի: Բջջային ցանցի ծածկույթը տարածվում է Հայաստանի 85 տոկոսի վրա և հասանելի է բնակչության 95 տոկոսին: Բնակչության ընդամենը երեք տոկոսն է օգտվում 3G ցանցից:

ԿԱՂԱՑՈՂ ԱՃ

Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության (ԱՊՊԱ) ինստիտուտի ներդրումը և որպես արդյունք՝ ապահովագրական շուկայի ընդլայնումը նպաստեց, որ ծառայությունների ոլորտում առավել արագ աճի ֆինանսական հատվածը:

Չնայած գյուղատնտեսությունը Հայաստանի տնտեսության ամենակարևոր ճյուղերից է, այն մնում է թերվարկավորված:

Զբոսաշրջությունը՝ Հայաստանի տնտեսության ամենախոստումնալից ճյուղերից մեկը, այս տարի շարունակել է արձանագրել երկնիշ աճ: 2011 թ. ինը ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ Հայաստան այցելող զբոսաշրջիկների թիվը մեծացել է 13,1 տոկոսով՝ հասնելով 552 հազարի: Ակնկալվում է, որ տարեվերջի արդյունքներով այդ թիվը կգերազանցի 800 հազարը: Ինը ամիսների կտրվածքով հյուրանոցներում իջևանած զբոսաշրջիկների թիվը գրեթե կրկնապատկվել է՝ նշանակալիորեն նպաստելով հյուրանոցային բիզնեսի աճին: Հյուրանոցային սենյակների թիվը նույնպես էապես մեծացել է՝ ինը ամիսների կտրվածքով աճելով 20 տոկոսով:

Ներգնա զբոսաշրջության ոլորտում ամենամեծ նպաստն ունեցել են եվրոպական երկրներից ժամանող զբոսաշրջիկները: Հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում եվրոպացի զբոսաշրջիկների թիվը

մեծացել է 2,4 անգամ, ինչի արդյունքում հյուրանոցներում հանգրվանած զբոսաշրջիկների թիվը հասել է 39,3 տոկոսի:

Հայաստան եկող զբոսաշրջիկները հիմնականում Ռուսաստանից (17 տոկոս), ԱՄՆ-ից (15 տոկոս), Իրանից (11 տոկոս) և Ֆրանսիայից (10 տոկոս) եկողներն են: Սփյուռքահայերի թիվն ընդհանուր զբոսաշրջային հոսքի մեջ գնահատվում է 60 տոկոս:

Զբոսաշրջիկների թվի ավելացումը, այնուամենայնիվ, չի նշանակում, որ համապատասխանաբար բարելավվել են նաև զբոսաշրջային ենթակառուցվածքները: Եթե երևանում կան ներգնա զբոսաշրջության համապատասխան ենթակառուցվածքները, մարզերը, բացառությամբ Ծաղկաձորի և մասամբ Ջերմուկի, զբոսաշրջության զարգացման ռազմավարություն և զբոսաշրջային անհրաժեշտ ծառայություններ չունեն: Սևանը և Դիլիջանը, օրինակ, դեռևս չունեն համալիր ծառայություններ ապահովելուն ուղղված զարգացման ծրագրեր: Միայն Սյունիքում է, որտեղ Տաթևի նորակառույց ձուպանուղու հարակից տարածքում աշխատանքներ են կատարվում զբոսաշրջության համալիր զարգացման ուղղությամբ:

Համաշխարհային տնտեսական ֆորումի 2011 թ. Զբոսաշրջության մրցունակության ինդեքսով՝ 139 երկրների շարքում Հայաստանը զբաղեցրել է 90-րդ հորիզոնականը՝ մեկ կետով բարձր նախորդ տարվանից: Հայաստանի հարևաններ Վրաստանը, Ադրբեջանը և Թուրքիան ավելի լավ դիրքեր են զբաղեցրել՝ համապատասխանաբար 73-րդ, 83-րդ և 50-րդ հորիզոնականները: Միայն Իրանն է, որ Հայաստանից վատ՝ 114-րդ դիրքում

ԿԱՂԱՑՈՂ ԱՃ

է: Թեև Հայաստանի ցուցանիշները որակյալ աշխատուժի առկայության, առողջապահության և սանիտարահիգիենիկ վիճակի մասով հարաբերականորեն բարձր են, զբոսաշրջային արդյունաբերությունը ավելի թույլ դիրքերում է, հատկապես շրջակա միջավայրի պահպանության, բնության զանազանության, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների, օդային և ցամաքային տրանսպորտի ենթակառուցվածքների մասով:

Ակնկալվում է, որ 2011 թ. զբոսաշրջության ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ-ում կկազմի 1,8 տոկոս (66,4 միլիարդ դրամ): Այդուամենայնիվ, չնայած այն հանգամանքին, որ կառավարությունը զբոսաշրջությունը գերակա ճյուղ է հայտարարել, 2011 թ. այս ոլորտին բյուջեից հատկացվել է ընդամենը 50 միլիոն դրամ կամ բյուջեի ընդհանուր ծախսերի 0,005 տոկոսը: Այս հատկացումների մասով՝ թե՛ բացարձակ թվերով, թե՛ երկրի կամ նրա բնակչության չափի համեմատությամբ, Հայաստանը աշխարհի երկրների ամենացածր հորիզոնականներում է:

Տարվա ինը ամիսների արդյունքներով **արտաքին առևտրաշրջանառությունն** աճել է 16,6 տոկոսով՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: Ինը ամիսներին արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը կազմել է 2 միլիարդ դոլար, ներմուծումը գերազանցել է արտահանմանը երեք անգամ:

Ռուսաստանը, չնայած մասնաբաժնի որոշ կրճատմանը, շարունակում է մնալ Հայաստանի գլխավոր առևտրային գործընկերը, որին բաժին է ընկնում Հայաստանի ընդհանուր արտաքին առևտրի հինգերորդ մասը: Տարվա առաջին ինը ամիսների կտրվածքով Եվրոպական

Միության հետ առևտրաշրջանառությունը աճել է և կազմել Հայաստանի ընդհանուր առևտրաշրջանառության 22,8 տոկոսը, և ակնկալվում է, որ տարեվերջին այդ ցուցանիշը կհասնի 33,6 տոկոսի: Առևտրաշրջանառության ծավալները մեծացել են նաև տարածաշրջանի երկրների հետ. Իրանի հետ ընդհանուր առևտրաշրջանառությունը կազմել է ընդհանուրի 6,3 տոկոսը, իսկ Թուրքիայի հետ՝ 4,3 տոկոսը:

Բանկերի՝ գյուղվարկեր հատկացնելու դժկամությունը մեծապես պայմանավորված է նաև ոլորտի անկանխատեսելիությամբ և իրականացվող քաղաքականության կարճաժամետ քնույթով:

Ուշագրավ է, որ այդքան մոտ հարևան Վրաստանին բաժին է ընկնում Հայաստանի ընդհանուր առևտրաշրջանառության ընդամենը 2,2 տոկոսը, մինչդեռ Չինաստանի հետ առևտրաշրջանառության մասնաբաժինը 7,3 տոկոս է՝ ավելի, քան որևէ անմիջական հարևանի հետ: ԱՄՆ-ի հետ առևտրաշրջանառությունը կազմել է ընդհանուրի 4,6 տոկոսը:

Հայաստանի առևտրային գործընկերներ են շարունակում մնալ ԱՊՀ երկրները, ինչպես նաև Իսրայելը, Բրազիլիան, Շվեյցարիան: 2011 թ., ինչպես և 2010 թ., արտահանման աճի տեմպը ներմուծման աճի տեմպից երեք անգամ մեծ է եղել: Մետաղների

ԿԱՂԱՑՈՂ ԱՃ

և հանքահումքի միջազգային գների բարձրացմամբ պայմանավորված՝ տարվա ինը ամիսներին Հայաստանից արտահանումն աճել է 33,5 տոկոսով: Չնայած արտահանման ծավալների մեծ աճին՝ արտաքին առևտրի կառուցվածքում փոփոխություններ գրեթե չեն եղել: Հիմնական արտահանումը բաժին է ընկնում հղկված ադամանդին, մետաղներին, հանքաքարին և խտահանք պղնձին, որոնք միասին վերցրած՝ ինը ամիսների կտրվածքով կազմել են ընդհանուր արտահանման ավելի քան 75 տոկոսը:

Ծառայությունների ոլորտում գործարքների շուրջ երկու երրորդը բաժին է ընկնում ֆինանսական հատվածին, տրանսպորտին, տեղեկատվական տեխնոլոգիաներին և հեռահաղորդակցությանը:

Ներմուծման կառուցվածքում հիմնական մասնաբաժինը պատկանում է էներգակիրներին, մեքենաշինական սարքավորումներին և տրանսպորտային միջոցներին: Այս բոլորը միասին կազմել են ընդհանուր ներմուծման 42 տոկոսը: Արտաքին առևտուրը ներկայում զգայուն է համաշխարհային թույլ պահանջարկի նկատմամբ, և Հայաստանը հատկապես կախված է Ռուսաստան կատարվող արտահանումից, որտեղ տնտեսական ընդհանուր պահանջարկը մեծապես կախված է նավթի գներից: Հայաստանի մյուս խոշոր առևտրային գործընկեր Եվրոպական

Միությունից եկող պահանջարկը ևս կարող է փոփոխվել ճգնաժամի դեպքում:

Այսպիսով, չնայած Հայաստանի արտաքին առևտրաշրջանառության տպավորիչ աճին, արտաքին առևտրի հաշվեկշռի պակասուրդի մեծացումը կարող է լուրջ բեռ և սպառնալիք դառնալ Հայաստանի տնտեսության համար: Ավելին՝ չդիվերսիֆիկացված, ցածր հավելյալ արժեք ունեցող հումքի արտահանումը երկիրը չափազանց խոցելի է դարձնում արտաքին շուկերի նկատմամբ:

2011 թ. Հայաստան կատարվող մասնավոր **դրամական փոխանցումներն** ավելացել են 15 տոկոսով: Դրանց երեք քառորդ մասը գալիս է Ռուսաստանից, և փոխանցումների աճը պայմանավորված է նավթի գներով, որոնք այդ երկրի տնտեսական աճի հիմնական խթանիչն են: Հայաստանի Կենտրոնական բանկի տվյալներով՝ նավթի միջազգային գների և Հայաստան կատարվող դրամական փոխանցումների միջև ուղղակի կապ կա: Ինչպես նախաձգնաժամային ժամանակաշրջանում, այժմ նույնպես մասնավոր փոխանցումների մեծ մասն ուղղվում է սպառողական ծախսերին, ոչ թե տնտեսությունում հավելյալ արժեք ստեղծող ձյուղերին: Մասնավոր փոխանցումները Հայաստանի տնտեսության վրա միայն անուղղակի ազդեցություն ունեն՝ պահանջարկի խթանման միջոցով:

Մասնավոր փոխանցումներով ուղեկցվող արտահանման աճը հանգեցրել է դրամի փոխարժեքի խոցելիությանը: Կենտրոնական բանկը, չնայած լողացող փոխարժեքի քաղաքականություն վարելու հանձնառությանը, ինտերվենցիաներ է կատարում փոխարժեքի շուկայում՝ կտրուկ տատանումները մեղմելու նպատակով: 2011 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում դրամը երկու տոկոսով արժեզրկվել է: Սեպ-

ԿԱՂԱՑՈՂ ԱՃ

տեմբերին դրամի միջին փոխարժեքը դոլարի նկատմամբ կազմել է 372,3: Ըստ էության դրամը բռնել է արժեզրկման ճանապարհը, և կանխատեսվում է, որ գալիք տարի ներկայիս պայմանների պահպանման դեպքում այն կշարունակի սահուն արժեզրկվել:

2011 թ. Կենտրոնական բանկն իր դրամավարկային քաղաքականությամբ փորձում էր զսպել գնաճը, որը տարեսկզբին հասել էր 10,3 տոկոսի: Տարվա ինը ամիսների ընթացքում Կենտրոնական բանկը վարում էր թանկ փողի քաղաքականություն՝ պարբերաբար բարձրացնելով վերաֆինանսավորման տոկոսադրույքը, որը 1,25 տոկոսից հասավ մինչև 8,5 տոկոսի: Բայցևայնպես գնաճի մակարդակն էսպես չէր իջնում. մայիսին այն դեռ 9 տոկոս էր: Միայն հուլիսին և օգոստոսին գնաճը սկսեց նահանջել՝ հիմնականում էժանացած գյուղմթերքի շնորհիվ: Փաստացի՝ առաջարկով պայմանավորված գնաճը զսպելու դրամավարկային գործիքներն անարդյունավետ դուրս եկան:

Կենտրոնական բանկի՝ գնաճը զսպելու կոշտ դրամավարկային քաղաքականությունը, որին ուղեկցում էր դրամի արժեզրկումը, մեծացրեց ռիսկերը **բանկային համակարգի** համար: Տարվա առաջին ինը ամիսների ընթացքում բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելում արտարժույթով վարկերի մասնաբաժինը աճեց 2,5 տոկոսային կետով՝ հասնելով 60 տոկոսի: Փաստորեն, Կենտրոնական բանկի քաղաքականությունը մի կողմից գործարարներին դրդում էր վարկեր վերցնել արտարժույթով, մյուս կողմից՝ արժեզրկվող դրամի պայմաններում վարկի աճող սպասարկման ամբողջ բեռն ընկնում էր նույն գործարարների ուսերին: Փողի թանկացման քաղաքականության ազդեցությունը ավանդների կառուցվածքի

վրա աննշան է եղել. արտարժույթային ավանդների տեսակարար կշիռն ընդհանուր պորտֆելում նվազել է ընդամենը 1 տոկոսային կետով՝ մինչև 68 տոկոս, որը նույնպես բավական մեծ ցուցանիշ է:

Հայաստան այցելող զբոսաշրջիկների թիվը մեծացել է 13,1 տոկոսով՝ հասնելով 552 հազարի:

Ակնկալվում է, որ 2011 թ. արդյունքներով հարկային եկամուտները կավելանան 20 տոկոսով, և **բյուջեի** պակասուրդը չի անցնի ՀՆԱ-ի 3,9 տոկոսից. 2010 թվականին պակասուրդը կազմել էր հինգ տոկոս, իսկ 2009 թ. հասել էր 7,6 տոկոսի: 2011 թ. բյուջեի պակասուրդի շուրջ կեսը՝ մոտ 150 միլիարդ դրամ, ֆինանսավորվելու է ներքին աղբյուրների հաշվին, իսկ մնացածը՝ արտաքին աղբյուրներից ստացված միջոցներից, ինչն իր հերթին ծանրացնում է արտաքին պարտքը: 2011 թ. արտաքին պետական պարտքը կհասնի 3,73 միլիարդ դոլարի՝ կազմելով ՀՆԱ-ի 35,5 տոկոսը:

2010 թվականին այդ ցուցանիշը 3,3 միլիարդ դոլար էր և կազմում էր ՀՆԱ-ի 35,2 տոկոսը: Երբ արտաքին աղբյուրներից ստացված ներկայիս վարկերի արտոնյալ ժամկետը անցնի, պարտքը սպասարկելը բյուջեի վրա ավելի կծանրանա: 2010 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պետական պարտքի վերադարձելիության միջին ժամկետը 11,4 տարի էր, ներքին պարտքինը՝ 3,9 տարի, արտաքին պարտքինը՝ 12,6 տարի:

ԿԱՂԱՑՈՂ ԱՃ

Միջազգային ֆինանսական ինստիտուտներից արտոնյալ պայմաններով վարկեր ներգրավելու աճող սահմանափակումները կառավարությանը ստիպում են ներքին և արտաքին աղբյուրներից միջոցները ներգրավել առևտրային պայմաններով: Այսպիսով՝ բարձր տոկոսադրույքով ներգրավվող վարկերից բխող ռիսկերը մեծանում են, հատկապես հաշվի առնելով, որ պետական պարտքի կառուցվածքում լողացող տոկոսադրույքներով արտաքին վարկերի տեսակարար կշիռը արդեն իսկ բավական մեծ է: 2009 թ. լողացող տոկոսադրույքներով վարկերի տոկոսադրույքը պետական պարտքի կառուցվածքում 24,8 տոկոս էր, 2011 թ.՝ 26,2 տոկոս:

Ներգնա գրուսաշրջության ոլորտում ամենամեծ նպաստն ունեցել են եվրոպական երկրներից ժամանող գրուսաշրջիկները:

Մինչև 2014 թ. լողացող տոկոսադրույքով վարկերի մասնաբաժինը արտաքին պետական պարտքում կարող է հասնել 32,6 տոկոսի: Ըստ Ֆինանսների նախարարության՝ եթե միջազգային տոկոսադրույքները բարձրանան թեկուզ 1 տոկոսով, Հայաստանի արտաքին պարտքի սպասարկումը կավելանա շուրջ 10 միլիոն դոլարով: Իսկ դոլարի նկատմամբ SDR-ի, եվրոյի, ճապոնական յենի փոխարժեքների 1 տոկոս շեղումը միջին հաշվով կառավարության արտաքին պարտքը կփոփոխի 23 միլիոն դոլարով:

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԿ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Հայաստանի սոցիալ-քաղաքական ներկա իրավիճակը մեծապես պայմանավորված է այն հանգամանքով, որ երկրորդ սերնդի բարեփոխումների իրականացումը հապաղում է: Հարկաբյուջետային և տնտեսության այլ կառուցվածքային վերափոխությունների համար քաղաքական կամք է հարկավոր՝ ընդունելու համապատասխան օրենսդրություն և հետևելու այդ օրենքների տառին ու ոգուն: Հարկաբյուջետային բարեփոխումների օրակարգում առաջնայինը, իհարկե, հարկային հավասարությունը, հարկերի հավաքումը և հարկային վարչարարությունն է: Կառուցվածքային մյուս բարեփոխումները կոչված են ստեղծել գործարար և մրցակցային արդար միջավայր:

Հայաստանում այդպիսի էական վերափոխումների իրավասություն ունեցողները նույն այն մարդիկ են, որոնք առավել շատ կարող են տուժել անհրաժեշտ այդ վերափոխումներից: Պետական պաշտոնյաները, որոնք պատասխանատու են բարեփոխումները կյանքի կոչելու համար, հենց նրանք են, ովքեր լինելու են բարեփոխումների օբյեկտը: Ազգային ժողովի պատգամավորներից սկսած՝ մինչև նախարարներ ու գերատեսչությունների ղեկավարներ: Փոփոխությունները կսպառնան կամ առնվազն կսահմանափակեն սերտաձած բիզնեսի և քաղաքական էլիտայի շահերը: Այդ սերտաձումը, որը թեև օրենքով հստակ արգելված է, արդեն կուռ ձևավորված տեսք ունի և փոփոխության հավերժական խոչընդոտն է:

2012 թ. խորհրդարանական և 2013 թ. նախագահական ընտրություններից առաջ օրակարգային պետք է լինի, որ

ԿԱՂԱՑՈՂ ԱՃ

Իշխանությունները վերացնեն տնտեսական աճն արգելակող կառուցվածքային այս խոչընդոտը, հրաժարվեն տնտեսական լծակներից և թույլ տան, որ փոքր ու միջին բիզնեսները զարգանան՝ դրանով իսկ բարելավելով երկրի տնտեսական և ընտրական մթնոլորտը:

Մյուս կողմից՝ տնտեսական լծակներից իշխանության հրաժարումը կնշանակի մենաշնորհների թուլացում, քաղաքականության հետ կապված բիզնես էլիտայի՝ ընտրությունների ֆինանսավորման և իշխանության վերարտադրման համար այդքան անհրաժեշտ եկամուտներից օգտվելու հնարավորության վերացում: Հարկային և մաքսային անօրինական առավելություններով և տնտեսության կոնկրետ ճյուղերի վերահսկողությամբ օժտված այս խմբերի ընդհանուր ինստիտուցիոնալ ուժն է երկրի տնտեսության կառուցվածքային արատի հիմքում:

Հարկային բարեփոխումների և հարկային հավասար վարչարարության մասին դատելու ամենակարևոր չափանիշն այն է, որ հարկային եկամուտներ-ՀՆԱ հարաբերակցությունը պետք է լինի 23-25 տոկոսի սահմաններում: Ֆինանսների նախարարության ծրագրով՝ այս տարի այդ հարաբերակցությունը կաճի 0,4 տոկոսով և կկազմի 17,27 տոկոս:

2011 թ. ինը ամիսների ընթացքում պետբյուջե մուտքագրված 485 միլիարդ դրամի հարկային եկամուտների ու պետական տուրքերի մոտ երեք քառորդը (352,8 միլիարդ դրամ) ապահովել են 1000 խոշոր հարկատուները: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ խոշոր հարկատուները 11 տոկոսով կամ 34,3 միլիարդ դրամով ավելի գումար են վճարել: Հարկահավաքման աճի մոտ 40 տոկոսն ամբողջովին պայմանավորված

է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի վճարած 13,7 միլիարդ դրամ ավել հարկերով:

Չնայած այն հանգամանքին, որ կառավարությունը զբոսաշրջությունը գերակա ճյուղ է հայտարարել, 2011 թ. այս ոլորտին բյուջեից հատկացվել է ընդամենը 50 միլիոն դրամ կամ բյուջեի ընդհանուր ծախսերի 0,005 տոկոսը:

Տարվա մեկ այլ ձեռքբերում էր «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» օրենքի կիրարկումը: Ըստ օրենքի՝ հարկատուները կարող են սահմանել հարկերի վճարման սեփական ժամանակացույցը: Անհատ ձեռնարկատերերը կարող են ազատվել հարկային տույժերից և տուգանքներից, եթե պարտավորվեն և ժամանակին վճարեն հարկերը: Կառավարությունը գնաց նման «հարկային ներման»՝ նպատակ ունենալով վերադարձնել մեծ քանակությամբ կուտակված չվճարված հարկերը, որոնք 2010 թ. հունվարի դրությամբ կազմում էին 200 միլիարդ դրամ: Այս գումարների կեսը փաստացի չվճարված հարկերն էին, մնացածը՝ տույժերն ու տուգանքները:

Չնայած հարկային ոլորտում ինստիտուցիոնալ բարեփոխումների՝ հարկային հիմքը

ԿԱՂԱՑՈՂ ԱՃ

հաշվարկելու կանոնները մնում են կամայական: Բարելավումներ են տեղի ունեցել արտահանման, ապրանքների ներմուծման հավաստագրերի շնորհման, շինարարական թույլտվությունների, ընկերությունների գրանցման և այլ ընթացակարգերի մասով:

Ուշագրավ է, որ այդքան մոտ հարևան Վրաստանին բաժին է ընկնում Հայաստանի ընդհանուր առևտրաշրջանառության ընդամենը 2,2 տոկոսը:

Որոշ քայլեր արվել են նաև **գործարար միջավայրի** բարելավման ուղղությամբ: Կառավարության գնահատականներով՝ շինարարական թույլտվություն ստանալու համար քայլերի քանակը 20-ից հասցվել է 7-ի, ինչը կնպաստի, որպեսզի նոր բիզնես սկսելու համար անհրաժեշտ օրերի քանակը 137-ից հասնի 27-ի:

2011 թ. նշանակալից փոփոխություններ են կատարվել նաև **տնտեսական մրցակցության** պաշտպանությունը կարգավորող օրենսդրությունում: Փոփոխություններով՝ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը անբարեխիղճ տնտեսավարողների նկատմամբ ավելի մեծ տուգանքներ կարող է նշանակել, քան նախկինում: Բայցևայնպես հանձնաժողովն իր գործողություններում անկաշկանդ չէ: Օրինակ, երբ սպառողական մի շարք ապրանքների գների բարձրացում հայտարարվում էր անարդար մրցակցության դրսևորում,

հանձնաժողովը չէր հրապարակում իր ուսումնասիրությունը շուկայական դիրքը չարաշահած տնտեսավարողների մասին: Անբարեխիղճ մրցակցության հետ կապված վեճերի մեծ մասը լուծվում է ավելի բարձր մակարդակներում:

Կենսաթոշակային կամավոր կուտակային համակարգը ծրագրվածին պես չներդրվեց 2011 թ.: Չնայած կառավարությունն ու Կենտրոնական բանկը հավանություն տվեցին անհրաժեշտ իրավական ակտերի մեծ մասին, նրանք կարծես չչտապեցին փաստաթղթաբանությունն ավարտին հասցնել, որպեսզի ընտրված օպերատորները գործունեություն սկսեն հայաստանյան շուկայում: Կամավոր կուտակային համակարգի ներդրման մեկնարկի հետաձգումը ռիսկեր է ստեղծում կենսաթոշակային ողջ համակարգի բարեփոխման ժամանակացույցի համար, որով ծրագրված է, որ մինչև 2014 թ. հունվարը (երբ կենսաթոշակային պարտադիր կուտակային համակարգը սկսի գործել) բոլոր խնդիրներն ու դժվարությունները պետք է հաղթահարված լինեն:

Այս տարի սկսեց գործել ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության **պարտադիր ապահովագրությունը**, որը, չնայած նախապես առկա հոռետեսությանը, աշխատեց բավական արդյունավետ՝ գրանցված 430 հազար ավտոտրանսպորտային միջոցների 85 տոկոսն ապահովագրվեց: Դեռ մի քանի տարի հարկավոր կլինի ինստիտուցիոնալ առումով գնահատելու ԱՊՊԱ համակարգի՝ նոր կանոններ, կանխատեսելիություն և քաղաքակիրթ ծառայություն ներդնելու նպատակի հաջողությունը, ինչը կարող է նպաստել պարտադիր բժշկական

ԿԱՂԱՑՈՂ ԱՃ

ապահովագրության ներդրմանը: ԱՊՊԱ ինստիտուտի ներդրմամբ կառավարությունը հույս ուներ խթանել ֆինանսական շուկայի աճը, սակայն այդ առումով առանձնապես առաջընթաց չի գրանցվել:

Այսպիսով, ֆինանսական շուկան մնում է թերզարգացած: Չնայած սպասումներին, որ ԱՊՊԱ պայմանագրերի կնքումը (և կենսաթոշակային կամավոր կուտակումները) պետք է ազդեր շուկայի զարգացմանը և ազգային դրամի գործիքներին, առնվազն առաջին տարում նման բան տեղի չունեցավ:

Ապահովագրական ընկերությունները եկամուտներն ավանդ դրեցին բանկերում, իսկ բանկերը սկսեցին ավելի ապահով և շահավետ ներդրումներ կատարել՝ նախընտրելով գնել պետական պարտատոմսեր (որոնց տոկոսադրույքը տատանվում է 11-13,6 տոկոսի սահմաններում), քան թե տրամադրել վարկեր, որոնք ավելի ռիսկային են համարվում: Ավելին, հայաստանյան ընկերությունները դադարեցին կորպորատիվ պարտատոմսեր թողարկել, որոնք կարող էին բանկային ներդրումների այլընտրանքը լինել և միաժամանակ նպաստել տնտեսական աճին:

ՅԵՌԱՆԿԱՐՆԵՐ

2012 թվականը համաշխարհային տնտեսության համար դժվար տարի է լինելու: Ներկայիս կանխատեսումներով՝ լավատեսական սցենարի դեպքում կլինի թույլ աճ, հոռետեսականի դեպքում՝ անկում: Տարեվերջին Արժույթի միջազգային հիմնադրամը և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը գալիք տարվա աճի իրենց կանխատեսումները վերանայեցին դեպի նվազում:

Հայաստանը հաջորդ տարի ծրագրում է ունենալ 4,2 տոկոս տնտեսական աճ, սակայն միջազգային կառույցներն ակնկալում են ավելի թույլ աճ՝ հաշվի առնելով համաշխարհային շուկայի զարգացումները: Այդ իրավիճակում Հայաստանի համար տնտեսական աճի նախանշված ցուցանիշին հասնելը չափազանց դժվար է լինելու:

Եթե միջազգային կառույցների կանխատեսումները ճիշտ դուրս գան, և համաշխարհային տնտեսական աճն սկսի դանդաղել, Հայաստանը կհայտնվի դժվարին իրավիճակում, քանի որ մակրոտնտեսական ցուցանիշներով նա այժմ շատ ավելի թույլ դիրքերում է, քան 2008 թվականի ճգնաժամի նախօրեին. պետական պարտքն էականորեն ավելացել է, բնակչության գնողունակությունը՝ նվազել, իսկ օտարերկրյա ուղղակի ներդրումները կրճատվել են:

Եվրոպական միությունը և Ռուսաստանը Հայաստանի առևտրային ամենախոշոր գործընկերներն են, և եթե հաջորդ անկումը սկսվի Եվրոպայից, ինչն անխուսափելիորեն կազդի նաև Ռուսաստանի վրա, Հայաստանն անմիջապես կկրի դրա ազդեցությունը:

2012 թվականի խորհրդարանական ընտրությունների, հատկապես դրանց հնարավոր արդյունքների նկատմամբ աննախադեպ մեծ հետաքրքրություն կա: Այս իրավիճակում մի կողմից կառավարությունը ստիպված կլինի ավելի մեծ ուշադրություն դարձնել տնտեսության հիմնախնդիրներին, մյուս կողմից՝ ներդրողներն ավելի զգուշավոր կլինեն:

Ընտրությունների նկատառումներից ելնելով՝ իշխանությունը կառուցվածքային լուրջ բարեփոխումներ չի ձեռնարկի, թեև

ԿԱՂԱՑՈՂ ԱՃ

քաղաքականություն-բիզնես սերտաճած համակարգը վաղուց արդեն կազմաքանդման կարիք ունի:

ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

Ինստիտուցիոնալ և կառուցվածքային բարեփոխումները պետք է լինեն իշխանությունների առաջնահերթ քաղաքական նպատակը: 2011 թվականին նշանակալի հաջողությունների բացակայությունը խոսում է այն մասին, որ տնտեսության առջև ծառայած հիմնախնդիրները հնարավոր չէ հաղթահարել առանց համակարգային փոփոխությունների: Հատկանշական է Արժույթի միջազգային հիմնադրամի տարեվերջյան հայտարարությունը, որտեղ այն աննախադեպ հրապարակային անհամաձայնություն էր հայտնում Հայաստանի իշխանությունների տնտեսական քաղաքականության վերաբերյալ և նշում, որ տնտեսությունում կառուցվածքային փոփոխություններ են անհրաժեշտ:

Կառավարության առաջնահերթ նպատակը պետք է լինի ոչ թե գնաճի զսպումը, այլ տնտեսական աճի խթանումը: Գնաճի զսպումը չպետք է դառնա ինքնանպատակ:

Ունենալով տարածաշրջանում հարկահավաքման ամենացածր ցուցանիշը՝ Հայաստանը պետք է ջանքեր գործադրի այդ ցուցանիշը բարելավելու ուղղությամբ: Հարկեր-ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշի կառավարության ծրագրած 0,4 տոկոս աճը բավարար չի կարելի համարել, և դա ակնհայտ վկայում է այն մասին, որ ստվերային տնտեսության

կրճատումը իշխանությունների համար առաջնահերթություն չէ:

2011 թվականի դրամի ուղղորդվող արժեզրկման քաղաքականությանը հետևելով՝ 2012-ին պետք է թույլ տալ, որ ազգային արժույթը գտնի իր իրական փոխարժեքային միջակայքը, ինչը, ըստ միջազգային կառույցների գնահատականների, կնշանակի լրացուցիչ 10-15 տոկոս արժեզրկում:

Թույլ դիվերսիֆիկացիան մնում է Հայաստանի տնտեսության ամենախոցելի կետը: Չնայած կառավարության խոստումներին, տնտեսությունը դիվերսիֆիկացնելու քայլերը բավարար չեն եղել: 2012 թվականին դա պետք է լինի առաջնային նպատակներից մեկը: Այնպիսի ոլորտներ, ինչպես, օրինակ, զբոսաշրջությունն է, կարիք ունեն պետական ավելի մեծ աջակցության, փոքր և միջին բիզնեսների ավելի լայն ներգրավվածության:

Հայաստանը պետք է կարողանա օգտվել Եվրոպական Միության հետ ասոցիացման համաձայնագրից և ստեղծի անհրաժեշտ իրավանորմատիվային դաշտը տնտեսական մրցակցությունն ու արդունավետությունը խթանելու հատկապես այն ոլորտներում, որտեղ երկիրը հարաբերական առավելություններ ունի, օրինակ՝ գյուղատնտեսության և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում:

Կառավարությունը պետք է վերահաստատի Կայուն զարգացման ծրագիրը վերանայելու իր հանձնառությունը, ինչի կարիքն ակնհայտորեն առաջացավ ձգնաժամի ժամանակ: Նոր փաստաթուղթ ունենալը կարևոր է, և այն պետք է

ԿԱՂԱՑՈՂ ԱՃ

արտահայտի ներկայիս իրողություններն ու կառավարության տեսլականը: Դա պետք է արագ արվի և տնտեսական քաղաքականության համար ծառայի որպես հիմնական ուղեցույց:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԸ ԹՎԵՐՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀՆԱ աժ՝ 4,6 տոկոս
 Գնաժ՝ 8,8 տոկոս

ՀՆԱ՝ \$10,2 մլրդ

ՀՆԱ մեկ շնչի հաշվով՝ \$3048 (գնողունա-կությանը կշռված՝ \$5395)

Բնակչու-թյուն՝ 3,3 մլն

Ղարաբաղի հարցում իշխանությունները չեն կարողանա Կազանում արված քայլերից ավելի հեռու գնալ: Հետևաբար առաջընթաց չի կարող ակնկալվել:

Հայաստանը ջանքեր կգործադրի 2009-ի տնտեսական կուրուստները վերականգնելու համար: Հաջողությունը կախված կլինի քաղաքական կամքից և լուրջ քաղաքական և տնտեսական բարեփոխումներ իրականացնելուց: Բայց հաշվի առնելով առաջիկա խորհրդարանական և նախագահական ընտրությունները, հավանաբար կգերակայեն քաղաքական շահերը և կդառնան տնտեսական զարգացման հիմնական ցուցիչը: Խորհրդարանական ընտրությունները հատկապես մրցակցային կլինեն՝ անկախ նրանից, թե համագործակցության ինչպիսի ձևաչափեր կամ կողմիցիաներ կկազմվեն: Եթե կողմիցիայի մեծությամբ երկրորդ կուսակցությունը՝ Բարգավաճ Հայաստանը, խորհրդարանական ընտրություններում հանդես գա առանձին և հաջողություն ունենա, խորհրդարանում նոր քաղաքական միջավայր կարող է ստեղծվել, որտեղ իշխող կուսակցությունը մենաշնորհի չի ունենա, իսկ քաղաքական համակարգում նոր հակակշիռներ կլինեն:

ԱՂԻԲԵՋԱՆ

ՀՆԱ աժ՝ 0,2 տոկոս
 Գնաժ՝ 9,3 տոկոս

ՀՆԱ՝ \$68,5 մլրդ

ՀՆԱ մեկ շնչի հաշվով՝ \$7510 (գնողունա-կությանը կշռված՝ \$10217)

Բնակչու-թյուն՝ 9,1 մլն

Ընտրություններ չեն սպասվում: Հարկադրված անդորրի ու կայունության իրավիճակը կշարունակվի՝ չնայած բարեփոխումների կոչերը Ռուսաստանում և Մերձավոր Արևելքում անխուսափելիորեն կանդրադառնան երկրի ներքին իրավիճակի վրա:

Ադրբեջանը կփորձի օգտագործել ՄԱԿ-ի անվտանգության խորհրդում ունեցած տեղը ղարաբաղյան հարցի վերաբերյալ ադրբեջանական տեսակետը տարածելու համար և գնալով հարձակողական կդառնա միջազգային կազմա-կերպություններում՝ բացառապես շեշտելով տարածքային ամբողջականության սկզբունքը:

ՎՐԱՍՏԱՆ

ՀՆԱ աժ՝ 5,5 տոկոս
 Գնաժ՝ 9,6 տոկոս

ՀՆԱ՝ \$13,8 մլրդ

ՀՆԱ մեկ շնչի հաշվով՝ \$3098 (գնողունա-կությանը կշռված՝ \$5430)

Բնակչու-թյուն՝ 4,5 մլն

2012-ին ներքաղաքական իրավիճակը լարված կլինի: Եթե նոր ասպարեզ եկած, քաղաքական հավակնություններ ունեցող Բիծինա Իվանիշվիլին կարողանա իր շուրջ համախմբել ընդդիմությանը, կարող են լուրջ մարտահրավերներ նետել նախագահ Սաակաշվիլիի իշխանությանը 2012-ի ընտրություններին:

Վրաստան-Ռուսաստան հարաբերությունները կմնան լարված: Վրաստանը կշարունակի ուշադրության կենտրոնում պահել ինտեգրումը ՆԱՏՕ-ին և Եվրոպական Միությանը, նպատակ ունենալով նոր նվաճումներ ունենալ հոկտեմբերի ընտրություններին ցուցադրելու համար: Գնալով շարունակվող բարեկամական երկխոսությանը Հայաստանի և Վրաստանի միջև, խորքային տարբերությունները կխորանան, կապված մասնավորապես անվտանգության դաշինքների անդամակցության և Ջավախքի սոցիալ-տնտեսական իրավիճակի հետ:

Չնայած երկու կողմերն էլ խոսում են երկու երկրների ավելի սերտ համագործակցության մասին, երկուսն էլ, տարբեր պատճառներով, շոշափելի քայլեր չեն կատարի համագործակցությունը սերտացնելու ուղղությամբ:

ՏԱՐԱԾԱՆԵՐԶԱՆԸ ԹՎԵՐՈՎ

ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՀՆԱ աճ՝ 4,3 տոկոս
 Գնաճ՝ 8,9 տոկոս
 ՀՆԱ՝ \$1884,9 մլրդ
 ՀՆԱ մեկ շնչի հաշվով՝ \$13236 (գնողունակությամբ կշռված՝ \$16687)
 Բնակչություն՝ 142,4 մլն

Տարեվերջի խորհրդարանական ընտրություններին մեծամասնություն ստանալու անկարողությունը իշխող «Եդինայա Ռոսիա» կուսակցության համար սառը ցնցուղ էր: Չնայած դա անմիջական վտանգ չէր Պուտինի ընտրությանը 2012-ի մարտին, իշխող վերնախավի վերարտադրությունը բեկող միտումը կշարունակվի և Պուտինի վրա՝ բարեփոխվելու իրական ճնշում կդառնա: Ինչպես կրականացնել ժողովրդավարական բարեփոխումներ, առանց քաղաքական իշխանությունը կորցնելու. սա է երկրներանքը: Իշխողների և ձայնը բարձրացնող միջին դասի ձեռքի տակ եղած մանկրելու աստիճանը, ընդհանուր առմամբ, կախված է լինելու միջազգային տնտեսական իրավիճակից և, հիմնականում, նավթի գնից:

2012-ին, ժողովրդավարացման այս աճող հանրային ակնկալիքների, Սիրիայում և Իրանում արագ զարգացող քաղաքական բարդությունների և ամերիկյան ընտրություններին նախորդող սրվող հռետորաբանության պատճառով, անխուսափելի է որոշակի լարումը ԱՄՆ-ի և Ռուսաստանի միջև, որը բնականաբար իր ազդեցությունը կունենա տարածաշրջանի վրա:

ԹՈՒՐԹԻԱ

ՀՆԱ աճ՝ 6,6 տոկոս
 Գնաճ՝ 6,0 տոկոս
 ՀՆԱ՝ \$763,1 մլրդ
 ՀՆԱ մեկ շնչի հաշվով՝ \$10576 (գնողունակությամբ կշռված՝ \$14616)
 Բնակչություն՝ 72,2 մլն

Եվրոյի գոտում 2012-ին ակնկալվող աճի դանդաղումը կազդի նաև Թուրքիայի բարձր տնտեսական աճի վրա: 2012-ին Թուրքիայի երկու ամենակարևոր քաղաքական խնդիրներն են լինելու աճող լարվածությունը քրդական հարցով և սահմանադրական փոփոխություն անցկացնելը: «Արդարություն և զարգացում» կուսակցությունը, երրորդ անգամ գտնվելով իշխանության ղեկի առաջ, առավելություն ունի ընդդիմության և բանակի դեմ իր երկարատև պայքարում, բայց նրա նոսրացող մեծամասնությունը նշանակում է, որ 1982 թվականի սահմանադրության բարեփոխումների ընթացքը կախված կլինի նրանց բանակցային հմտությունից: Կամ վարչապետը, օգտվելով իր ժողովրդականությունից, կարող է սահմանադրական փոփոխությունները դնել հանրաքվեի և հաղթանակ ակնկալել:

Քրդական փոքրամասնության հուսախաբությունը երբեմն արտահայտվում է բռնությամբ: Եվ քրդերին ու նրանց գաղափարական և նյութական աջակիցներին ճնշելու նպատակով օգտագործվում են թե՛ ռազմական և թե՛ իրավական միջոցները:

Թուրքիան կշարունակի իր ակտիվ ներգրավվածությունը տարածաշրջանում: Հարաբերությունները Եվրոպական Միության հետ չեն առաջանա և միգրացիոն լիովին կանգ առնեն, երբ Կիպրոսին անցնի ԵՄ նախագահությունը 2012-ի երկրորդ կեսին:

Հայաստանի հետ հարաբերություններում ևս ոչ մի շարժում չպետք է ակնկալվի, քանի որ առաջընթաց չի գրանցվի դարաբաղյան հարցում թե՛ բնակչությունների խորը փակուղու մեջ լինելու և թե՛ Հայաստանի առաջիկա խորհրդարանական և նախագահական ընտրությունների պատճառով:

ԻՐԱՆ

ՀՆԱ աճ՝ 2,5 տոկոս
 Գնաճ՝ 22,5 տոկոս
 ՀՆԱ՝ \$475,1 մլրդ
 ՀՆԱ մեկ շնչի հաշվով՝ \$6260 (գնողունակությամբ կշռված՝ \$12258)
 Բնակչություն՝ 75,9 մլն

Իրանի սոցիալ-տնտեսական խնդիրները և դրանցից բխող լարվածությունները կշարունակվեն: Կաճի նաև անջրպետը նախագահական թիմի և երկրի կրոնական ղեկավարության միջև: 2012 թվականի խորհրդարանական ընտրությունների ժամանակ տարբեր ֆրակցիաներ կսկսեն իշխանություն պահանջել և ի հայտ կգան նախագահ Ահմադինեժադին փոխարինել ցանկացող թեկնածուներ:

Կաճեն միջազգային ճնշումները միջուկային խնդիրների հետ կապված: Եթե անգամ ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդը որոշում չընդունի, Եվրոպական Միությունը, ԱՄՆ-ը և այլ առանձին պետություններ կարող են սանկցիաներ դնել Իրանի վրա, որն անխուսափելիորեն ազդեցություն կունենա Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի վրա: Ինչ էլ լինի, Հայաստան-Իրան քաղաքական հարաբերությունները կմնան բարեկամական, որն իհարկե չի նշանակում, որ տնտեսական նշանակության Հայաստան-Իրան ծրագրերից որևէ մեկը առաջ կշարժվի: Զարգացումները Սիրիայում կանդրադառնան Իրանի տարածաշրջանային ազդեցության վրա:

*Բոլոր ցուցիչները մոտավոր հաշվարկներ են 2011-ի համար: Աղբյուր՝ Արժույթի միջազգային հիմնադրամ

